

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՅԿ ԱՐՄԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ <<ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

**Ը 00.02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման համար**

**ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ՌՈՒԲԵՆ ԱՐՄԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>3</b>
<b>ԳԼՈՒԽ 1. ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ</b>	
1.1. Հանրային և մասնավոր գործընկերության էությունը և նշանակությունը .....	8
1.2. Հանրային և մասնավոր գործընկերության կառուցակարգերը և եղանակները .....	23
1.3. Հանրային և մասնավոր գործընկերության համաշխարհային փորձը .....	33
<b>ԳԼՈՒԽ 2. &lt;&lt;ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	
2.1. << տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և դրանց իրագործման հիմնախնդիրները.....	50
2.2. Հանրային և մասնավոր գործընկերության դրսնորումները << տեղական ինքնակառավարման համակարգում.....	65
2.3. Հանրային և մասնավոր գործընկերության օրենսդրանորմատիվային կարգավորման կառուցակարգերը <<-ում .....	83
<b>ԳԼՈՒԽ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ &lt;&lt;ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ</b>	
3.1. << համայնքներում հանրային և մասնավոր գործընկերության նախագծերի արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումները.....	93
3.2. Հանրային և մասնավոր գործընկերության կատարելագործումը և դերը << տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների գործում 125	
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>	<b>152</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>	<b>156</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....</b>	<b>166</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Ժամանակակից տնտեսության պայմաններում հանրային նշանակության ենթակառուցվածքային նախագծերի հաջող կենսագործման համար անհրաժեշտ է հանրային մարմինների և մասնավոր գործարարության ուժերի ու շահերի համախմբում՝ համագործակցության շրջանակներում առավելագույն արդյունքի հասնելու համար։ Հանրային-մասնավոր գործընկերությունը Հայաստանի տնտեսության զարգացման ներկա փուլում փոխգործակցության առավել արդյունավետ և բազմաբնույթ կառուցակարգ է։ Պետական և համայնքային մակարդակներում հանրային-մասնավոր գործընկերության կիրառման վերլուծությունը վկայում է, որ դրա ճիշտ ձևավորումը և գործադրման ձևի օպտիմալ ընտրությունը չափազանց շահավետ են թե՝ պետության, թե՝ մասնավոր հատվածի և թե՝, ինչն առավել կարևոր է, հասարակության համար։

Այսօր առկա տնտեսական և տարածքային զարգացման անհամաշափությունները Հայաստանի տնտեսությանը թույլ չեն տալիս արդյունավետ օգտագործել տնտեսական համակարգի ինքնակարգավորման շուկայական մեխանիզմները՝ որպես համայնքներում ներդրումային գրավչության բարելավման հիմք։

Պետությունը շատ ավելին կաներ առկա բյուջեի, իրավական, մարդկային և այլ ռեսուրսներով՝ վերահսկելով ենթակառուցվածքային օբյեկտների ոլորտները, հանրային և պետական բնույթի ծառայությունների մատուցումը, վերափոխելով իրական ռեսուրսները՝ տարածքային զարգացման ներդրումային կառուցակարգի հանրային խնդիրների լուծման նպատակով՝ մասնավոր հատվածի կապիտալի ներգրավման և նախագծերի կառավարմանը մասնակցելու հաշվին։ Պետական մարմինների կողմից հանրային-մասնավոր գործընկերության սկզբունքների հետևողական իրագործումը, որպես ներդրումային միջավայրի բարելավման պայման, կիրանի տարածաշրջանի տնտեսություն մասնավոր ներդրումների հոսքը։

Այսպիսով՝ տեղական ինքնակառավարման մակարդակում արդյունավետ սոցիալ-տնտեսական զարգացումը հնարավոր է միայն տեղական ինքնակառավարման, բնակչության և մասնավոր բիզնեսի՝ որպես հավասար գործընկերների ջանքերի համա-

խմբման դեպքում: Դրանով էլ բացատրվում է համայնքային-մասնավոր գործընկերության նախագծերի կիրառման արդիականությունը:

Վերը շարադրվածը հիմնավորում է հետազոտության անհրաժեշտությունը և արդիականությունը, որի նպատակներից են գլոբալ մրցակցության պայմաններում տարածաշրջանի տնտեսության զարգացման համար հանրային-մասնավոր գործընկերության սկզբունքով իշխանությունների և մասնավոր հատվածի գործընկերային հարաբերությունների մեխանիզմների բարելավումը, կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի միջև համակարգված համագործակցության ապահովումը:

Ներկայում հրատապ է այս ոլորտում հետևյալ տեսամեթոդաբանական խնդիրների լուծումը.

- Համապատասխան կառուցակարգերն ուսումնասիրող գիտական ուսումնասիրություններում անբավարար են ներկայացված համայնքային մակարդակի ՀՄԳ-ները՝ որպես սոցիալ-տնտեսական զարգացման տարածաշրջանային ռազմավարության իրականացման կարևոր գործիք:
- Մշակված չեն համայնքային տնտեսությունում ՀՄԳ կիրառման տարածական պայմանների ազդեցության հետազոտման մեթոդաբանական մոտեցումներ:
- Համայնքային տնտեսության կառավարման տեսանկյունից բավարար չափով ուսումնասիրված և մշակված չէ ՀՄԳ դերը՝ որպես տարածաշրջանային քաղաքականության ներդրումային գործիք:
- Չկան համայնքների մակարդակում ՀՄԳ զարգացումը կառավարող տեսամեթոդաբանական կառուցակարգեր:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է համայնքային մակարդակում հանրային-մասնավոր գործընկերության կառուցակարգերի կատարելագործմանն ուղղված տեսական մոտեցումների և գործնական առաջարկությունների գիտական հիմնավորումը:

**Հետազոտության իրագործման նպատակով առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.**

- ընդհանրացվել և լրացվել են հանրային-մասնավոր գործընկերության բնորոշումները, որոնք տարբերակում են այն պետության և մասնավոր հատվածի համա-

գործակցության այլ ձևերից՝ հայրենական և օտարերկրյա գիտամեթոդական և նորմատիվահրավական աղբյուրների, այդ ոլորտում առկա համաշխարհային փորձի վերլուծության հիման վրա,

- բացահայտվել են հանրային-մասնավոր գործընկերության ինստիտուցիոնալ ձևերի առավելություններն ու թերությունները գործընկերության մասնակիցների համար,
- ուսումնասիրվել են << տեղական ինքնակառավարման համակարգի օրենսդրանորմատիվային հիմքերը և բացահայտվել տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող ներկայիս բարեփոխումների հնարավոր ազդեցությունները համայնքային-մասնավոր գործընկերության նախագծերի իրականացման վրա,
- բացահայտվել են << համայնքներում ներդրումների ներգրավման խոչընդոտները և առաջարկվել դրանց հաղթահարման ուղիներ,
- ձևակերպվել են համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի բարելավմանն ուղղված առաջարկներ գործող նորմատիվահրավական փաստաթղթերի առանձնահատկությունների հիման վրա և մշակվել հանրային-մասնավոր գործընկերության ներուժի իրացմամբ համայնքի ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման առաջարկություններ,
- մշակվել է հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի գնահատման ընդհանուր մեթոդաբանություն:

### **<Եփազուրության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:**

Ուսումնասիրության օբյեկտը << համայնքներն են, տեղական ինքնակառավարման համակարգը և մասնավոր հատվածի հետ գործընկերային հարաբերությունները:

Ուսումնասիրության առարկան << տեղական ինքնակառավարման համակարգում հանրային-մասնավոր գործընկերության կառուցակարգերի ձևավորման և զարգացման ուղղությունները և դրանց կազմակերպչական, տնտեսական հարաբերությունների ամբողջությունն է:

### **<Եփազուրության դեսական, դեղեկադիվական և մեթոդաբանական հիմքերը:**

Հետազոտության համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հանրային-մասնավոր գործընկերության ոլորտն ուսումնասիրող հայրենական և

օտարերկրյա գիտնականների աշխատությունները, գիտական հրապարակումները, աշխատանքային փաստաթղթերը, վերլուծությունները, ՀՀ-ում այդ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը և նորմատիվային ակտերը:

Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվել է հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականության աղբյուրներից, հանրային-մասնավոր գործընկերային հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրահրավական ակտերից, ոլորտին առնչվող պետական կառավարման մարմինների և Համաշխարհային բանկի պաշտոնական տեղեկագրերից, համացանցային աղբյուրներից: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, կառուցվածքային և համակարգային վերլուծության մի շարք մեթոդներ:

### **Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:**

Հետազոտության արդյունքներն իրենց բնույթով ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

1) ՀՀ-ում առաջին անգամ ինստիտուցիոնալ մակարդակում բացահայտվել են հանրային-մասնավոր գործընկերության առավելությունները և թերությունները, ինչպես նաև պետական մակարդակով և համայնքային մակարդակով իրականացվող ՀՄԳ նախագծերի առանձնահատկությունները և տարբերությունները, ինչի արդյունքում ատենախոսի կողմից տրվել է նաև համայնքային-մասնավոր գործընկերության սահմանում:

2) Համաշխարհային փորձի ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի գնահատման մեթոդաբանական սկզբունքներ ՀՀ-ում իրականացվող ՀՄԳ նախագծերի համար:

3) Առաջարկվել է համայնքների մակարդակում հանրային-մասնավոր գործընկերության զարգացման կառուցակարգ, որը տնտեսակազմակերպական մեթոդների և գործիքների կիրառմամբ զարգացման ռազմավարական ուղղությունների հանրագումար է՝ ուղղված հանրային ենթակառուցվածքների զարգացմանը և պլանավորման արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

### **Հետազոտության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:**

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունն այն է, որ հիմնական գիտական եզրահանգումները հանրային-մասնավոր գործընկերության ձևերի և կառու-

ցակարգերի հետագա հետազոտությունների հիմք կարող են դառնալ ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում:

Ատենախոսության հիմնական եզրակացությունները կարող են կիրառվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային-մասնավոր գործընկերության օգտագործմամբ տարածաշրջանային տնտեսության զարգացման մեթոդական հիմքերը մշակելիս, իսկ բիզնես գործընկերները հնարավորություն կունենան բացահայտելու հանրային-մասնավոր գործընկերության նախագծերին մասնակցության մրցակցային առավելությունները:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կազմակերպված 25-րդ գիտաժողովում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական վեց հոդվածներում:

**Այլենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 165 էջում՝ ներառյալ գրականության ցանկը: Աշխատանքում առկա են 11 գծապատկեր և 18 աղյուսակ:

## ԳԼՈՒԽ 1

### ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

#### 1.1. Հանրային և մասնավոր գործընկերության էությունը և նշանակությունը

Վերջին տարիներին զարգացած շուկայական և անցումային տնտեսությամբ աշխարհի շատ երկրներում ձևավորվում է տնտեսության նոր ինստիտուցիոնալ կառուցակարգ, պետության և մասնավոր հատվածի միջև տնտեսական հարաբերությունների համակարգում զգայի փոփոխություններ են կատարվում ազատական տնտեսական զարգացման ուսմունքի համատեքստում: Այդ փոփոխություններն ընդգրկում են պետության տնտեսավարող սուբյեկտների կենսագործունեության բոլոր ոլորտները և մակարդակները, ներառյալ մասնավոր հատվածի հետ հարաբերությունները: Միաժամանակ, աշխարհի գրեթե բոլոր երկրներում առկա է մի շարք ոլորտների, մասնավորապես՝ արտադրության և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման անհամապատասխանություն տնտեսության և հասարակության ժամանակակից պահանջներին: Այս համատեքստում հանրային և մասնավոր գործընկերությունն իր բոլոր դրսևորումներով լայն տարածում է գտնում աշխարհում՝ որպես հանրային աշխատանքների կազմակերպման համար նոր ենթակառուցվածքների ստեղծման, հանրային ծառայությունների մատուցման գործիք:

Ըստ Արիստոտելի՝ պետության նպատակն է «համատեղ ընթացքը դեպի կյանքի որակի բարելավում»: «Պետությունն այս ճանապարհին՝ որոշ խնդիրների լուծման նպատակով կարող է համագործակցել տնտեսվարող սուբյեկտների հետ: Հանրային և մասնավոր գործընկերությունը մերօրյա հայտնագործություն չէ, չնայած այն ներկայացվում է վերջին տասնամյակների միջազգային և ազգային մակարդակների նորույթ, սակայն իրականում ենթակառուցվածքներ ստեղծելու, ապահովելու և կառավարելու հանրային և մասնավոր հատվածների փոխգործակցությունը ունի երկարամյա ավանդույթ աշխարհի շատ երկրներում: Կոնցեսիոն սկզբունքով առաջին ջրանցքը կառուցվել է

Ֆրանսիայում 1552 թ.<sup>1</sup>: Բրագիլիայի, Իտալիայի, Մեքսիկայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և մի շարք այլ երկրների հանրային-մասնավոր գործընկերության (այսուհետ՝ ՀՄԳ) պատմությունը հաշվարկվում է մի քանի հարյուրամյակ: ՀՄԳ-ն կոնցեսիոն սկզբունքով լայն տարածում ուներ նաև XIX-XX դարերի ընթացքում բազմաթիվ երկրներում երկաթուղիների կառուցման ժամանակ:

ՀՄԳ զարգացումը որոշվում է մի շարք հիմնական գործոններով, որոնք ազդում են պետության և գործարարության փոխգործակցության ձևերի ընդլայնման վրա:

Նախ՝ ՀՄԳ խառը տնտեսության մեխանիզմներից է, որը թույլ է տալիս զարգանել գործարարության և հանրության փոխհարաբերությունները:

Երկրորդ՝ ՀՄԳ հնարավորություն է տալիս մասնավոր հատվածի ռեսուրսները ներգրավելու այն ոլորտների և ճյուղերի վերարտադրման գործընթացներում, որոնք պետության և տեղական ինքնակառավարման մարմինների սեփականություն են, ինչպես նաև, մասնավոր ձեռնարկատիրական նախաձեռնությունն օգտագործել բյուջեի ծախսերի արդյունավետությունը բարելավելու համար:

Երրորդ՝ պետության ու գործարարության շանքերի և ռեսուրսների միավորումը մրցակցային նախագծերի շրջանակներում ձևավորում են լրացուցիչ մրցակցային առավելություններ: Գործարարությունը, պետական ինստիտուտների համեմատ, ունի առավել մեծ շարժունություն, որոշումների կայացման արագություն, նորարարությունների կարողություն, տեխնիկական և տեխնոլոգիական կատարելագործման ցանկություն մրցունակություն ապահովելու համար: Կառավարությունը, իր հերթին, կարող է ապահովել ՀՄԳ նախագծերի ավելի արդյունավետ իրականացում ստեղծելով կայուն իրավական դաշտ, իրականացնելով կազմակերպական միջոցառումներ, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության հետ համագործակցություն, կիրառելով ֆինանսատնտեսական գործիքներ՝ դրամաշնորհներ, երաշխիքներ, հարկային արտոնություններ և այլ տեսակի աջակցություն:

Հաշվի առնելով այս գործոնները, ընդհանուր առմամբ կարելի է կանխատեսել հանրային և մասնավոր գործընկերության ձևերի աճի տեմպերը, զարգացումն ու բազմատեսակացումը: Սակայն յուրաքանչյուր երկրում այս գործընթացի դինամիկան կախ-

<sup>1</sup> Нижегородцев М. и др., Государственно-частное партнерство в инновационной сфере: мировой опыт и перспективы России, Кемерово: ООО «Сибирская издательская групп», 2012, с. 8.

ված է պետության քաղաքականությունից, տնտեսական և սոցիալական կոնսենսուսի որոնման վրա հիմնված գործարարության հետ համագործակցելու ցանկությունից, քաղաքացիական հասարակության դիրքորոշումից:

Հանրային և մասնավոր գործընկերությունն աշխարհում ընկալվում է երկակի՝ նախ, ինչպես պետության և գործարարության հարաբերությունների համակարգ, որը լայնորեն կիրառվում է որպես գործիք ազգային, միջազգային, տարածաշրջանային, քաղաքային տնտեսության և սոցիալական զարգացման համար: Երկրորդ, պետական և հանրային սեփականության օբյեկտներում՝ որպես պետական կառավարման մարմինների և մասնավոր ընկերությունների համատեղ իրականացվող նախագծեր:

«Հանրային-մասնավոր գործընկերություն» եզրույթը անգլերեն «public-private partnership» թարգմանությունն է: Ընդ որում, որոշ աղբյուրներում «public» թարգմանվում է որպես պետություն, որն ամբողջությամբ չի արտահայտում այդ հասկացության էությունը: Հանրային (լատ. *publicus* - հասարակական) հասկացությունը նշանակում է բաց, հրապարակային, հասարակության, հանդիսատեսի ներկայությամբ տեղի ունեցող, այլ իմաստով՝ հասարակական, հասարակության տիրապետության տակ գտնվող, ոչ մասնավոր: Այս համատեքստում հանրայինը բնորոշվում է նաև որպես «հասարակական բարիքի ձեռքբերմանն ուղղված»<sup>2</sup>:

Հայերենը թույլ է տալիս տարանջատել «public» բառի հանրային և հրապարակային իմաստները: Հայերենի բացատրական բառարաններում «հանրային» բառը բացատրվում է որպես «ամբողջ հասարակությանը, բոլորին՝ ընդհանուրին պատկանող»<sup>3</sup>, «հրապարակայինը»՝ «բոլորի ներկայությամբ, բաց»<sup>4</sup>: Այնուամենայնիվ, «public» եզրույթն այստեղ ունի ավելի ընդգրկուն իմաստ, քան պարզապես մի շարք հաստատությունների համախումբ, որն իրականացնում է պետական գործառույթներ: Առավել լայն տարածում ունի այն մոտեցումը, երբ հանրային կառավարումը ներկայացվում է որպես պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման ամբողջություն: Այն հանդիսանում է հանրային իշխանության ընդհանրական սուբյեկտ, ներառելով կառավա-

<sup>2</sup> Чаннов С.Е., Административно-правовая модель регулирования служебных отношений в Российской Федерации: понятие и основные черты: автореф. дис. ... д-ра юрид. наук. Саратов, 2010, с. 4.

<sup>3</sup> Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Եր., 1976, հատոր 1, էջ 822:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 905:

բոլոր մակարդակները՝ դաշնային (ազգային), տարածաշրջանային և քաղաքային: Հանրային կառավարման էության նման մեկնաբանությունը անհիմն չէ, սակայն թերի է: Այդ հասկացությունն իր բովանդակությամբ ավելի լայն ու տարողունակ է, քան պետական կառավարումը և, որպես երևույթ, հանրային կառավարումը իմանականում բնորոշ է քաղաքացիական հասարակությանը, որի պայմաններում պետական կառավարումը էվոլյուցիոն զարգացման շնորհիվ վերաճել է հանրային կառավարման: Հարկ է ընդգծել, որ պետական կառավարումը և հանրային կառավարումը ոչ միայն տարբերվում են իշխանության մարմինների կազմով, այլև, որ շատ էական է՝ դրանց ձևավորման սկզբունքներով ու հանրային կառավարման ժողովրդավարական էությամբ<sup>5</sup>:

«Public» ենթադրվում է պետական ինստիտուտների ամբողջություն, որն ունի կառավարման լիազորություններ, ինչպես նաև հաճախ իրականացնում է ոչ ֆորմալ, բայց հասարակական գործնթացների զարգացմանն ուղղված կարևոր գործառույթներ: Ներառում է նաև մշակութային, կրթական, գիտական և հանրային հատվածի այլ հաստատություններ:

Հանրային-մասնավոր գործնկերության առարկա է հանդիսանում պետական և համայնքային սեփականությունը, ինչպես նաև պետության, համայնքի կառավարման մարմինների և բյուջետային կազմակերպությունների կողմից մարդու ծառայությունները<sup>6</sup>:

Շրջանառվում է ՀՄԳ հասկացության մեկնաբանման երկու մոտեցում. առաջին մոտեցման համաձայն ՀՄԳ-ն դիտվում է որպես անուղղակի մասնավորեցում<sup>7</sup>: Այս մոտեցումը հաշվի է առնում մասնավոր ընկերությունների մասնակցությունը սեփականության այն իրավասությունների իրագործմանը, որոնք նախագծի շրջանակում պետության կողմից փոխանցվում են իրեն: Առավել կարևոր է պետության և հանրության կողմից մասնավորեցման գործնթացներում ՀՄԳ դերի և նշանակության ճիշտ ըմբռնումը:

Որոշ փորձագետներ գտնում են, որ ՀՄԳ-ն պարզապես մասնավորեցման տեսակ է: Այսպես՝ «Հանրային և մասնավոր գործնկերություն. հանրային բարեկեցության ֆի-

<sup>5</sup> Մենեջմենթ, <<ԳԱԱ թղթակից անդամ Յու.Մ. Սովարյանի ընդհանուր խմբագրությամբ (Երրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն), Եր., Տնտեսագետ, 2016, էջ 281:

<sup>6</sup> Варнавский В. Г., Клименко А. В., Королев В. А. и др., Государственно-частное партнерство: теория и практика, Высшая школа экономики. М., 2010, с. 13.

<sup>7</sup> Public-Private Partnerships: Financing a Common Wealth. Wash., 1985, p. 67.

նանսավորումը» ամերիկյան ուսումնասիրությունում ասվում է, որ ենթակառուցվածքների ֆինանսավորման այլնտրանքային աղբյուրներից մեկը կարող է հանդիսանալ «սեփականաշնորհումը, այսինքն՝ տարաբնույթ համաձայնությունների կնքումը, որոնց հիման վրա զգալիորեն աճում է մասնավոր ընկերությունների մասնակցությունը պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների ֆինանսավորմանը, նախագծմանը, շինարարությանը, տիրապետմանն ու շահագործմանը»<sup>8</sup>:

Ըստ երկրորդ մոտեցման գործընկերությունները գտնվում են մասնավոր և պետական հատվածների սահմանին, լինելով ոչ մասնավորեցված, ոչ էլ ազգայնացված ինստիտուտներ: Ընդ որում, ի տարբերություն մասնավորեցման՝ որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական սեփականության հատուցելի փոխանցման ձևի, գործընկերություններում սեփականության իրավունքը պատկանում է պետությանը<sup>9</sup>: Այս առումով պետությունը և մասնավոր ընկերությունը երբեք համահավասար չեն լինի, քանի որ ՀՄԳ նախագծերում հիմնարար գույքային հարաբերությունները չեն փոխվում, որքան էլ մեծ լինի մասնավոր հատվածի՝ որպես ներդրողի, մենեջերի կամ օպերատորի դերը:

Կան ՀՄԳ տարբեր սահմանումներ: Դրանցից ամենատարածվածը Համաշխարհային բանկի բնորոշումն է. «ՀՄԳ-ն համաձայնություն է հանրային և մասնավոր կողմերի միջև արտադրության և ենթակառուցվածքային ծառայությունների մատուցման նպատակով, լրացնուիչ ներդրումներ ներգրավելու և, ինչն ավելի կարևոր է, որպես բյուջեի ֆինանսավորման արդյունավետությունը բարելավելու միջոց»<sup>10</sup>:

Տարբեր երկրներ ունեն հանրային-մասնավոր գործընկերության իրենց սեփական սահմանումը.

<sup>8</sup> Public/Private Partnerships: Financing a Common Wealth / ed. by B. Weiss. Washington, 1985, p. 67.

<sup>9</sup> Gerrard M., What Are Public-Private Partnerships, and How Do They Differ from Privatizations? Finance and Development. 2001, vol. 38, No 3, p. 35.

<sup>10</sup> Delmon J., Private Sector Investment in Infrastructure: Project Finance, PPP Projects and Risk. The World Bank and Kluwer Law International. 2009, p. 7.

## Տարբեր երկրներում ՀՄԳ մեկնաբանությունները

<b>Երկիր</b>	<b>Սահմանում</b>
ԱՄՆ	Պետության և մասնավոր ընկերության միջև ամրագրված պայմանագիր է, որը հնարավորություն է տալիս վերջինիս ըստ համաձայնության մասնակցելու պետական սեփականությանը և իրականացնելու գործառույթներ, որոնք ավանդաբար գտնվել են պետական մարմինների պատասխանատվության ոլորտում: Հիմնական գույքային իրավունքները չեն փոխվում, և պետությունը օբյեկտը մասնավոր ընկերությանը փոխանցելուց հետո մնում է դրա սեփականատեղը <sup>11</sup> :
Եվրամիության երկրներ	Հանրային մարմինների և գործարարների միջև համագործակցության ձև է, որի նպատակն է ֆինանսավորման, ենթակառուցվածքների շինարարության, արդիականացման, կառավարման, շահագործման կամ ծառայությունների մատուցման ապահովումը <sup>12</sup> :
Մեծ Բրիտանիա	Ժամանակակից որակյալ ծառայություններ մատուցելու և երկրի մրցունակությունը բարձրացնելու կառավարության ռազմավարության առանցքային տարր է, որն ունի բիզնես կառուցների լայն շրջանակ և գործընկերության ձևեր (մասնավոր նախաձեռնություն, պետական սեփականություն հանդիսացող առևտրային գործունեություն իրականացնող ձեռնարկությունների որոշ բաժնետոմսերի վաճառքը) <sup>13</sup> :
Իռլանդիա	Համագործակցություն է հանրային և մասնավոր հատվածների միջև որոշակի ծրագիր իրականացնելու կամ հանրային ծառայություններ մատուցելու նպատակով, որոնց իրականացումը ավանդաբար պետության պատասխանատվության ոլորտում է <sup>14</sup> :
Ռուսաստան	Հանրային-մասնավոր գործընկերությունը տնտեսական նախագծերի իրականացման շրջանակներում կառավարության և գործարարության հավասարության և շահերի համակարգման իրավական մեխանիզմ է պետական կառավարման նպատակներին հասնելու համար <sup>15</sup> :
Հայաստան	Հանրային կողմի և մասնավոր գործընկերոց միջև համագործակցություն է, որն ուղղված է ենթակառուցվածքների ֆինանսավորմանը, կառուցմանը, վերանորոգմանը, կառավարմանը, պահպանմանը, շահագործումից դուրսբերմանը, դրանց միջոցով երկարաժամկետ ծառայությունների մատուցմանը (ՊՄԳ-ն պետք է ներառի նշված գործողություններից առնվազն երկուսը) թափանցիկության, մրցակցության, համագործակցության երկարատևության սկզբունքների հիման վրա <sup>16</sup> :

<sup>11</sup> Report to Congress on Public-Private Partnerships. US Department of Transportation, 2004.

<sup>12</sup> Green Paper on Public-Private Partnerships and Community Law on Public Contracts and Concessions Commission of the European Communities Brussels, 2003.

<sup>13</sup> Public-Private Partnership for Innovation Policy Rationale, Trends and Issues Organization for Economic Cooperation and Development, 2003.

<sup>14</sup> Государственно-частное партнерство – новая форма взаимодействия государственного и частного секторов в финансировании инфраструктурных и социальных проектов. Материалы семинара. М., Посольство Великобритании, 2003.

<sup>15</sup> Вилисов М.В., Государственно-частное партнерство: политико-правовой аспект. Власть, 2006. № 7.

<sup>16</sup>Հավելված <<Կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N1241-Ն որոշման՝ [www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/2012/09/MAR-1241.pdf](http://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2012/09/MAR-1241.pdf)

Ամերիկացի պրոֆեսոր Է. Սավասն իր «Սեփականաշնորհում և հանրային-մասնավոր գործընկերություն» գրքում նշել է հանրային-մասնավոր գործակցության երեք բնորոշում<sup>17</sup>:

- 1) ՀՄԳ-ն ցանկացած պայմանավորվածություն է, որտեղ հասարակական և մասնավոր հատվածները միավորվում են ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման նպատակով: Այսինքն, պայմանագրերը, ֆրանչիզները և դրամաշնորհները համապատասխանում են սույն լայն սահմանմանը:
- 2) ՀՄԳ-ները համալիր, բազմագործընկեր ենթակառուցվածքային նախագծեր են:
- 3) ՀՄԳ-ն սահմանում է ֆորմալ համագործակցություն գործարարության, հասարակության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև բնակչության կենսամակարդակի բարելավման և տարածքների զարգացման նպատակով, որի շրջանակներում պետության և մասնավոր հատվածի ավանդական դերերը վերաբաշխվում են:

Այստեղ չեն ճշտվում պայմանները, որոնց համաձայն համագործակցության ոլորտները կսահմանվեն որպես ՀՄԳ: Այսինքն, այս մեկնաբանությամբ ՀՄԳ հասկացվում է ցանկացած հարաբերություն հանրային և մասնավոր հատվածների միջև, ինչը չի փոխանցում հասկացության էությունը և դրա տարբերակիչ հատկանիշները՝ որպես առանձին տնտեսական կատեգորիա:

Է.Հ. Քլիջնը և Գ.Ռ. Թեյսմանը առաջարկել են հանրային-մասնավոր գործընկերության հստակ սահմանում, մասնավորապես. «Հանրային-մասնավոր գործընկերությունը կարելի է բնութագրել որպես հանրային և մասնավոր հատվածների կայուն փոխգործակցություն, որտեղ մշակվում է համատեղ արտադրանք կամ ծառայություն, և ոիսկերը, ծախսերն ու շահույթը կիսվում են գործընկերների միջև»<sup>18</sup>: Այս սահմանման մեջ արդեն արտահայտված է գործընկերների ՀՄԳ ստեղծելու միասնական նպատակը և պայմանները, սակայն չի հստակեցված պետության և մասնավոր հատվածի ՀՄԳ և համագործակցության այլ ձևերի տարբերությունները:

<sup>17</sup> Savas E.S., Privatization and Public Private Partnerships, N.Y., Chatham House Publishers, 2000, p. 105-106.

<sup>18</sup> Klijn E.H., Teisman G.R. Governing Public-Private Partnerships: Analyzing and Managing the Processes and Institutional Characteristics of Public-Private Partnerships. Public-Private Partnerships: Theory and Practice in International Perspective. Ed. by S.P, Osborne, London: Routledge, 2000, p. 85.

Ներկայացնենք նաև Հ. Համի և Զ. Կոպենջանի կողմից առաջարկված մեկ այլ ՀՄԳ սահմանում. «ՀՄԳ-ն երկարաժամկետ համագործակցություն է հանրային և մասնավոր հատվածների միջև, որի շրջանակներում նրանք համատեղ ապրանք կամ ծառայության են մշակում, կիսում են այդ ապրանքի կամ ծառայության հետ կապված ոիսկերը, ծախսերը և ռեսուրսները: ՀՄԳ նպատակն է ոչ միայն զարգացնել նորարարական լուծումներով համատեղ արտադրանք, այլ նաև առաջարկում է ինստիտուցիոնալ նորացում. աշխատանքային մեթոդների ընթացակարգերի, համաձայնագրերի և հաստատությունների արդիականացում»<sup>19</sup>:

Նման սահմանումը ընդգծում է ոչ միայն ՀՄԳ ընդհանուր նպատակին հասնելու տևողությունը, այլ նաև հեղինակները մանրամասն նկարագրում են պետության և մասնավոր հատվածի փոխգործակցության առանձնահատկությունները, կարևորելով համատեղ ապրանքի կամ ծառայության արտադրության ոիսկերի բաշխումը կողմերի միջև:

Ներկայում մի շարք հեղինակներ եկել են փոխհամաձայնության, որ ՀՄԳ ենթադրում է միասնական նպատակի իրականացման համար հանրային և մասնավոր հատվածների ռեսուրսների միավորում, որպեսզի համագործակցության արդյունքում համապատասխան իրավասությունները և ուժեղ կողմերը համատեղելով մեծացնեն օգուտները: Այս մեկնաբանությունը, թեև արտահայտում է ՀՄԳ ձևավորման հիմնական գաղափարը, բայց չի փոխանցում այս մեխանիզմի կիրառման տարբերակից հատկանիշները, առանձնահատկությունները, դրա ձևավորման առանձնահատկությունները:

ՀՄԳ մեխանիզմների զարգացման և տարածմանը զուգահեռ Գ. Հոջը և Կ. Գրիվը բնորոշել են ՀՄԳ-ն որպես համագործակցության նպատակով ինստիտուցիոնալ պայմանավորվածություն հանրային և մասնավոր հատվածների միջև, որն իրականացվում է նոր կազմակերպչական միավորի ստեղծմամբ<sup>20</sup>: Այս սահմանումը պարունակում է նոր տարր, որն անհրաժեշտ է հանրային ոլորտի ենթակառուցվածքների ստեղծման կամ զարգացման նախագծի իրականացման համար, մասնավորապես՝ նոր կազմակերպական միավոր, որը պատասխանատու է մասնավոր հատվածի կողմից նախագծի իրականացման համար:

<sup>19</sup> Ham H. van, Koppenjan J., Building Public-Private Partnerships: Assessing and Managing Risks in Port Development/Public Management Review. Vol. 3, № 4, 2001, p. 598.

<sup>20</sup> Hodge G., Greve C. (eds.), The Challenge of Public-Private Partnerships: Learning from International Experience. Cheltenham, UK: Edward Elgar, 2005.

Ըստ ՀՄԳ մասնագետ, ավատրալիացի տնտեսագետ Գ. Հոջի Ժամանակակից գրականության մեջ հնարավոր է գտնել ՀՄԳ սահմանման հինգ տարբեր մոտեցում.

- պայմանագրային համաձայնություն պետական գործակալի և մասնավոր հատվածի միջև, որը թույլ է տալիս վերջինիս մասնակցել հանրային բարիքների ստեղծմանը,
- մասնավորեցման այլընտրանք,
- ինչպես շուկայի, այնպես էլ պետության անհաջողությունները հաղթահարելու միջոց, մասնավոր հատվածի կառավարման սկզբունքների կիրառման միջոց բարձրացնելու հանրային մասի արդյունավետությունը,
- ճգնաժամային իրավիճակներում գործարարության աջակցության մեխանիզմ,
- լեզվախառն, հորինված իրավաբանների, խորհրդատունների և բրոքերների կողմից ավելի մեծ կոմիսիոն վճարների ակնկալիքով<sup>21</sup>:

Ըստ հանրային-մասնավոր գործընկերության արդյունավետ կառավարման Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ուղեցույցի. «Հանրային-մասնավոր գործընկերությունը հիմնվում է ապահովելու հանրային հատվածի օբյեկտների ֆինանսավորումը, պլանավորումը, շահագործումը, արտադրությունը և ծառայությունների մատուցումը:

Դրա հիմնական հատկանիշներն են.

- սպասարկման, ապահովման և ծառայությունների մատուցման երկարաժամկետությունը (երբեմն մինչև 30 տարի),
- ռիսկերի փոխանցումը մասնավոր հատվածին,
- իրավաբանական անձանց կողմից պետական և համայնքային կառույցների հետ կնքված երկարաժամկետ պայմանագրերի բազմազանությունը:

Հանրային հատվածի կողմից մասնավոր հատվածի հետ պայմանագրերի կնքման ժամանակ հանրային-մասնավոր գործընկերությունը դիմում է նորարարական մեթոդների, մասնավոր հատվածը նախագծի իրականացման ընթացքում օգտագործում է իր կապիտալը և կառավարման կարողությունները՝ համաձայն հաստատված ժամկետների և բյուջեի, իսկ պետական հատվածը պատասխանատվություն է կրում իր համար շահավետ միջոցով բնակչությանը այդ ծառայությունների պատշաճ մատուցումը ապա-

<sup>21</sup> Hodge G., Risks in Public-Private Partnerships: shifting, sharing or shirking? Asia Pacific Journal of Public Administration. № 26 (2), 2006, pp. 157-179.

հովելու և դրական ազդեցություն է թողնում տնտեսության զարգացման և մարդկանց կյանքի որակի բարելավման վրա: Կան հանրային-մասնավոր գործընկերության տարբեր տեսակներ, ստեղծված տարբեր պատճառներով, որոնք ընդգրկում են շուկայի հատվածների լայն շրջանակ և արտացոլում են պետության տարբեր տեսակի ենթակառուցվածքային ծառայությունների կարիքները:

Չնայած հանրային-մասնավոր գործընկերության տարբեր տեսակների, կարելի է տարբերակել երկու հիմնական մոտեցում. **ինսպիրուցիոնալ հանրային-մասնավոր գործընկերություն**, որը ներառում հանրային և մասնավոր հատվածի համատեղ ձեռնարկությունների բոլոր ձևերը և **պայմանագրային հանրային-մասնավոր գործընկերություն**<sup>22</sup>:

Ըստ բրիտանացի հեղինակ Մայքլ Գեդսի՝ «Հանրային-մասնավոր գործընկերություն եզրույթը բնութագրվում է հետևյալ կերպ: Առաջին հերթին՝ դա միայն միջնաժամկետ կամ երկարաժամկետ իրավահարաբերություններ են, երկրորդ՝ այդ իրավահարաբերությունները հիմնված են ընդհանուր նպատակների շուրջ, երրորդ՝ դրանք կարող են ներգրավել է մի շարք գործընկերներ, չորրորդ՝ պետական-մասնավոր գործընկերությունը պարտադիր ենթադրում է գործընկերների միջև ռիսկերի, շահույթի և ծախսերի բաշխում, իինգերորդ՝ այս համագործակցության նպատակն է հանրային շահի բարելավմանն ուղղված արդյունքների և ծառայությունների տրամադրումը»<sup>23</sup>:

Ուստի հեղինակ Վ. Վարնավսկին կարծում է, որ «հանրային-մասնավոր գործընկերությունը իրավաբանորեն ձևակերպված (սովորաբար հաստատագրված ժամկետով) ներդրումային համագործակցություն և ռիսկերի կիսում ենթադրող փոխհարաբերությունների համակարգ է պետության և համայնքների միջև մի կողմից, քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև՝ մյուս կողմից, որի առարկա են պետական կամ համայնքային սեփականության օբյեկտները, ինչպես նաև պետական և համայնքային իշխանությունների, կազմակերպությունների, հիմնարկների և ձեռնարկությունների կող-

<sup>22</sup> Практическое руководство по вопросам эффективного управления в сфере государственно-частного партнерства. Европейская экономическая комиссия; Организация Объединенных Наций. Нью-Йорк–Женева: ООН, X; 2008, с. 1: [http://safbd.ru/sites/default/files/rukovodstvo\\_eek\\_oon\\_po\\_gchp.pdf](http://safbd.ru/sites/default/files/rukovodstvo_eek_oon_po_gchp.pdf)

<sup>23</sup> Geddes M., Making Public Private Partnerships Work: Building Relationships And Understanding Cultures. Hants (England): Gower Publishing, Ltd., 2005, p. 2.

մից մատուցվող ծառայությունները»<sup>24</sup>:

Ըստ նույն հեղինակի մեկ այլ սահմանման «Հանրային-մասնավոր գործընկերությունը ինստիտուցիոնալ և կազմակերպչական դաշինք է կառավարության և գործարարության միջև արդյունաբերական, հետազոտական և նաև ծառայությունների ոլորտներում հանրային կարևոր նախագծեր և ծրագրեր իրականացնելու նպատակով»<sup>25</sup>:

Վերոնշյալ սահմանումները արտահայտում են ՀՄԳ առանձնահատկությունները, ինչպիսիք են պետության և մասնավոր հատվածի միջև հարաբերությունների տևողության, ռիսկերի, պարտականությունների, ծախսերի, ինչպես նաև կողմերից յուրաքանչյուրի ծեռք բերված օգուտների բաշխումը: ՀՄԳ միջոցով նախագծի իրականացումից ստացված եկամուտները կարող են տարբեր լինել կապված կողմերի հետապնդած նպատակներից:

Մասնավոր հատվածի համար ՀՄԳ մասնակցությունից ստացված օգուտը երկարաժամկետում երաշխավորված եկամտի ապահովումն է, ինչպես նաև սեփական գործունեության ընդլայնման հնարավորությունը, իսկ հանրային կողմի համար նախագծի շրջանակներում հատկապես «գին-որակ» հարաբերակցության բարելավումն է, ինչը հանգեցնում է պետական բյուջեի և հարկատուների բեռի նվազեցմանը, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից նորարարությունների ներգրավման արդյունքում մատուցվող ծառայությունների որակի բարելավումը:

Միջազգային փորձի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու մի շարք պայմաններ, որոնց իրագործումը որոշում է ՀՄԳ զարգացման հաջողությունը տնտեսական հարաբերությունների արդի համակարգում: Հանրային-մասնավոր գործընկերության համար առավել սկզբունքային է հանրային և մասնավոր շահերի հակասությունների հաղթահարումը: Մեկ այլ անհրաժեշտ պայման է, որի իրականացումը պահանջվում է բավականին երկար ժամանակ և հանրային համակարգված ջանքեր, ՀՄԳ ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծումն է: Վերջապես, կարևոր է ՀՄԳ նախագծերի և նախագծերի կազմակերպման մեջ հանրային կողմի առաջատար դերը և միաժամանակ այդ

<sup>24</sup> Варнавский В.Г., Государственно-частное партнерство: некоторые вопросы теории и практики. Мировая экономика и международные отношения. 2011, № 9, с. 46.

<sup>25</sup> Варнавский В.Г., Государственно-частное партнерство в России: проблемы становления. Отечественные записки. № 6, 2004, с. 33.

համագործակցությունում իշխանական լծակների ու առավելությունների արդյունավետ կիրառումը:

Պետության և գործարարության սերտ կապերը իրավական պետության և շուկայական կառավարման համակարգի էությունն են: Մինչդեռ, պետության (ի դեմս տարբեր պետական սուբյեկտների) և բիզնեսի միության մեջ անխուսափելի են հանրային և մասնավոր շահերի հակասությունները: Ինչպես կհաղթահարվեն այդ հակասությունները, ինչպես կազդի այդ համագործակցությունը երկրի, տարածաշրջանի, քաղաքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, ինչպիսի սոցիալ-տնտեսական հետևանքներ է ակնկալում հասարակությունը մասնավոր հատվածին արդյունաբերության և ծառայությունների որոշ տեսակների փոխանցման արդյունքում, որոնք ավանդաբար գտնվել են պետական հոգածության ներքո, կախված է քաղաքացիական հասարակության հասունությունից, պետության կայացվածությունից, պետական ապարատի գործունեության վերահսկումն իրականացնող հասարակական ինստիտուտների օարգացվածությունից, գործընկերության գործունեության թափանցիկությունից:

Նոյնիսկ հզոր ինստիտուցիոնալ գործընկերային հարաբերություններ ունեցող զարգացած երկրներում ՀՄԳ-ները երբեմն օգտագործվում են մասնավոր շահերի հետաքրքրությունների շրջանակում: Որպես հետաքրքրությունների հավասարակշռության տեղաշարժի արդյունք խախտվում են հավասար մրցակցային պայմանները, մեծանում է անվստահությունը կառավարության և մասնավոր հատվածի գործընկերության երևույթի նկատմամբ: Գործնականում, դա հաճախ կապված է կոռուպցիայի հետ, որը ՀՄԳ ձևավորման առավել մտահոգիչ խնդիրներից մեկն է:

Տնտեսությանը պետական միջամտության ինստիտուցիոնալ հիմքը պետության կողմից սեփականության իրավունքի, ազատ մրցակցության ապահովման և հանրային բարիքների հավասար մատչելիության ապահովման գործառույթն է, ինչպես նաև որոշ ռեսուրսներին հասանելիության կարգավորումը: Ընդ որում, որպես հիմնական չափանիշ պետք է հանդես գա հանրային, այլ ոչ թե առանձին տնտեսավարող սուբյեկտների անհատական շահերը: Այսինքն՝ պետական միջամտությունը պետք է առաջին հերթին ուղղված լինի շուկայի ձախողումների՝ մասնավորապես մենաշնորհի, ոչ շահութաբեր որոշ հանրային անհրաժեշտ գործունեության տեսակների, կառուցվածքային անհամաշափության և այլնի վերացմանը: Շուկայական մեխանիզմների նշված թերությունները

առավել ակնհայտ արտահայտված են արտադրական ենթակառուցվածքի ոլորտներում, որոնց զարգացումից մեծապես կախված է տնտեսության վիճակը, ինչպես նաև սոցիալական ոլորտը, որտեղ պետության դերը ավանդաբար եղել և մնում է ամուր:

ՀՄԳ զարգացման և կայացման վրա էական ազդեցություն ունի համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրը, սոցիալ-քաղաքական ուժերի բաշխվածությունը և այս կամ այն քաղաքական ուսմունքների գերակշռությունը: Ընդ որում, դա ոչ միայն քաղաքական ամենաբարձր մակարդակով կամքի դրսևորում է, այլև «քաղաքական ապահովության» ստեղծում սեփականաշնորհման մեխանիզմների կիրառման սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների ոլորտում հասարակության ստորին շերտերում հասարակական կարծիքի նախապատրաստման միջոցով:

Գիտական գրականության և պաշտոնական փաստաթղթերում հանրային-մասնավոր գործընկերության ձևակերպումների մոտեցումների բազմազանությունը, որպես հետևանք, սույն հայեցակարգի բովանդակության զգալի անորոշությունը, հիմնականում արդյունք են միջազգային փաստաթղթերում այս հայեցակարգի միասնական մոտեցման բացակայության: Այլ կերպ ասած, հարաբերությունների զարգացման այս մակարդակում հանրային-մասնավոր գործընկերության շահագրգիռ կողմերին շահեկան է պարզեցված ձևակերպման վրա հիմնված «հանրային-մասնավոր գործընկերություն» սահմանման մշուշոտ ըմբռնումը:

Քանի որ չկա «հանրային-մասնավոր գործընկերություն» հասկացության ընդհանուր ըմբռնում կարելի է արտացոլել դրա առավել արտահայտիչ հատկանիշները, որոնց առկայության դեպքում մասնավոր հատվածի և հանրային մարմինների փոխազդեցության տարրեր ձևեր կարելի է որակվել որպես ՀՄԳ:

ՀՄԳ-ն բնութագրվում է.

- ա) որոշակի նախագծի իրականացման նպատակով պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտի միջև երկարաժամկետ պայմանագրի առկայությունը,
- բ) պետական կամ համայնքային իշխանությունների առջև դրված գործառույթների և խնդիրների մի մասի փոխանցումը մասնավոր հատվածին,
- գ) մասնավոր կապիտալի ներգրավումը նախագծի ֆինանսավորմանը,
- դ) նախագծի ռիսկերի կիսումը հանրային և մասնավոր գործընկերների միջև:

Այս առումով ՀՄԳ նախագծերի ոլորտի կարգավիճակում են հայտնվում ինչպես ծառայությունների փոքր պայմանագրերը, այնպես էլ բազմամիլիոնանոց կոնցեսիոն պայմանագրերը:

Արտասահմանյան գիտական գրականության մեջ վերլուծում են ՀՄԳ գործունեության յուրահատկությունները և առանձնացնում են հետևյալ բնորոշումները.

- պայմանագրի նպատակն է նախագծի իրականացման արդյունքում ստացված շահույթի բաշխումը,
- ՀՄԳ-ն ստեղծվում է հանրային և մասնավոր հատվածների միջև ռիսկերի բաշխման համար,
- Եկամուտը բաշխվում է մասնակիցների միջև համամասնորեն՝ ներդրումներին և ռիսկերին համապատասխան,
- ՀՄԳ մասնակիցների հարաբերությունները ձևակերպվում են օրենսդրությանը համապատասխան,
- համագործակցության մասնակիցներ են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կազմակերպությունները,
- Կողմերի միջև հարաբերությունները կրում են գործընկերային, հավասար բնույթ:

Հանրային-մասնավոր գործընկերությունը հիմնված լինելով խառը տնտեսության սկզբունքի վրա, հիմնականում զարգացնում և լրացնում է այն: ՀՄԳ-ն ձևավորվում է որպես որոշակի ինստիտուցիոնալ միջավայրում տնտեսվարող սուբյեկտների հարաբերությունների համակարգ և տարածվում է մի շարք ապրանքների և ծառայությունների արտադրության ոլորտներում:

Միաժամանակ «խառը տնտեսություն» և «հանրային-մասնավոր գործընկերություն» հասկացությունները նույնական չեն: Ըստ Մ.Վ. Կիլնովյի մեկնաբանության. «Խառը տնտեսությունում հանրային և մասնավոր կապիտալի ոչ բոլոր փոխգործակցությունները կարելի են վերագրել ՀՄԳ-ի, այլ միայն նրանք, երբ մասնավորը պետության աջակցությամբ և պատվերով իրականացնում է որոշակի գործառույթներ, որոնք նախկինում վերջինիս իրավասությունների դաշտում էին, երբ շուկայական հարաբե-

րությունները ներթափանցում են պետական գործունեության ավանդական ոլորտներ և ենթակառուցվածքներ»<sup>26</sup>:

ՀՄԳ նախագծերի իրականացման արդյունավետության համար կարևոր է հաշվի առնել աղյուսակ 2-ում ներկայացված սկզբունքները:

Աղյուսակ 2

### **Հանրային-մասնավոր գործընկերության հիմնական սկզբունքները<sup>27</sup>**

<b>Հանրային կողմի համար</b>	<b>Մասնավոր հարվածի համար</b>
1. Կողմերի շահերի հավասարություն և գործողությունների ընտրության ազատության	1. ՀՄԳ պայմանագրի կայունություն և միաժամանակ փոփոխության և հարմարվողականության հնարավորություն
2. Շահանցիկություն և հետադարձ կապ	2. Պայմանագրի կատարման պատասխանատվություն
3. Պետության չմիջամտելը մասնավոր գործընկերոջ պատասխանատվության ոլորտ	3. Մրցունակություն
4. Խթանում և երաշխիք	4. Մասնավոր ներդրողի հավասարություն օրենքի առջև
5. Փոխհատուցելիություն	5. Հանրային և մասնավոր գործընկերների միջև ՀՄԳ շրջանակներում կնքված պայմանագրերի կատարման ոիսկերի արդարացի բաշխում
6. Հավասար (ոչ խտրական) վերաբերմունք օտարերկրյա ընկերությունների նկատմամբ	
7. Հավասարություն պետության օրենքի առջև	
8. Մասնավոր գործընկերոջ ընտրություն մրցութային սկզբունքով	
9. ՀՄԳ իրականացման ժամանակ բյուջետային միջոցների օգտագործման առավելագույն արդյունավետություն	

ՀՄԳ-ն խարսխվում է նաև տնտեսության պետական կարգավորման վրա: Ժամանակակից տնտեսության կազմակերպման և կառավարման բարդ ձևերը անհնար է առանց տնտեսության պետական կարգավորման առանձին ճյուղերի ու ընկերություն-

<sup>26</sup> Клинова М.В., Государство и частный капитал в поисках pragmatического взаимодействия, М., 2009, с. 89-90.

<sup>27</sup> Կազմել է հեղինակը:

ների գործունեության: Յուրաքանչյուր երկրում պետական կառուցի զգալի մասն աշխատում է այդ ուղղությամբ, իրապարակվում են բիզնես-գործընթացները կարգավորող հսկայածավալ կանոնակարգեր, ձևափոխվում են գոյություն ունեցող և ստեղծվում են նոր գործիքաշարեր:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը կարելի է եզրակացնել. նախ՝ ՀՄԳ առարկա են պետական և համայնքային սեփականությունը, ինչպես նաև պետության, համայնքի և բյուջետային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները: Երկրորդ՝ գործընկերությունը ամրագրվում է հանրային և մասնավոր հատվածի մասնակիցների միջև հատուկ պայմանագրով: Բացի այդ, ՀՄԳ կարևոր պայման է պետական և մասնավոր ընկերությունների կողմից նախագծի համաֆինանսավորումը և ոիսկերի բաշխումը, չնայած որոշ դեպքերում, նախագիծը կարող է ֆինանսավորվել նաև միայն մասնավորի կողմից: Վերջապես՝ ՀՄԳ նախագիծը գործում է պայմանագրով ամրագրված ժամկետում, որի ավարտից հետո օբյեկտը փոխանցվում է հանրային կողմին կամ գործընկերությունը շարունակվում է նոր պայմանագրի հիման վրա:

## 1.2. ՀՄԳ կառուցակարգերը և եղանակները

Միջազգային փորձի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մի շարք պայմաններ, որոնց իրականացման դեպքում կանխորոշում է ՀՄԳ զարգացման հաջողությունը տնտեսական հարաբերությունների ժամանակակից համակարգում: Առավել կարևոր է հանրային և մասնավոր շահերի հակասությունների հաղթահարումը ՀՄԳ շրջանակներում: Ըստ իրավաբանական բառարանի, շահերի բախումը «մասնավոր շահերի և հանրային կամ ֆիդուցիար պարտականությունների իրական կամ հնարավոր անհամատեղելիությունն է»:<sup>28</sup> Ընդհանրացնելով կարելի է շահերի բախումը բնորոշել որպես հանրային և մասնավոր շահերի անհամատեղելիություն:

Հանրային-մասնավոր գործընկերությունը բյուջետային ֆինանսավորման իրական այլընտրանք է, ինչը թույլ է տալիս տնտեսության հանրային հատվածում լրացուցիչ միջոցներ ներգրավել:

Արդյունքում հնարավոր է դառնում բարելավել պետական սեփականության ար-

<sup>28</sup> Black's Law Dictionary: <http://thelawdictionary.org/conflict-of-interest/>

դյունավետությունը: Այսպես, ըստ որոշ տվյալների հանրային և մասնավոր գործարարության գործընկերության պետական սեփականության կառավարման ոլորտում թույլ են տալիս Մեծ Բրիտանիային կրճատել պետական ծախսերը 15-20%-ով<sup>29</sup>:

Գործարար հատվածի համար հանրային-մասնավոր գործընկերության դրական կողմ է ծախսերի և ոիսկերի փոխհատուցումը: Մասնավոր հատվածի կողմից ՀՄԳ նախագծերը դիտարկվում են որպես ընդունելի մակարդակի շահութաբերությամբ և ոիսկայնությամբ երկարաժամկետ ներդրումներ:

Այսօր կարևոր է նաև հանրային-մասնավոր գործընկերության իրավական կարգավորման խնդիրը, քանի որ զարգացած երկրներում իրենց ուժեղ ինստիտուցիոնալ հենքով ՀՄԳ գործընկերությունը հաճախ օգտագործվում է մասնավոր շահի իրացման համար: Գործընկերության այս բացասական դրսերումները հանգեցնում են տնտեսական քաղաքականության խեղաթյուրման, մրցակցային պայմանների խախտման, պետության և մասնավոր հատվածի միջև փոխգործակցության երևոյթի հանդեպ անվստահության: Գործնականում, այդ երևոյթները հաճախ հանդես են գալիս կոռուպցիայի տեսքով: Որպես հետևանք, որոշակի թվով ՀՄԳ նախագծեր վաղաժամկետ ընդհատվում են կամ էապես վերանայվում են գոյություն ունեցող պայմանագրերի դրույթները<sup>30</sup>:

Սակայն կան նաև այլ կարծիքներ. պետությունը վերահսկելով կապիտալը և նոր տեխնոլոգիաները կարող է դառնալ գործընկերության գերիշխող տարր: Վերը շարադրվածի հիման վրա պետական-մասնավոր գործընկերությունը կարելի է բնութագրել երկակիության համատեքստում, կարևորելով քաղաքական և իրավական բաղադրիչի հավասարակշռության հասնելու անհրաժեշտությունը հանրային-մասնավոր գործընկերության նպատակների իրականացման համար:

Մեկ այլ անհրաժեշտ պայման է ինստիտուցիոնալ ՀՄԳ միջավայրի ստեղծումը, որի իրականացման համար պահանջվում է երկար ժամանակ և պետական համակարգի ջանքեր: Վերջապես, կարևոր պայման է, ՀՄԳ նախագծերի և նախագծերի շրջանակներում պետության առաջատար դերի պահպանումը՝ միաժամանակ օգտագործե-

<sup>29</sup> Мочальников В., Государственно-частное партнерство в стратегии социально-экономического развития России, Вестник Института экономики РАН, №1, 2010, с. 57.

<sup>30</sup> Варнавский В.Г., Государственно-частное партнерство: некоторые вопросы методологии. Вестник ИЭ РАН, №3, 2009, с. 31.

լով պետական և համայնքային ակտիվների սեփականաշնորհման իր առավելությունը: Պետության և մասնավոր հատվածի սերտ կապերը բխում են օրինական պետության և շուկայական կառավարման համակարգի էությունից: Միևնույն ժամանակ պետության (իր տարբեր սուբյեկտներով) և գործարարության միության մեջ անխուսափելիորեն արտահայտվում են հանրային և մասնավոր շահերի, հանրային բարիքների ապահովման և շահույթի ստացման հակասությունները: Ինչպես կլուծվի այդ հակասությունը, ինչպես կազդի գործընկերությունը երկրի, տարածաշրջանի, քաղաքի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա, ինչպիսի սոցիալ-տնտեսական ազդեցություն է ակնկալում հասարակությունը մասնավոր հատվածին ավանդաբար պետական պատասխանատվության ոլորտին պատկանող արդյունաբերության և ծառայությունների որոշ տեսակների փոխանցման արդյունքում, կախված է քաղաքացիական հասարակության հասունության աստիճանից, պետության կայացվածությունից, պետական ապարատի վերահսկողությունն իրականացնող հանրային կառույցների գործունեությունից, գործընկերության թափանցիկությունից: <ՄԳ զարգացումը և կայացումը պայմանավորված է պետության առջև ծառացած խնդիրների լուծման համար համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի առկայությամբ, սոցիալ-քաղաքական ուժերի դասավորվածությամբ և այս կամ այն քաղաքական ուսմունքների գերակշռությամբ: Ընդ որում, խոսքը ոչ միայն ամենաբարձր մակարդակում քաղաքական կամքի, այլ նաև հասարակության ստորին շերտերում սոցիալական և արդյունաբերության ենթակառուցվածքների ոլորտում սեփականաշնորհման մեխանիզմների հանդեպ հասարակական կարծիք նախապատրաստելու միջոցով «քաղաքականության ապահովման» մասին է: <ՄԳ նախագծերի հաջող իրականացման անփոխարինելի պայման է ինստիտուցիոնալ գործոնը. համապատասխան օրենսդրության մշակումը, պետական և համայնքային սեփականության օբյեկտների հարցում մասնավոր ընկերությունների գործունեության թափանցիկությունը, հստակ ուղեցույցների և կանոնակարգերի մշակումը, հավատարմությունը կառավարության կողմից ընձեռած քաղաքականությանը և <ՄԳ սկզբունքներին, ընդհանուր քաղաքական իրավիճակի կայունությանը:

Շուկայական տնտեսության և քաղաքացիական հասարակության ոչ լիարժեք ինստիտուցիոնալ միջավայր ունեցող երկրներում հատուկ նշանակություն ունեն արտաքին գործոնները, այդ թվում՝ հոգեբանական ճնշումը կապված զարգացած երկրների հաջո-

ղությունների հետ, որը երբեմն մղում է օտարերկրյա ՀՄԳ մոդելների արտատպման՝ առանց համապատասխան ինստիտուցիոնալ, իրավական և ֆինանսական միջավայրի նախապատրաստման: Նման քաղաքականությունը կարող է հանգեցնել հակառակ արդյունքի և երկար տարիներ ՀՄԳ հանդեպ ստեղծել բացասական վերաբերմունք:

Կախված ՀՄԳ շրջանակներում լուծվող խնդիրների բնույթից եղած և նոր առաջացող համագործակցության ձևերը բաժանվում են տեսակների (մոդելների): Ըստ այդմ, ըստ ՀՄԳ նպատակների տարբերում են կազմակերպչական, ֆինանսավորման և կոռուպցիայի մոդելներ: Գործընկերության շատ դեպքերում օգտագործում են տարբեր ձևերի առավելությունները և դրանց համադրությունները:

Կազմակերպչական մոդելները հիմնականում չեն ենթադրում գույքային հարաբերությունների մեջ էական միջամտություն, պետական և մասնավոր գործընկերների համագործակցությունն իրականացվում է երրորդ ընկերությունների ներգրավմամբ, որոշ գործառույթների և պայմանագրային պարտավորությունների զիջմամբ, օբյեկտների արտաքին վերահսկողության փոխանցման հնարավորությամբ: Որպես ՀՄԳ կազմակերպչական մոդել այս պահին առավել տարածված են կոնցեսիաներ:

Ֆինանսավորման մոդելները ներառում են այնպիսի ձևեր, ինչպես օրինակ առևտրային վարձակալությունն է, լիզինգի բոլոր տեսակները, նախնական և ինտեգրված նախագծային ֆինանսավորումը: ՀՄԳ մոդելները դրանց մշակման և իրականացման կիրառական մեթոդների առումով, կարող է դիտարկել որպես դասական մեթոդների և նախագծի ֆինանսավորման ընթացակարգերի զարգացում: Սակայն հանրային և մասնավոր գործընկերության որոշ առանձնահատկություններ պարտադրում են նախագծերի համար մի շարք լրացուցիչ պահանջների անհրաժեշտություն:

Նախագծային ֆինանսավորման և ՀՄԳ մոդելների ընդհանուր հատկանիշներն են.

- նախագծի առկայություն, որի նպատակը, կառուցվածքը և իրականացումը ունի յուրահատուկ բնույթ,
- անկախ նախագծային ընկերության ստեղծում, որն ունի անկախ ռեսուրսներ և հանդիսանում է նախագծի իրականացման ինստիտուցիոնալ հենքը,
- պարտքի հիմնական գումարի տոկոսների վճարում և մայր գումարի մարում նախագծի ապագա դրամական հոսքերից: Դա նշանակում է, որ կապիտալատար

նախագծերի համար պահանջվում է երկարաժամկետ հատուկ ֆինանսավորման հայեցակարգ,

- ազդեցիկ գործոնների և ռիսկերի հանդեպ ապագա դրամական հոսքերի զգայունության վերլուծություն, ինչպես նաև հաջողության կրիտիկական գործոնների որոշում,
- ռիսկերի ոլորտների որոշում, դրանց գնահատում և բաշխում նախագծի գործընկերների/մասնակիցների միջև,
- պայմանագրի ձևակերպում, որն ապահովում է նախագծի անխոչընդուն իրականացումը, որպես դրա բոլոր մասնակիցների հիմնական նպատակ,
- նախագծային ընկերության ձևավորում, որը մայր ընկերությանը հետհաշվեկշռային (off-balancesheet) պարտավորությունների օգտագործման հնարավորություն է տալիս,
- գործընկերների պատասխանատվության և պարտավորությունների սահմանների հստակ սահմանումը:

Գործնականում, նախագծերը կարող են ֆինանսավորվել վարկառուի բոլոր ակտիվների լիարժեք (full recourse) կամ սահմանափակ (limited recourse) ռեզրեսի իրավունքով վարկերի հաշվին:

Այս դեպքում պայմանագիրը հնարավորություն է տալիս պարտատիրոջը ներդրողներից (բաժնետերեր) ստանալու լրիվ կամ սահմանափակ վարկի ձևով նախատեսված միջոցներ վարկառուի ամբողջ ակտիվների համար: Առանց ռեզրեսի (nonrecourse) ֆինանսավորման ժամանակ այդ հնարավորությունը բացառվում է: Նախագծային ֆինանսավորման դեպքում առավել հաճախ տրամադրվում են սահմանափակ ռեզրեսի իրավունքով վարկեր:

**Կոռապերացման մոդելները** իրենցից ներկայացնում են նոր սպառողական արժեքի՝ հանրային բարիքի ստեղծման ընդհանուր գործընթացի առանձին փուլերի համար պատասխանատու գործընկերների համախմբման բոլոր ձևերը և մեթոդները: Հաճախ նման կոռապերացումը պահանջում է բարդ, այդ թվում՝ հոլդինգային կառուցվածքների կազմակերպում օբյեկտների կառուցման և դրանց շահագործման համար, մասնավորապես արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների ոլորտում: ՀՄԳ նախա-

գծերը իրականացնելիս օգտագործվում են պետական և մասնավոր հատվածների համագործակցության տարբեր մեխանիզմներ: Դրանք տարբերակվում են կախված մասնավոր գործընկերոջ փոխանցված սեփականության իրավասությունների ծավալից, կողմերի ներդրումային պարտավորություններից, գործընկերների միջև ռիսկի բաշխման սկզբունքներից, տարբեր տեսակի աշխատանքների իրականացման պատասխանատվությունից: Առավել տարածված են ՀՄԳ համագործակցության հետևյալ մեխանիզմները:

### ***Նոր ենթակառուցվածքային օբյեկտի ստեղծման նպատակով***

1. «Նախագծում/շինարարություն» (Design Build - DB)<sup>31</sup>. սովորաբար երկկողմ պայմանագիր նախագծային աշխատանքների և շինարարության համար նախատեսված հստակ վարձատրության չափով: Այս նպատակով, որպես կանոն, հիմնվում է հատուկ ընկերություն (կոնսորցիում, որ SPV), որը պատասխանատու է շինարարական աշխատանքների մշակման և իրականացման համար, ներառյալ գործունեության հետ պայմանավորված բոլոր ռիսկային պարտավորությունները: Իսկ սեփականատերերը պատասխանատվություն են կրում նախագծի ֆինանսավորման, կառավարման և շահագործման համար: Համագործակցության այս տեսակը կրճատում է նախագծի իրականացման ժամկետը, ենթադրում է միջոցների խնայողություն և վերաբաշխում է ռիսկերը հանրային և մասնավոր գործընկերների միջև: Նվազում է կոնֆլիկտային իրավիճակների թիվը շինարարությունը նախագծող և իրականացնող գործընկերների շահերի համընկնման շնորհիվ: Պետությունը հանդիսանում է պայմանագրի օբյեկտի սեփականատերը և պատասխանատվություն է կրում օբյեկտի շահագործման և տեխնիկական սպասարկման համար: Հաճախ այս տեսակի ՀՄԳ-ն ներառում է «երաշխիքով նախագծում/շինարարություն» մոդելը, ինչը նշանակում է մասնավոր գործընկերոջ կողմից ստեղծված օբյեկտի որոշակի որակի երաշխավորում ըստ սահմանված ցուցանիշների, ինչն, իհարկե, ավելորդ ռիսկ է նրա համար: Սովորաբար այդպիսի երաշխիքներ տրամադրում է մասնավոր կողմը 5-20 տարիների համար<sup>32</sup>:

<sup>31</sup> U.S. Department of Transportation, Federal Highway Administration:  
[http://www.fhwa.dot.gov/PPP/defined\\_db.htm](http://www.fhwa.dot.gov/PPP/defined_db.htm)

<sup>32</sup> User Guidebook on Implementing Public-Private Partnerships for Transportation Infrastructure Projects in the United States, U.S. Department of Transportation, Federal Highway Administration, Final Report, July 7, 2007.

2. «Նախագծում/շինարարություն/կառավարում»<sup>33</sup> (աշխարհում առավել տարածված գործընկերության տեսակ է, այսպես կոչված օպերատորի մոդելը կամ Design Build Operate - DBO). սովորաբար, երկողմ համաձայնագիր է, որը ենթադրում է մասնավոր հատվածի պատասխանատվություն ստեղծված օբյեկտի ոչ միայն նախագծման և շինարարության, այլ նաև շահագործման համար, իսկ պետական մարմինները պատասխանատու են միայն աշխատանքների ֆինանսավորման համար:

3. «Նախագծում/շինարարություն/ֆինանսավորում/կառավարում»<sup>34</sup> (Design Build Finance Operate – DBFO). աշխատանքների ողջ համալիրը՝ նախագծում, շինարարություն, շահագործում և ֆինանսավորում ամբողջությամբ փոխանցվում է մասնավոր հատվածին (կոնցեսիոններին), իսկ սեփականատեր է մնում պետությունը: Ընդ որում, ֆինանսավորումը ամբողջությամբ կամ մասնակի իրականացվում է տվյալ նախագծի պետության պարտքային պարտավորությունների հաշվին: Մասնավոր հատվածի եկամտի աղբյուր այս դեպքում հանդիսանում են օբյեկտի օգտատերերը: Երբեմն պետությունից գանձվում է վարձավճար կամ, այսպես կոչված, թաքցված վճար, երբ օբյեկտի շահագործման համար վճարում են ոչ թե օգտատերերը, այլ պետությունը (օրինակ, վճարովի մայրուղով երթևեկելու համար): Նախագծի իրականացման հետ կապված ոիսկը այս մոդելի շրջանակներում, կարող է դրվել պայմանագրի ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային կողմի վրա:

#### **Գոյություն ունեցող օբյեկտների շահագործման կազմակերպման նպատակով**

1. Կոնցեսիա «շահագործում և փեխնիկական սպասարկում» (Operations and maintenance Concession – O&M Concession).<sup>35</sup> պետությունը կիրառում է շահագործման և տեխնիկական սպասարկման կոնցեսիոն պայմանագրերը այս աշխատանքի պատասխանատվությունը մասնավոր հատվածին փոխանցելու նպատակով: Այդ համաձայնագրերը ներառում են օբյեկտի սպասարկման և կառավարման ընդգրկուն հայեցակարգային ցանկ, ինչպես նաև կարող են օգտագործվել օբյեկտի և դրա տեխնիկական բարդությունների օգտագործման արդյունավետությունը խթանելու համար: Մասնավոր

<sup>33</sup> U.S. Department of Transportation, Federal Highway Administration:  
[http://www.fhwa.dot.gov/PPP/defined\\_dbom.htm](http://www.fhwa.dot.gov/PPP/defined_dbom.htm)

<sup>34</sup> Նոյն տեղում:

<sup>35</sup> U.S. Department of Transportation, Federal Highway Administration:  
[http://www.fhwa.dot.gov/PPP/defined\\_om.htm](http://www.fhwa.dot.gov/PPP/defined_om.htm)

հատվածին վճարվում է կամ ֆիքսված պարզեցվածար, կամ խրախուսական վարձատրություն, երբ գումարը կախված է մատուցվող ծառայությունների մակարդակից կամ նպատակների իրականացման որակից: Այսպիսով, սեփականատեր-պետությունը իրեն պատկանող օբյեկտի ողջ կենսացիկի շահագործման ամբողջ պատասխանատվությունը փոխանցում է մասնավոր հատվածին՝ ծախսերի առավել արդյունավետ բաշխման և կառավարման ժամանակակից մոտեցումների կիրառման նպատակով:

2. **Երկարաժամկետ վարձակալություն/լիզինգ (Long Term Lease – LTL).** Ենթադրում է գոյություն ունեցող, պետական ֆինանսավորմամբ մասնավորի (կոնցեսիոների) կողմից կառուցված վճարովի հանրային օբյեկտների վարձակալման պայմանագրի (լիզինգի) կնքում: Նշված ժամանակահատվածում, կոնցեսիոներին իրավունք է վերապահվում օբյեկտի երրորդ անձանց կողմից շահագործման համար վճար գանձելու: Բայց փոխարենը, մասնավոր կողմը պետք է կառավարի և շահագործի օբյեկտը, որոշ դեպքերում վերանորոգի (բարելավի), ինչպես նաև վճարի պետությանը հավաքված կոնցեսիոն վճար: Կոնցեսիոները ընտրվում է պետության կողմից մրցութային հիմունքներով, որտեղ հիմնական չափանիշը կոնցեսիոն վճարի չափն է, իսկ լրացուցիչը՝ կոնցեսիոն ժամանակահատվածի տևողությունը, մասնավոր գործընկերոջ հուսալիությունը և վճարունակությունը, կառավարման արհեստավարժության մակարդակը: Երկարաժամկետ վարձակալության LDO<sup>36</sup> զարգացումը խթանող հիմնական գործոններ են. հանրային հատվածի համար - քաղաքական և ֆինանսական իրավիճակը մարզերում և համայնքներում, մասնավոր հատվածի համար լիզինգային հնարավորությունների լիարժեք օգտագործման առաջնային մոտիվացիա է հանդիսանում ներդրումների վերադարձի ցանկալի մակարդակ ապահովելու հեռանկարը:

### **Խառը գիպի մոդել**

«Վարձակալություն/զարգացում/կառավարում» (Lease Develop Operate – LDO)<sup>36</sup> մի մոդել է, երբ սեփականատեր-պետությունը տրամադրում է մասնավոր հատվածին (կոնցեսիոներին) վարձակալության իրավունք գոյություն ունեցող օբյեկտի կառավարման և հետագա զարգացման (ընդլայնում, բարելավում) համար: Մասնավոր կողմը ներդրումներ է կատարում գոյություն ունեցող օբյեկտի բարենորոգման նպատակով

<sup>36</sup> U.S. Department of Transportation, Federal Highway Administration:  
[http://www.fhwa.dot.gov/PPP/defined\\_Ido.htm](http://www.fhwa.dot.gov/PPP/defined_Ido.htm)

ակնկալելով, որ ապագայում շահութաբերության դրական մակարդակի դեպքում այս ներդրումները կվերադարձվեն:

Հաճախ պայմանագրում առկա է «ոչ մի ծառայության առանց վճարի» /«no service no fee»/ կետը, որի համաձայն, ընկերությունը պարտավոր է կատարել աշխատանքները, ըստ պայմանագրում ամրագրված կետերի: Այն դեպքում, եթե ընկերությունը շեղվում է սահմանված որակի չափանիշներից, նա կորցնում է վճարի մի մասը այնքան ժամանակ, քանի որ աշխատանքի որակը չի համապատասխանեցրել որանց: Այն դեպքում, եթե ընկերությունը չի իրականացնում աշխատանքը համաձայնեցված ժամանակահատվածում և որակի չափանիշներին համապատասխան, հանրային հատվածի ներկայացուցիչն իրավունք ունի խզելու պայմանագիրը:

Առավել հաճախ կիրառվող ՀՄԳ մոդելների բնութագրերը տրված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

### ՀՄԳ հիմնական մոդելների բնութագրերը

ՀՄԳ մոդելը	Սեփականություն	Նախագծում	Շինարարություն	Կառավարում	Ֆինանսավորում
«Նախագծում/շինարություն» (DB)	պետություն	մասնավոր հատված	մասնավոր հատված	պետություն/մասնավոր հատված	պետություն
«Նախագծում/շինարություն/կառավարում» (DBOM)	պետություն	մասնավոր հատված	մասնավոր հատված	մասնավոր հատված	պետություն
«Նախագծում/շինարություն/ֆինանսավորում» (DBF)	պետություն	մասնավոր հատված	մասնավոր հատված	պետություն	մասնավոր հատված
«Նախագծում/շինարություն/ֆինանսավորում/կառավարում» (DBFO)	պետություն	մասնավոր հատված	մասնավոր հատված	մասնավոր հատված	մասնավոր հատված
«Շահագործում և տեխնիկական սպասարկում» (O & M Concession)	պետություն	-	-	պետություն/մասնավոր հատված	պետություն
«Երկարաժամկետ վարձակալություն» (լիզինգ) (LTL)	պետություն	-	-	մասնավոր հատված	-
«Վարձակալություն/զարգացում/կառավարում» (LDO)	պետություն	մասնավոր հատված	մասնավոր հատված	մասնավոր հատված	-

Ինչպես կարելի է տեսնել է աղյուսակից ՀՄԳ մոդելները կարող են տարբեր լինել, սակայն բոլոր դեպքերում նպատակների ծևավորման (որոնք պետք է ապահովեն իրենց մասնավոր գործընկերները) և բյուջեի գործիքների օգտագործման, հանրային սեփականության, օրենսդրական ակտերի և այլ հանրային իրավունքների նախագծի ռիսկերի կառավարման մասով առաջատար են մնում հանրային իշխանությունները:

Այսպիսով, ՀՄԳ-ն համատեղ ենթակառուցվածքային նախագծերի կամ հանրային ծառայությունների մատուցման նպատակով հանրային կողմի և մասնավոր հատվածի միջև հարաբերությունների կառուցման մի շարք մոդելների համախումբ է, որը ներառում է նախագծում կողմերի միջև պատասխանատվության, իրավունքների և ռիսկերի բաշխումը, ինչպես նաև ֆինանսական ներգրավվածության աստիճանը: ՀՄԳ միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն կարող են կիրառվել տնտեսության տարբեր ոլորտներում, ինչը պայմանավորված է տվյալ երկրի տնտեսության զարգացվածության աստիճանով և այս ոլորտը կարգավորող օրենսդրանորմատիվային դաշտով:

Վերլուծությունը ցույց տվեց, որ ՀՄԳ նախագծերի իրականացման համապիտանի մոդել գոյություն չունի. դրանցից յուրաքանչյուրը պահանջում է անհատական մոտեցում և համապատասխանեցում ներդրումային նախագծերի մասնակիցների շահերին: ՀՄԳ որոշակի ձևի ընտրությունը պայմանավորված է այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են գործընկերության նպատակը, տևողությունը, նախագծի իրավունքների, պարտավորությունների և ռիսկերի բաշխումը, ֆինանսավորման աղբյուրների հարաբերակցությունը, մասնավոր ներդրումների վերադարձման մեխանիզմները: Օտարերկրյա փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ մեկ երկրի տարբեր ոլորտներում օգտագործում են տարբեր մոդելներ կամ դրանց համադրությունները:

### 1.3. ՀՄԳ համաշխարհային փորձը

Ժամանակակից տնտեսական կառուցակարգի պայմաններում պետությունները չեն կարող ապահովել տնտեսական աճ և սոցիալ-տնտեսական զարգացում՝ առանց մասնավոր հատվածի հետ համագործակցության: Աշխարհում տարբեր ոլորտներում ՀՄԳ նախագծերի իրականացման բավական փորձ է կուտակված: Բազմաթիվ են ՀՄԳ նախագծերը արդյունաբերական ենթակառուցվածքում, նորարարության ոլորտում, ռազմական արդյունաբերության մեջ: Հանրային-մասնավոր գործընկերությունը ներթափանցել է հանրային ենթակառուցվածքների, պետական և համայնքային ծառայությունների բնագավառ: Ոչ բոլոր նախագծերն են հաջողությամբ ավարտվում, սակայն դրանց թիվն օրեցօր աճում է: Յուրաքանչյուր երկրում ՀՄԳ նախագծերի զարգացման ընթացքը տարբեր է: Եթե Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և Իսպանիայի ՀՄԳ շուկաներն արդեն ձևավորվել են և արդիականացնում են համապատասխան կառուցակարգերը, ապա մյուս երկրները դեռ ձևավորման փուլում են: Միևնույն ժամանակ, ԵՄ շատ երկրներ չունեն ՀՄԳ բավարար փորձ, իսկ որոշները ընդհանրապես չեն կիրառել ՀՄԳ նախագծեր: ՀՄԳ զարգացումները կարգավորում են մի շարք միջազգային և վերազգային կազմակերպություններ, ինչպիսիք են Համաշխարհային բանկը<sup>37</sup>, ՄԱԿ-ը<sup>38</sup>, ՏՀՀԿ-ն<sup>39</sup>, ԵՄ-ը<sup>40</sup> և այլն: Որպես ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ-ի ՄՀԳ) նախագծի մաս՝ 2001 թ. ստեղծվել է Զարգացման գլոբալ միավորում (The Global Development Alliance, GDA): GDA մոդելն օգտագործվում է որպես ՀՄԳ նախագծերի միջոցով զարգացող երկրներին օգնելու նոր արդյունավետ միջոց: GDA<sup>41</sup> առաքելությունը պետական և մասնավոր կորպորացիաների ու հիմնադրամների ֆինանսական միջոցների ներգրավումն է ՀՄԳ նախագծերում զուգորդված ԱՄՆ-ի կառավարության տեխնիկական գիտելիքներով և փորձով: GDA նպատակն է զարգացող երկրներում տնտեսական աճի խթանումը, ձեռնարկատիրության զարգացումը, առող-

<sup>37</sup> URL: <http://www.worldbank.org/en/topic/publicprivatepartnerships>

<sup>38</sup> ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, URL: <http://www.un.org/ru/ga/undp/>

<sup>39</sup> Network of Senior Public-Private Partnership Officials. URL: <http://www.oecd.org/gov/budgeting/ppp.htm>

<sup>40</sup> Research in Public Private Partnerships. URL:

[http://ec.europa.eu/research/industrial\\_technologies/research-ppp\\_en.html](http://ec.europa.eu/research/industrial_technologies/research-ppp_en.html)

<sup>41</sup> URL: <http://www.usaid.gov/>

շուրջան ոլորտի բարելավումը, շրջակա միջավայրի խնդիրների լուծումը, կրթության և տեխնոլոգիաների հասանելիության ապահովումը:

Գրեթե բոլոր Երկրների կառավարություններն ունեն արդյունաբերական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման, արտադրության ընդլայնման և արդիականացման խնդիրներ, բայց հաճախ ֆինանսավորման աղբյուրները չեն բավարարում: Ենթակառուցվածքների մաշվածությունը հասարակության համար նոր ծախսերի պատճառ է դառնում, բացասաբար է ազդում աշխատանքի արտադրողականության, արդյունավետության վրա, հանգեցնում է ազգային տնտեսությունների մրցունակության անկման, դիտվում է դժբախտ պատահարների, աղետների աճ: Գրեթե 1.2 միլիարդ մարդ աշխարհում չունի Էլեկտրաէներգիայից օգտվելու հնարավորություն, առնվազն 663 միլիոն մարդ զրկված է խմելու ջրից, մոտ 1 միլիարդ մարդ՝ հիմնականում ցածր եկամուտ ունեցող Երկրներում, չունի անկախ ճանապարհային ենթակառուցվածքներ, ուստի զրկված է հասանելի առողջապահական ծառայություններից, կրթություն ստանալու, առևտուրի և զբաղվածության հնարավորություններից: Ավելի քան 3 միլիարդ մարդ ունի համացանցից օգտվելու հնարավորություն, իսկ 4 միլիարդը զրկված է դրանից (աշխարհի բնակչության 60%-ը՝ հիմնականում զարգացող Երկրներում)<sup>42</sup>:

Ֆինանսներ ներգրավելու և ենթակառուցվածքների բացը լրացնելու համար հսկայածավալ աշխատանք է պահանջվում: Անհրաժեշտ են նորարարական մեխանիզմներ մասնավոր ներդրումներ ներգրավելու համար: Եթե <ՄԳ նախագիծը լավ մշակված է և կիրառվում է հավասարակշոված օրենսդրական միջավայրում, ապա կարող է բավական արդյունավետ գործել հանրային տարբեր ծառայությունների մատուցման ոլորտներում՝ ջրամատակարարման, ջրահեռացման, Էներգետիկայի, տրանսպորտի, հեռահաղորդակցության, առողջապահության և կրթության:

Աշխարհում հանրային-մասնավոր գործընկերությունը ներկայացվում է գործարարության մոդելների և հարաբերությունների լայն շրջանակով: Առավել ընդհանուր իմաստով այն կիրառվում է մասնավոր հատվածի միջոցների օգտագործմամբ՝ հանրային կարիքների բավարարման համար: <ՄԳ նախագծերի իրականացման առաջնային ոլորտների ընտրությունը կախված է տվյալ Երկրի կամ տարածաշրջանի սոցիալ-տնտե-

<sup>42</sup> <http://www.worldbank.org/en/topic/publicprivatepartnerships/overview#1>

սական զարգացման մակարդակից և առաջնահերթություններից: Առանձնացնում են ՀՄԳ զարգացման 3 մակարդակ.

Աղյուսակ 4

#### ՀՄԳ զարգացման մակարդակները<sup>43</sup>

<b>Մակարդակ</b>	
Առաջին	<ul style="list-style-type: none"> <li>▪ Չափորոշիչների և օրենսդրական դաշտի զարգացում</li> <li>▪ ՀՄԳ նախագծերի իրականացման համար պետական մարմնի ստեղծում</li> <li>▪ ՀՄԳ համաձայնագրերի կառուցակարգի մշակում</li> <li>▪ փոխգործակցության համակարգի ստեղծում, բաց շուկայի ապահովում ՀՄԳ մասնակիցների համար</li> <li>▪ այլ երկրների փորձի կիրառում. Արևելյան Եվրոպա, Լատինական Ամերիկա և ԱՊՀ</li> </ul>
Երկրորդ	<ul style="list-style-type: none"> <li>▪ նախարարություններում ՀՄԳ բաժինների ստեղծում</li> <li>▪ նոր կոնցեսիոն մոդելների մշակում</li> <li>▪ ՀՄԳ շուկայի ընդլայնում</li> <li>▪ նոր ֆինանսավորման աղբյուրների խթանում</li> <li>▪ սպասարկման ոլորտի զարգացման նպատակով ՀՄԳ-ների օգտագործում</li> <li>▪ ՀՄԳ նախագծերի թվի աճ այդ ճանապարհն անցած երկրների փորձի հիման վրա. Մեծ Բրիտանիա (դպրոցների, հիվանդանոցների և ռազմական ենթակառուցվածքների կառուցում), Ավստրալիա և Իոլանդիան (ճանապարհաշինություն), Նիդեռլանդներ (մունիցիպալ բնակարանաշինություն)</li> </ul>
Երրորդ	<ul style="list-style-type: none"> <li>▪ ՀՄԳ մոդելների, ռիսկերի հաշվարկման համակարգի կատարելագործում</li> <li>▪ ՀՄԳ պարբերաշրջանի ավելացում, համապատասխան նախագծերում կենսաթոշակային հիմնադրամի ներգրավում</li> <li>▪ ՀՄԳ-ներում կառավարության ներգրավման համակարգի կատարելագործում</li> <li>▪ ՀՄԳ համակարգում աշխատողների ուսուցման որակի բարելավում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Իոլանդիա, ԱՄՆ)</li> </ul>

<sup>43</sup> Кузнецов И.В., Зарубежный опыт государственно-частного партнерства (США, Европа, Канада). Мировая экономика и международные экономические отношения. Экономические науки, №8 (93), 2012, с. 196-201.

Աշխարհում հայտնի ՀՄԳ նախնական ձևերը ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

### ՀՄԳ ձևերը առաջատար երկրներում

<b>Երկիր</b>	<b>ՀՄԳ բնույթը</b>
Մեծ Բրիտանիա (առաջին մասնավոր ֆինանսական նախաձեռնությունը (ՄՖՆ) հիմնադրվել է 1992 թ.)	Մասնավոր ֆինանսական նախաձեռնության (Private financing initiative' PFI) մեխանիզմի բնույթը մասնավոր ներդրումների ներգրավումն է խոշոր հանրային օբյեկտների շինարարության մեջ մասնավոր ներդրողի ծախսերի հետագա փոխհատուցմամբ շահագործման արդյունքում ստացված եկամտի կամ բյուջեի վճարումների հաշվին: Մեխանիզմի առանձնահատկությունները. մասնավոր ներդրողը ներգրավվում է նախագծի հետագա շահագործման կազմակերպման գործընթացում, մինչև իսկ աշխատակազմի ընդունման մեջ՝ որակյալ հանրային ծառայություններ ստանալու նպատակով:
Ֆրանսիա (SEM. օրենսդրական հիմքը դրվել է 1966 - 1983 թթ.)	ՀՄԳ մեխանիզմը ներառում էր «խառը տնտեսության համայնքների» (SEM) գործունեությունը՝ որպես պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի հարաբերությունների միջանկյալ օլակ: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվում են արտոնություններ: Դրանք կրում են ողջ պատասխանատվությունը:
Գերմանիա (կոռպերատիվ շինարարության նախագծերի իրականացում)	Պետության համագործակցությունը մասնավոր նախաձեռնությունների վրա հիմնված ոչ առևտրային կազմակերպությունների հետ, որի դեպքում հարկային արտոնությունների դիմաց որոշակի սահմանափակումներ են դրվում իրենց սեփական բիզնեսի և շահույթ ստանալու քաղաքականության վրա:

Ներկայումս ՀՄԳ տեսակների, ձևերի և կիրառման բնագավառների բազմազանությունը դրանց՝ գործունեության լայն ոլորտներում տարաբնույթ երկարաժամկետ նպատակների լուծման ունիվերսալ կառուցակարգի վերափոխման հիմք է դառնում՝ համապետական նշանակության սոցիալական և ենթակառուցվածքային նախագծերի իրականացումից մինչև հեռանկարային տեխնոլոգիաների ներդրում: Եթե վերլուծենք

ՀՄԳ կիրառությունն ըստ Երկրների՝ կախված Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, պատկերը կփոխվի: Այսպես՝ «Մեծ յոթյակի» Երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Կանադա, Ֆրանսիա, Ճապոնիա) տրանսպորտային ենթակառուցվածքների նախագծերը ՀՄԳ նախագծերում առաջնային չեն, 1-ինը առողջապահությունն է (615 նախագծերից 184-ը), 2-րդը՝ կրթությունը (138 նախագիծ), 3-րդը՝ ճանապարհաշինությունը (92 նախագիծ): Ըստ Երկրների ոլորտային գերակայությունները հետևյալն են. ԱՄՆ-ում՝ ճանապարհաշինությունը (36 նախագծից 32-ը), Մեծ Բրիտանիայում՝ առողջապահությունը (352 նախագծից 123-ը) և կրթությունը (352 նախագծից 113-ը), Գերմանիայում՝ կրթությունը (56 նախագծից 24-ը), Իտալիայում, Կանադայում, Ֆրանսիայում՝ առողջապահությունը և այլն: Սակայն Եվրոպայի և ԱՄՆ տնտեսությունների հիմնական բնագավառը շինարարությունն է և ավտոճանապարհների շահագործումը<sup>44</sup>:

ՀՄԳ նախագծերի ճյուղային տեղայնացումը բազմազան է.

- **Փինանսական հատված,**
- **հասարակական կարգ և անվտանգություն.** մասնավոր ընկերությունների կողմից շահագործվող տրանսպորտում և հասարակական վայրերում կարգի ապահովում (գրոսայգիներ, հանրային շենքեր և այլն),
- **անշարժ գույք.** հանրային օբյեկտների և մունիցիպալ բնակարանաշինություն և շահագործում առևտրային նախագծերի մշակման ու զարգացման իրավունքի դիմաց,
- **կրթություն և բժշկություն.** դպրոցների, հիվանդանոցների շինարարություն և վերազինում մասնավոր ընկերությունների կողմից, որոնք իրավունք են ստանում այլ հողամասերի առևտրային շինարարության և զարգացման,
- **բնապահպանության և գրոսաշրջության ենթակառուցվածքների զարգացում.** գրոսայգիների, արգելոցների, յուրահատուկ բնական օբյեկտների, սպասարկում և զարգացում՝ գուգորդված բնական ռեսուրսների շահագործման իրավունքով, այդ թվում՝ այցելուներից և գրոսաշրջիկներից եկամտի ստացում,

<sup>44</sup> Балашов С., Опыт функционирования ГЧП в развитых странах // Государственно-частное партнерство в условиях кризиса. Сборник материалов конференции. М., 2009, с. 281.

- **հանրային ծառայություններ.** կոմունալ ցանցերի թարմացում և շահագործում, ինչպես նաև նորերի կառուցում (ջրամատակարարում, կոյուղի և այլն), փողոցների մաքրում, աղբահանություն, հանրային տրանսպորտ,
- **հեռահաղորդակցություն.** հեռահաղորդակցության ենթակառուցվածքների ստեղծում և դրանց շահագործման մենաշնորհային իրավունք, որն ուղեկցվում է սպառողներին մատչելի գներով (սակագներով) ծառայություններ մատուցելու հանձնառությամբ,
- **տրանսպորտ.** ճանապարհային շինարարություն, մշտադիտարկում և երթևեկության վերահսկողության համակարգերի շահագործում և սպասարկում, մայրուղիների, օդանավակայանների տերմինալների և ճանապարհային, երկաթուղային, օդային, քաղաքային ու այլ նախագծերի շինարարություն և շահագործում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՄԳ արդյունավետ գործընկերությունը հնարավոր է, եթե առկա են հետևյալ պայմանները. նախ՝ ինչպես և ցանկացած ընկերակցության դեպքում, այս պարագայում ևս գործընկերների շահերը պետք է համընկնեն: Սա առանցքային պայման է ՀՄԳ արդյունավետության համար ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր գործընկերոց տեսանկյունից: Երկրորդ՝ համաշխարհային փորձը ցույց է տվել, որ ՀՄԳ կառուցակարգերը տարբերվում են ոլորտային մասնագիտացմամբ և տարբեր մոդելներով: Երրորդ՝ ՀՄԳ ներդրումների համար ընտրված ոլորտի առաջնահերթությունը կախված է երկրի, տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից: Չորրորդ՝ հաշվի առնելով մարզերում ենթակառուցվածքների ցանցերի բարդ վիճակը, արտաքրութետային միջոցների, կապիտալ վերանորոգման տարածաշրջանային ֆոնդերի հատկացումները, շուկայում ՀՄԳ նախագծերի զարգացման անհրաժեշտություն է զգացվում:

Ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցությամբ ներդրումները զարգացող շուկաներով և զարգացող տնտեսություններով երկրներում 2016 թվականին կտրուկ նվազել են 2015 թ. համեմատությամբ: 2016 թվականին 242 նախագծերում իրականացվել է 71,5 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում, ինչը 37%-ով պակաս է 2015 թ. և 41%-ով՝ 2011-2015 թթ. միջին տարեկան 121.4 միլիարդ ԱՄՆ դոլարի ցուցանիշից: 2015 թ. ենթակառուցվածքային նախագծերում կատարված ներդրումները համեմատաբար կայուն

ցուցանիշ էին գրանցել 2014 թ. 111,7 մլրդ ԱՄՆ դոլարի համեմատությամբ: 2016 թ. ներդրումների նվազման միտումը կարելի է բացատրել Թուրքիայում (2015 թ. ոլորտի առաջատար), ինչպես նաև Հարավային Աֆրիկայում և Պերուում <ՄԳ ներդրումների կտրուկ նվազմամբ<sup>45</sup>: 2015 թ. գրանցվել է ամենախոշոր ներդրում՝ 35,6 մլրդ ԱՄՆ դոլար, որը կատարվել է Թուրքիայի նոր միջազգային օդանավակայանի կառուցման նպատակով, և ներառում է 29,1 մլրդ ԱՄՆ դոլար կոնցեսիոն վճար պետությանը: Ընդհանուր առմամբ, 2015 թ. այստեղ իրականացվել է <ՄԳ Ենթակառուցվածքային յոթ նախագիծ 44,7 մլրդ դոլարի կամ համաշխարհային ներդրումների 40%-ի չափով: 2015 թ. արևային Էներգիայի գործադրման ոլորտում մասնավոր հատվածի մասնակցությամբ կատարված ներդրումները հինգ տարվա ընթացքում աճել են 72%-ով և կազմել միջինը 9,4 մլրդ ԱՄՆ դոլար<sup>46</sup>:

Ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի մասնակցությամբ ներդրումային նախագծերի թիվը նոյնպես նվազել է: 2016 թ. գրանցված նախագծերի քանակը (242) 27%-ով պակաս է 2015 թ. ցուցանիշից (334) և 57%-ով՝ 2011-2015 թթ. տարեկան միջինից (421)<sup>47</sup>:

Զարգացման միջազգային ասոցիացիայի՝ ԶՄԱ (International Development Association' IDA)<sup>48</sup> անդամ երկրները 2016 թ. Ենթակառուցվածքներում մասնավոր մասնակցությամբ ներդրումների չնչին աճ են արձանագրել: ԶՄԱ 7 երկրում 2016 թ. ֆինանսական ավարտին է հասել 2.9 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումային ծավալով 14 նախագիծ, ինչը 8%-ով ավելի է 2015 թ. ցուցանիշից (2.7 միլիարդ ԱՄՆ դոլար):

Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը միակն է, որտեղ Ենթակառուցվածքներում ներդրումների ակտիվության աճ է նկատվել: 2016 թ. այս տարածաշրջանում ներդրումների ծավալը (24.8 մլրդ ԱՄՆ դոլար) 43%-ով գերազանցել է

<sup>45</sup> <https://ppi.worldbank.org/~media/GIAWB/PPI/Documents/Global-Notes/2016-PPI-Update>

<sup>46</sup> 2016 GLOBAL PPI UPDATE, World Bank.


<sup>47</sup> <https://ppi.worldbank.org/~media/GIAWB/PPI/Documents/Global-Notes/2016-PPI-Update>

<sup>48</sup> Զարգացման միջազգային ասոցիացիայի անդամներ են ՄԱԿ-ի 172 անդամ պետություններ և Կոսովոյի Հանրապետությունը: ԶՄԱ կազմի մեջ չեն մտնում Անդորրան, Անտիգոնա և Մարբուդան, Բահրեյնը, Բելառուսը, Բրունեյը, Բուղարիան, Կուկա կղզին, Կուբան, Ճամայկան, Լիխտենշտեյնը, Մալթան, Մոնակոն, Նամիբիան, Նաուրուն, Նիուեն, Հյուսիսային Կորեան, Կատարը, Սան Մարինոն, Սեյշելյան կղզիները, Սուրինամը, Թուրքմենստանը, Ուրուգվայը, Վատիկանը և Վենետիկան:

<https://hy.wikipedia.org/wiki/%D4%B6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6%D5%AB%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1>

2015 թ. ցուցանիշը (17.3 մլրդ ԱՄՆ դոլար), գերազանցել է նաև 2011-2015 թթ. տարեկան միջին 16.7 մլրդ ԱՄՆ դոլար ցուցանիշը: Չինաստանը 2016 թ. տարածաշրջանի առաջատարն էր 11.4 մլրդ ԱՄՆ դոլար ներդրումների ծավալով: Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում 2017 թ. առաջին կիսամյակում գրանցվել է ներդրումների ամենաբարձր մակարդակը, որը կազմել է համաշխարհային ներդրումների ավելի քան մեկ երրորդը:

2017 թ. առաջին կիսամյակում Ենթակառուցվածքներում մասնավոր ներդրումներն աճել են 24%-ով՝ 2016 թ. 29.5 միլիարդ ԱՄՆ դոլարից հասնելով 36.7 միլիարդ դոլարի: Սակայն դա դեռևս 15%-ով ցածր է նախորդ հինգ տարիների նույն ժամանակահատվածի տվյալների միջին ցուցանիշից՝ 43,2 միլիարդ դոլար: Նախագծերի միջին չափը աճել է 3%-ով՝ 2016 թ. 269 մլն ԱՄՆ դոլարից 2017 թ. առաջին կիսամյակում հասնելով 278 մլն ԱՄՆ դոլարի, իսկ նախագծերի թիվը նվազել՝ 138-ից մինչև 132: 2017 թ. առաջին կիսամյակում մեկնարկել է 7 նախագիծ՝ 1 մլրդ ԱՄՆ դոլարից ավելի ներդրումներով:




Գծապատկեր 1. **ՀՄԳ Ենթակառուցվածքներում ներդրումների ընդհանուր ծավալը և նախագծերի քանակը 2016 թ.<sup>49</sup>**

Աղբյուր՝ PPI Database, World Bank, as of June 2017

<sup>49</sup> <https://ppi.worldbank.org/~media/GIAWB/PPI/Documents/Global-Notes/2016-PPI-Update>

Առանց Բրազիլիայի, Հնդկաստանի և Թուրքիայի ցուցանիշների 2016 թ. ներդրումների ծավալը կազմել է 50.3 միլիարդ ԱՄՆ դոլար 157 նախագծերում, ինչը մոտ է վերջին հինգ տարիների ներդրումների միջին տարեկան 50.8 միլիարդ դոլար ցուցանիշին:

*մլրդ ԱՄՆ դոլար*



**Գծապատկեր 2. Համաշխարհային ներդրումների ընդհանուր ծավալը  
(բացառությամբ Բրազիլիայի, Թուրքիայի և Հնդկաստանի ցուցանիշների)<sup>50</sup>**

Աղյուրը՝ *PPI Database, World Bank, as of June 2017*

Աղյուսակ 6

**Ենթակառուցվածքներում ՀՄԳ նախագծերում ներդրումների ծավալների  
տատանումները 2012-2016 թթ. և 2017 թ. առաջին կիսամյակի տվյալներով<sup>51</sup>**

<i>Տարեթիվ</i>	<i>Նախագծերի քանակը</i>	<i>Միջին</i>	<i>Բարձր</i>	<i>Առավելագույն</i>
2012	620	253	68	15,471
2013	409	241	90	3,720
2014	339	328	81	10,653
2015	334	339	81	36,035
2016	277	269	80	6,756
2017 (1-ին կիս.)	132	278	99	4,194

Աղյուրը՝ *PPI Database, World Bank, as of June 2017*

<sup>50</sup> Նոյն տեղում:

<sup>51</sup> [https://ppi.worldbank.org/~media/GIAWB/PPI/Documents/Global-Notes/PPI2017\\_HalfYear\\_Update](https://ppi.worldbank.org/~media/GIAWB/PPI/Documents/Global-Notes/PPI2017_HalfYear_Update)

2016 թ. ՀՄԳ նախագծերում ներդրումների ամենաբարձր մակարդակ ունեցող հինգ երկրներն են Բրազիլիան՝ 15.2 միլիարդ ԱՄՆ դոլար, Չինաստանը՝ 11.4 միլիարդ ԱՄՆ դոլար, Կոլումբիան՝ 10.1 մլրդ ԱՄՆ դոլար, Ինդոնեզիան՝ 6,9 միլիարդ ԱՄՆ դոլար և Ֆիլիպինները՝ 5.4 մլրդ ԱՄՆ դոլար: Նշված երկրները, ընդհանուր հաշվով, ներգրավել են 49.1 մլրդ ԱՄՆ դոլար, որը կազմում է 2016 թ. համաշխարհային ենթակառուցվածքային ներդրումների 69%-ը:

2016 թ. ՀՄԳ ներդրումների առումով առաջատարը Բրազիլիան է, որտեղ էներգետիկայի ոլորտում ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 14.2 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 15.2 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր գործարքների 93%-ն է կազմում: Այս ցուցանիշը ուշագրավ է, քանի որ 2015 թ. 9,12 միլիարդ դոլարի ներդրումը ամենափոքրածավալն է ութ տարիների ընթացքում, իսկ 2016 թ. ներդրումը զգալիորեն պակաս է նախորդ հինգ տարվա 32.9 մլրդ ԱՄՆ դոլար միջին ցուցանիշից: Ուստի՝ ՀՄԳ առաջատար շուկաներից մեկի՝ Բրազիլիայի 2016 թ. ցուցանիշը կարող է ներդրումային շուկայի վերականգնման նշան լինել:

Չինաստանը ևս խոշոր ՀՄԳ շուկա է, որը զգալիորեն ազդում է ենթակառուցվածքներում մասնավոր հատվածի ներդրումների ծավալի վրա՝ 2016 թ. զբաղեցնելով երկրորդ տեղը: Դա պայմանավորված է ՀՄԳ-ների խթանմանն ուղղված կառավարության քաղաքականությամբ: 2016 թ. գործարքների ծավալը կազմել է 11.4 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 75%-ով գերազանցում է նախորդ հինգ տարվա 6.52 ԱՄՆ դոլար միջին տարեկան ցուցանիշը: ՀՄԳ ներդրումների 62%-ը (7,1 մլրդ ԱՄՆ դոլար) իրականացվել է տրանսպորտի ոլորտում:


Կոլումբիայում ՀՄԳ ներդրումները ևս 40% աճ են գրանցել (2015 թ.՝ 7.3 մլրդ, 2016 թ.՝ 10.1 մլրդ ԱՄՆ դոլար): Կատարվել է ՀՄԳ 16 գործարք՝ 14-ը տրանսպորտի, 2-ը էներգետիկայի ոլորտներում:

Ինդոնեզիան 2016 թ. չորրորդն էր ենթակառուցվածքներում ՀՄԳ նախագծերի ներդրումների ծավալով՝ 6,9 մլրդ ԱՄՆ դոլար, որը այս երկրի՝ 10 տարիների ընթացքում ամենաբարձր ցուցանիշն է: ՀՄԳ նախագծերի 93%-ը իրականացվել է էներգետիկայի ոլորտում:

Ֆիլիպիններում ՀՄԳ նախագծերում կատարված ներդրումները կազմել են 5,4 մլրդ

ԱՄՆ դոլար: Իրականացվել է 7 նախագիծ. 3-ը՝ Էներգետիկայի, 3-ը՝ տրանսպորտի և 1-ը՝ ջրամատակարարման ոլորտներում:

Հատինական Ամերիկայի, Կարիբյան ավազանի, Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանները 2016 թ. աչքի են ընկել Ենթակառուցվածքներում ՀՄԳ ներդրումների առավել մեծ ծավալներով: Այստեղ իրականացվել է Ենթակառուցվածքներում համաշխարհային ներդրումների ավելի քան 80%-ը:



### Գծապատկեր 3. 2016 թ. Եվրոպական երկրներում ՀՄԳ նախագծերում իրականացված ներդրումների ծավալներն ըստ ոլորտների

2016 թ. Եվրոպական երկրներում ՀՄԳ ներդրումների զգալի մասն ուղղվել է տրանսպորտի ոլորտ, ինչն այնքան էլ բնորոշ չէ այս տարածաշրջանին, որտեղ ավանդաբար գերակա բնագավառներ են եղել առողջապահությունը, կրթությունը, ճանապարհաշինությունը:<sup>52</sup> 2015 թ. Եվրոպական շուկայում ՀՄԳ գործարքների ֆինանսական համախառն արժեքը կազմել է 15,6 մլրդ եվրո՝ 2014 թ. (18,7 մլրդ եվրո) համեմատությամբ նվազելով 17%-ով: 2015 թ. 49 ՀՄԳ գործարք հասել է ֆինանսական ավարտին՝ 2014 թ. 82 գործարքի դիմաց: Գործարքների միջին արժեքն աճել է՝ հասնելով 319 մլն եվրոյի. 2014 թ. 229 միլիոն եվրո էր: Ավարտին է հասցել իինդ խոշոր գործարք (2014 թ.՝ 11), դրանց ընդհանուր արժեքը 9,6 մլրդ եվրո է, որը ընդհանուր շուկայի 62%-ն է կազմում<sup>53</sup>: Ֆինանսական ճգնաժամից հետո վերականգնվելու համար Եվրոպայի

<sup>52</sup> <http://www.eib.org/epec/what-we-do/index>

<sup>53</sup> Market Update, Review of the European PPP Market in 2015, [http://www.eib.org/epec\\_market\\_update\\_2015\\_en2.pdf](http://www.eib.org/epec_market_update_2015_en2.pdf)

տնտեսությունը խթանման կարիք ունի: Եվրոպական ներդրումային ծրագիրը նախատեսում է ապահովել այդ ներուժը: Եվրոպական ներդրումային բանկի նոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դա առկա է:

Ըստ 2015-2016 թթ. Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) հաստատած նախագծի՝ մինչև 2020 թ. ընդհանուր ներդրումները կկազմեն 544 մլրդ եվրո, ՀՆԱ-ն կավելանա 2.3%-ով, կստեղծվի 2.25 միլիոն աշխատատեղ:

2020 թ. վերջին ներդրումային նախագծի շրջանակներում հաստատված ԵՆԲ վարկերը կկազմեն 161 մլրդ եվրո, ՀՆԱ-ն ԵՄ-ում կավելանա 0.7%-ով, կստեղծվի 690,000 աշխատատեղ<sup>54</sup>:

2015 թ. Եվրոպական շուկայի տրանսպորտի բնագավառում իրականացվել են ավելի քան 9 մլրդ եվրոյի ներդրումներ, ինչը ընդհանուր շուկայի 60%-ն է կազմում: Սակայն գործարքների քանակը զգալիորեն նվազել է (12 գործարք՝ 2014 թ. 23-ի համեմատությամբ): Կրթության ոլորտում ակտիվությունը է նկատվում գործարքների քանակի առումով՝ 15 փակված նախագիծ (2014 թ.՝ 14): 2015 թ. նկատվում է նաև առողջապահության ոլորտում ՀՄԳ նախագծերի աճի միտում, չնայած ֆինանսական ավարտին հասած նախագծերի թիվը նվազել է՝ հասնելով 10-ի (2014 թ.՝ 15), իսկ ընդհանուր արժեքը երկու անգամ աճել է և կազմել 4.2 մլրդ եվրո (2014 թ.՝ 2.2 մլրդ): Հասարակական ծառայությունների ոլորտում գործարքների քանակը, նախորդ տարվա համեմատությամբ կայուն է (7 գործարք), իսկ գործարքների ընդհանուր արժեքը նվազել է (2015 թ. 612 մլն եվրո, 2014 թ.՝ 661 մլն եվրո):<sup>55</sup>

Ընդհանրացնելով Եվրոպական շուկայի 2015 թ. ՀՄԳ նախագծերի տվյալները՝ ստանում ենք հետևյալ պատկերը.

- Ֆինանսական ավարտին է հասցվել 49 ՀՄԳ նախագիծ՝ 15,6 մլրդ եվրո ընդհանուր արժեքով,
- արժեքային առումով, շուկան, 2014 թ. համեմատությամբ, 17% անկում է գրանցել,
- շուկայում առավել ակտիվ է Թուրքիան (արժեքային արտահայտությամբ) և Մեծ Բրիտանիան (նախագծերի թվով),
- 12 երկիր ավարտին է հասցրել առնվազն 1 ՀՄԳ նախագիծ,

<sup>54</sup> [http://www.eib.org/about/key\\_figures/eib-impacts/index.htm](http://www.eib.org/about/key_figures/eib-impacts/index.htm)

<sup>55</sup> [http://www.eib.org/epec/library/epec\\_market\\_update\\_2015\\_en2](http://www.eib.org/epec/library/epec_market_update_2015_en2)

- տրանսպորտի ոլորտը, արժեքային առումով, եղել է ՀՄԳ շուկայի ամենածավալուն հատվածը, իսկ կրթության ոլորտում արձանագրվել են ամենամեծ թվով գործարքներ:<sup>56</sup>

Այսպիսով՝ այն երկրներում, որոնք բնութագրվում են կայացած շուկայական տնտեսությամբ, արտադրողականության և մեկ շնչի հաշվով ՀՆԱ սպառման բարձր մակարդակներով, որտեղ պետությունը երաշխավորում է բարձր սոցիալական պաշտպանություն, որտեղ երկար է կյանքի տևողությունը, առավել հաճախ, տրանսպորտի ոլորտին զուգահեռ, ՀՄԳ նախագծերն իրականացվում են առողջապահության և կրթության ոլորտներում, ինչը թելադրված է պետության քաղաքականությամբ: Այլ զարգացած երկրներում (Ավստրիա, Բելգիա, Դանիա, Ավստրալիա, Իսրայել, Իռլանդիա, Ֆինլանդիա, Իսպանիա, Պորտուգալիա, Հունաստան, Հարավյային Կորեա, Սինգապուր) 1-ին տեղում ՀՄԳ նախագծերով շինարարության և ճանապարհների վերակառուցման (93 նախագիծ) ոլորտներն են, ապա՝ առողջապահության (29 նախագիծ), կրթության (23 նախագիծ) և հանրային բնակարանաշինության (22 նախագիծ) բնագավառները:

Բոլոր երկրներում ՀՄԳ նախագծերի ամփոփ տեղեկատվությունը բացակայում է: Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում ՀՄԳ նախագծերի վերաբերյալ լավագույն տեղեկատվությունը տալիս է Համաշխարհային բանկը և Համաշխարհային բանկի ինստիտուտը: Համաշխարհային բանկը ենթակառուցվածքների զարգացման խնդիրներով զբաղվում է ավելի քան 15 տարի: Ամեն տարի տասնյակ մեծ հրապարակումներ են լինում ենթակառուցվածքի բարեփոխման տարբեր տեսանկյունների վերաբերյալ: Սակայն գրեթե բոլոր նյութերը սահմանափակվում են զարգացող և անցումային երկրների տնտեսությամբ՝ ուսումնասիրությունից դուրս թողնելով ՀՄԳ գործընթացները զարգացած երկրներում:

ՀՄԳ նախագծերին առնչվող հաջողության ազդեցիկ գործոններ են. պայմանագրեր և ուղեկցող օրենսդրական դաշտը մշակող պետական կառույցների փորձը, մասնավոր ընկերությունների կարողությունը՝ համապատասխանեցնելու իրականացվող նախագծի իրական գինը և որակը, բոլոր մասնակիցների կողմից ոիսկը կրելու ունակությունը և այլն: Դադարեցված ՀՄԳ շատ նախագծեր ի սկզբանե անկենսունակ են

---

<sup>56</sup> Market Update, Review of the European PPP Market in 2015,  
[http://www.eib.org/epec\\_market\\_update\\_2015\\_en2.pdf](http://www.eib.org/epec_market_update_2015_en2.pdf)

եղել, և չնայած ծախսված զգալի ռեսուրսներին, ժամանակին և հասարակության մոլորեցմանը, նպատակները չեն իրականացվել: Բնակարանային, տրանսպորտի, էներգետիկայի, կոմունալ ծառայությունների բնագավառներում չիրացված զգալի թվով նախագծերը վկայում են ենթակառուցվածքների ոլորտի կարգավորման տնտեսական դժվարությունների մասին, արտացոլում են իրենց սոցիալ-քաղաքական պատասխանատվությունը՝ հատկապես սոցիալական ուղղվածություն սակագնային քաղաքականության և ծառայությունների որակի ասպարեզում:

ՀՄԳ շուկայի զարգացման առաջին փուլում գտնվող երկրները, որոնց թվում է նաև Հայաստանը, միայն վերջերս են սկսել ձևավորել համապատասխան իրավական դաշտ և ինստիտուցիոնալ միջավայր, կառավարության տարբեր մակարդակներում և գործարարների միջև ծավալել քննարկումներ: <<-ում կիրառված նախագծերի քանակը փոքր է, իսկ ՀՄԳ մոդելները զուրկ են բազմազանությունից: Այս փույի նպատակն է այլ երկրների փորձի և սեփական զարգացումների համապարփակ ուսումնասիրությունը, ինչպես նաև հասարակական կարծիքի և ՀՄԳ մոդելի նախագծերի մշակման փորձագետների խմբի ձևավորումը: ՀՄԳ զարգացման վաղ փուլերում են նաև Չինաստանը, Հնդկաստանը, Սլովակիան, Լատվիան, Չեխիան, Լեհաստանը, Հունգարիան, Բելգիան, Ֆինլանդիան, Մեքսիկան, Բրազիլիան: 1990-ական թվականներին ավելի քան 130 ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներ որդեգրեցին ՀՄԳ ենթակառուցվածքային նախագծերում մասնավոր հատվածին ներգրավելու ուղին<sup>57</sup>:

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) գործունեությունը ինտեգրման գործընթացների՝ արտադրության միջազգայնացման, արտաքին տնտեսական հարաբերությունների արդյունավետության և ընդլայնման պայմաններում պահանջում է պետությունների բազմակողմ համագործակցություն: ԵԱՏՄ-ն կոչված է ապահովելու ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի տեղաշարժի ազատություն, տնտեսության տարբեր ոլորտների համակարգված, միասնական քաղաքականություն: Ենթակառուցվածքի օբյեկտների ֆինանսավորումն ապահովելու համար մասնավոր կապիտալի ներգրավումը ներկա փուլում ոչ միայն տնտեսապես արդարացված և խոստումնալից է, այլև կենսականորեն անհրաժեշտ: Հանրային-մասնավոր գործընկերու-

<sup>57</sup> Левчаков П.А., Финансовое сопровождение целевых программ энергосбережения и формирование энергоэффективной экономики регионов России. Финансы и кредит, № 29, 2013, с. 14–18.

թյունը պետության համար նոր ներդրումային մեխանիզմներից մեկն է, որը կարող է արդյունավետորեն զարգանալ համայնքների կառավարման ոլորտում:

ԵԱՏՄ-ում հատուկ ուշադրություն է դարձվում հանրային-մասնավոր գործակցության զարգացմանը: Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 29.05.2014 №70 որոշմամբ անդամ պետություններին առաջարկվել էր համաշխարհային լավագույն փորձի հիման վրա ձևավորել հանրային-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառումը կարգավորող օրենսդրական դաշտ<sup>58</sup>: 2014 թ. ընդունվեց ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի «Հանրային-մասնավոր գործընկերության մասին» մոդելային օրենքը<sup>59</sup>: Դիտարկելով ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ընդունված նորմատիվական ակտերը՝ կարելի է փաստել, որ հանրային-մասնավոր գործընկերության ոլորտում օրենսդրական բազայի ձևավորման խնդիրը լուծված:

ԵԱՏՄ անդամ պետություններից առաջինը Ռուսաստանի Դաշնությունն ընդունեց «Հանրային-մասնավոր գործընկերության մասին» օրենքը<sup>60</sup>: Այնուհետև «Պետական-մասնավոր գործընկերության մասին» օրենքը ընդունեց Ղազախստանի Հանրապետությունը<sup>61</sup>: Բելառուսը նշված օրենքը ընդունել է 2015 թ., որն ուժի մեջ է մտել 2016 թվականի հուլիսի 2-ին<sup>62</sup>: Հայաստանը և Ղրղզստանը նույնպես հատուկ ուշադրություն են դարձնում հանրային-մասնավոր գործընկերության զարգացմանը: «Ղրղզստանի Հանրապետությունում հանրային-մասնավոր գործընկերության մասին» №7 օրենքի նոր տարբերակն ընդունվել է 2016 թվականի հունիսի 22-ին<sup>63</sup>:

<sup>58</sup> Об основных ориентирах макроэкономической политики государств – членов Таможенного союза и Единого экономического пространства на 2014–2015 годы [Электронный ресурс]: решение Высшего Евразийского экономического совета, №70, 29.05.2014.

<sup>59</sup> О модельном законе «О публично-частном партнерстве» [Электронный ресурс]: постановление Межпарламентской Ассамблеи государств – участников СНГ, №41-9, 28.11.2014.

<sup>60</sup> О государственно-частном партнерстве, муниципально-частном партнерстве в Российской Федерации и внесении изменений в отдельные законодательные акты Российской Федерации [Электронный ресурс]: Федеральный закон России от 13.07.2015, №224-ФЗ // КонсультантПлюс. Россия / ЗАО «КонсультантПлюс», М., 2017.

<sup>61</sup> О государственно-частном партнерстве [Электронный ресурс]: Закон Респ. Казахстан от 31.10.2015, № 379-В ЗРК, в ред. от 08.04.2016 г., №489-В ЗРК // БД Законодательство стран СНГ / ООО СоюзПраво Информ. Режим доступа: [http://base.spinform.ru/show\\_doc.fwx?rgn=80451](http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=80451)

<sup>62</sup> О государственно-частном партнерстве [Электронный ресурс]: Закон Респ. Беларусь, 30.12.2015 №345-З. Консультант Плюс. Беларусь, ООО «ЮрСпектр», Минск, 2016.

<sup>63</sup> О государственно-частном партнерстве в Кыргызской Республике [Электронный ресурс]: Закон Кыргызской Респ. №7 от 22.02.2012, в ред. от 22.06.2016 г., №88. БД Законодательство стран СНГ. ООО СоюзПравоИнформ. Режим доступа: [http://base.spinform.ru/show\\_doc.fwx?rgn=50238](http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=50238)

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է ՀՄԳ զարգացումը երկրում: Հայաստանում ՀՄԳ հիմնական նպատակը փոխահավետ համագործակցության և երկարաժամկետ փոխգործակցության ընդլայնումն է պետության և գործարարության միջև:

Այս առումով, << կառավարությունը քայլեր է ձեռնարկում ինստիտուցիոնալ և օրենսդրական դաշտի ձևավորման ուղղությամբ, որը կկանոնակարգի ՀՄԳ նախագծերի մեխանիզմների գործադրումը և անհրաժեշտ պայմաններ կստեղծի համապատասխան ոլորտներում ՀՄԳ նախագծերի հաջող իրականացման համար:

2008 թ. << Էկոնոմիկայի նախարարությունը ՄԱԿ-ի Զարգացման նախագծի Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ մշակել է ՀՄԳ հայեցակարգ: Հայեցակարգի մշակման ժամանակ հաշվի է առնվել տվյալ բնագավառի համաշխարհային առաջատար փորձը: 2009 թ. հունվարին այդ փաստաթուղթը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Հայեցակարգը, ընդհանուր առմամբ, ՀՄԳ-ն սահմանում է որպես իրավաբանորեն գրանցված հարաբերություններ պետական մարմինների և/կամ Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների ու գործարար սուբյեկտների միջև՝ տեղական համայնքների ենթակայության տակ գտնվող օբյեկտների և պետական գործունեությամբ զբաղվող ոլորտների նկատմամբ՝ հիմնված ռիսկերի պարտադիր բաշխման, շահերի հավասարության և կողմերի ջանքերի համակարգման վրա, ձեռնարկված սոցիալական և հանրային նշանակություն ունեցող նախագծերի առավել արդյունավետ իրականացման համար<sup>64</sup>:

<< կառավարության 2012 թ. սեպտեմբերի 21-ի N1241-Ն որոշմամբ հաստատվել է ՀՄԳ նախագծերի գնահատման և հաստատման կարգը: Ներկայումս հանրային-մասնավոր գործընկերության մասին օրինագծի նախապատրաստական աշխատանքներ են տարվում: Դրա նպատակն է Հայաստանի տնտեսության մեջ հանրային-մասնավոր գործընկերության հիման վրա ներդրումներ ներգրավելու համար իրավական պայմաններ ստեղծելը, ինչպես նաև ծառայությունների որակի բարձրացման և մատչելիության ապահովումը: Կարծում ենք՝ ՀՄԳ օրենքի ընդունումը կհստակեցնի << ՀՄԳ ներդրու-

<sup>64</sup> Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր հատվածների համագործակցության հայեցակարգ, Եր., 2008. <https://www.irtek.am/views/act.aspx?aid=47395>

մային դաշտը, հնարավորություն կտա առավել հստակ տարանջատել ՀՄԳ կառուցակարգերը և ձևերը:

Թեև Հայաստանն այսօր չունի ՀՄԳ ոլորտը կարգավորող օրենք, այդ նախագծերի իրականացումը հնարավոր է դառնում ՀՀ ներդրումային օրենսդրության, գնումների օրենքի և ոլորտի կանոնակարգման շրջանակներում: Հայաստանում ՀՄԳ ձևաչափով արդեն հաջողությամբ իրականացվել են նախագծեր տրանսպորտի և կապի («Զվարթնոց» միջազգային օդանավակայայն<sup>65</sup>, կոնցեսիոն կառավարում, Հայաստանի փոստային կապի ազգային օպերատոր<sup>66</sup>, կոնցեսիոն կառավարում, Հայաստանի փոստային կապի ազգային օպերատոր<sup>67</sup>, հավակարմագրային կառավարում, ջրամատակարարման («Վեռլիա Ջուր» ՓԲԸ<sup>68</sup>, վարձակալության պայմանագիր), կրթության («UWC Դիլջան» միջազգային դպրոց<sup>69</sup>, կոնցեսիոն պայմանագիր) և զբոսաշրջության («Տաթևի վերածնունդ» նախագիծ<sup>70</sup>). Տաթևի վանքի վերակառուցում, վարձակալության պայմանագիր և ճոպանուղու կառուցում, կոնցեսիոն պայմանագիր) ոլորտներում:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ երկրի ենթակառուցվածքային միջավայրի բարելավմանն ուղղված որոնումները հանգեցնում են նորարարական մոտեցումների կիրառման անհրաժեշտությանը, որոնք կապահովեն դրա կայուն զարգացումը: Այսօր աշխարհում ՀՄԳ կառուցակարգերի հանդեպ աճող հետաքրքրությունը դրա վառ ապացույցն է և հիմնականում պայմանավորված է բյուջետային ռեսուրսների սահմանափակության, դրանց ներդրումային ցածր արդյունավետության, արդյունավետ կառավարման և կառավարչական նոր որոշումների ընդունման փորձի բացակայությամբ, ինչը, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, հնարավոր է լուծել ՀՄԳ նախագծերի իրագործման օգնությամբ:

<sup>65</sup> <https://adb.am/listings/zvartnots-international-airport/>

<sup>66</sup> <http://www.ukzhd.am/arm.html>

<sup>67</sup> <https://www.haypost.am/hy/about-haypost>

<sup>68</sup> <https://www.yerevandjur.am/hy/veolia-khowmb>

<sup>69</sup> «Դիլջանի միջազգային դպրոց» ծրագիր, ՀՀ կառավարության 2013 թ. հոկտեմբերի 23-ի N1177-Ն որոշման, հավելված N 1 և <http://www.am.uwc.org/news/?pid=544&nid=8&storyid=30>

<sup>70</sup> <https://www.idea.am/hy/tatev-revival-project>

## ԳԼՈՒԽ 2

### ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՍԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 2.1. ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

##### լիազորությունները և դրանց իրագործման հիմնախնդիրները

Հայաստանի Հանրապետության անկախացման առաջին հինգ տարիներին պահպանվում էր տեղական ինքնակառավարման խորհրդային մոդելը<sup>71</sup>: Ներկայիս համակարգի հիմքերը դրվել են դեռևս 1995 թ., երբ ընդունվեցին ՀՀ սահմանադրությունը և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը (1996 թ.): ՀՀ սահմանադրության 179-րդ հոդվածին համապատասխան՝ համայնքներում իրականացվում է տեղական ինքնակառավարում: Տեղական ինքնակառավարման համակարգի կայացումը ժողովրդավարության ապահովման նախադրյալներից մեկն է:

ՀՀ տեղական ինքնակառավարումը երաշխավորվում է որպես ժողովրդավարության հիմնարար սկզբունք, որի դրույթներից են.

- տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը ազատ ընտրություններով ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համայնքի բնակիչների՝ համայնքային նշանակության հանրային հարցերի լուծմանը մասնակցության միջոցով,
- պետական մարմինների լիազորությունների փոխանցումը տեղական ինքնակառավարման մարմիններին, եթե այդ լիազորություններն առավել արդյունավետ կարող են իրականացվել համայնքներում,
- տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ամբողջականությունն ու բացառիկությունը (տեղական ինքնակառավարման մարմին-

<sup>71</sup> 1987 թ. սեպտեմբերի 1-ի տվյալներով Խորհրդային Հայաստանի տարածքը տրոհված էր 37 գյուղական և 10 քաղաքային շրջանների, 22 հանրապետական, 5 շրջանային ենթակայության քաղաքների, 31 քաղաքատիպ ավանների և 479 գյուղական սովորական բնակավայրերի: Այդ մասին տե՛ս՝ «Հարշատարածքային բաժանում», Հայկական սովորական հանրագիտարան, հատոր 13, Եր., 1987, էջ 19:

ների լիազորությունների իրականացմանը միջամտության դեպքերն ու կարգը սահմանվում են օրենքով),

- տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության համաշափությունը,
- տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանությունը,
- ֆինանսապես թույլ համայնքներին ֆինանսական համահարթեցման միջոցով աջակցությունը,
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության իրապարակայնությունն ու թափանցիկությունը:

Հանրային կառավարման արդյունավետությունը մեծապես պայմանավորվում է իշխանության թևերի միջև լիազորությունների օպտիմալ պատվիրակմամբ և գործառույթների այնպիսի տարանջատմամբ, որը հնարավորություն է ընձեռում ապահովելու դրանց միջև հակակշիռների նպատակահարմար կառուցակարգերի գործադրում: Միաժամանակ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման արդյունավետության վրա ազդում են ներքին և արտաքին միջավայրերի տնտեսական, քաղաքական ու միջազգային բնույթի խիստ դինամիկ, հարափոփոխ և փոխադարձաբար շաղկապված գործոններ<sup>72</sup>: Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի (European charter of local self-government) համաձայն՝ «տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգայի մասը (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ենթական»<sup>73</sup>: Տեղի ունեցավ իշխանության կենտրոնական մարմինների որոշակի գործառույթների և լիազորությունների փոխանցում տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ), որի նպատակն էր բնակչության ներգրավումն այդ գործառույթների իրականացմանը: Հայաստանը, 2002 թ. վավերացրեց Եվրոպական խարտիան և պարտավորվեց իրա-

<sup>72</sup> Սուվարյան Յու.Մ., Հայրապետյան Ռ.Ա., Ասատրյան Ս.Ա., Մնացականյան Տ.Ա., Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Ամբեղջ» մատենաշար, Տնտեսագետ, Եր., 2014, էջ 5:

<sup>73</sup> Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա, հոդված 3, Ստրասբուրգ, 1985:

գործել վերջինիս հոդվածների դրույթները: Այդ դրույթների բովանդակությունը և տրամաբանությունը ամրագրվեց 2002 թ. «Տեղական ինքնակառավարման մասին» <<օրենքում, որը սահմանում է <<տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները, մարմինները, համայնքի պարտադիր խնդիրները և լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, ինչպես նաև կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները: Այս դրույթների համապարփակ ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի առավել հստակ պատկերացում կազմել <<տեղական ինքնակառավարման համակարգում <ՄԳ կառուցակարգերի կիրառման հնարավորությունների, դրանց զարգացման առաջնահերթ ուղղությունների մասին:

<<համայնքներն ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնք տարանջատվում են որպես պարտադիր և կամավոր: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» <<օրենքով, ինչպես նաև <<սահմանադրությամբ<sup>74</sup>: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են **սեփական**՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով **պատվիրակված** պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով: Պետական մարմիններին վերապահված լիազորությունները կարող են օրենքով փոխանցվել համայնքներին՝ որպես պետության պատվիրակած լիազորություններ: Պետության պատվիրակած լիազորություններն իրականացվում են կառավարության կողմից սահմանված կարգով, ամբողջովին և պարտադիր ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին<sup>75</sup>: Տեղական ինքնակառավարման մարմինները օրենքով սահմանված կարգով պարտավոր են առաջնահերթությամբ ապահովել համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների կատարումը, սակայն պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման օրենսդրորեն սահմանված կարգի բացակայությունը լուրջ խոչընդոտներ է

<sup>74</sup> <<սահմանադրություն, գլուխ 9. Տեղական ինքնակառավարումը, հոդված 182. Համայնքի խնդիրները և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները (ընդունված 06.12.2015 թ.):

<sup>75</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» <<օրենքով փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի ՀՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 թ. դեկտեմբերի 16-ի <Օ-237-Ն որոշումը:

ստեղծում այդ լիազորությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների նվազագույն ծավալների սահմանման, դրանց իրականացման նկատմամբ վերահսկողության սահմանման համար: Վերահսկողություն իրականացնող մարմինները պարտադիր լիազորությունների իրականացման չափորոշիչների բացակայության պատճառով չեն կարողանում արդյունավետ վերահսկել և գնահատել ՏԻՄ գործունեությունը: Կառավարությունը դեռևս չի սահմանել վերջիններիս պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման և ֆինանսական ապահովման կարգերը:

Համայնքի կամավոր խնդիրները և դրանց լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման կարգը սահմանվում են ավագանու որոշմամբ: Այլ նորմատիվ իրավական ակտերով տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանված լիազորությունները (բացառությամբ պետության կողմից պատվիրակված լիազորությունների) իրականացվում են որպես սեփական լիազորություններ:

ՏԻՄ լիազորությունների շրջանակը կարելի է պայմանականորեն բաժանել երկու դասի՝ կառավարչական և հարկաբյուջետային (ֆինանսական):

Հայաստանի ներկայիս օրենսդրությունը ՏԻՄ կառավարչական լիազորությունների բավականին լայն շրջանակ է ներառում: Համայնքն ունի իր սեփականությունը կառավարելու և տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու և համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորություններ:

Հարկաբյուջետային (ֆինանսական) լիազորություններն առնչվում են համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի կազմման, դրանց իրականացման նկատմամբ վերահսկողության, սեփական եկամուտների հավաքագրման գործընթացներին:

«Համայնքների մեծ մասը օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր պատճառներով չի կարողանում ամբողջությամբ իրականացնել իր լիազորությունները, որի հետևանքով ՏԻՄ պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների հիմնական մասը թերակատարվում է կամ չի կատարվում ընդհանրապես: Այսպիսով՝ տեղական ինքնակառավարման օրենսդրորեն սահմանված իրավունքները հաշվի չեն առնում համայնքների՝ այդ իրավունքների իրացման հնարավորությունները և կարողությունները: Թեևս տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով տրված լիազորությունները 2003-2017 թթ. ընթացքում որոշակիորեն փոփոխվել և լրացվել են, սակայն արմատական փոփոխություններ դեռ չեն կատարվել:



Գծապատկեր 4. << ՏԻՄ լիազորությունները և խնդիրները<sup>76</sup>

<sup>76</sup> Կազմել է հեղինակը՝ ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» <<օրենքի:

2016 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» <<օրենքում փոփոխություն կատարելու մասին» <<օրենքի սահմաններում կատարվել են մի շարք փոփոխություններ ՏԻՄ իրավասությունների և լիազորությունների կազմում: Մասնավորապես՝ համայնքի ավագանու իրավասությունները վերածվել են որպես լիազորություններ, որոնք թվով 42-ն են: Համայնքի դեկավարի իրավասությունները հանվել են: Փոփոխվել է նաև ՏԻՄ լիազորությունների նկարագիրը: Համաձայն կատարված փոփոխությունների՝ ՏԻՄ լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, և պետության կողմից պատվիրակված: Օրենքում թվարկված ՏԻՄ սեփական լիազորություններն ուղղված են բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը. դրանք 20-ն են:

Ամփոփելով կարելի է նշել, որ 2016 թ. տարեվերջի դրությամբ համայնքի դեկավարներին «Տեղական ինքնակառավարման մասին» <<օրենքով վերապահված սեփական լիազորությունները 116 են, իսկ պատվիրակված լիազորությունները՝ 34-ը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» <<օրենքում 2016 թ. ընթացքում համապատասխան փոփոխությունները չեն կատարվել<sup>77</sup>:

Սակայն միայն «Տեղական ինքնակառավարման մասին» <<օրենքում փոփոխություններով հնարավոր չեն լուծել համակարգում առկա խորքային խնդիրները: Հայաստանի բնակչիմայական առանձնահատկությունները, արտադրողական ուժերի ու բնական ռեսուրսների անհամաչափ բաշխումը, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական ու մշակութային տարբերությունները հանգեցրել են տարածքային միավորների զարգացման մակարդակների անհամաչափությունների:

Ուստի 2011 թ. նոյեմբերի 10-ին <<կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջիամայնքային միավորումների ծևավորման հայեցակարգը»: Այսինքն՝ հաստատվեց, որ վարչատարածքային բարեփոխումներն անհրաժեշտ են համայնքների զարգացման շարունակականության ապահովման, համայնքի կողմից առավել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման, խոշորացված համայնքների միավորված ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, հողային

<sup>77</sup> Տեղական ինքնակառավարումը Հայաստանում, գիրք 9, Եր., «Վան Արյան», 2017, էջ 40:

և այլն) առավել արդյունավետ օգտագործման տեսանկյունից<sup>78</sup>: Համայնքների խոշորացման գործընթացի անհրաժեշտությունը կարևորվել է նաև այլ փաստաթղթերում՝ «Հառավարության տարեկան նախագծերում, Կայուն զարգացման ծրագրում, ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում և այլն: Տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման համար համայնքների խոշորացումը սկզբունքային խնդիր է, ինչը կնպաստի ամբողջ վարչատարածքային բաժանման տրամաբանության, կառուցվածքի և բովանդակության վերանայմանը:

Ցանկացած պետության տարածքային անհամաշափություն, սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակների տատանում խոչընդոտում են տնտեսական աճն ու կայուն զարգացումը ինչպես համայնքներում, այնպես էլ ամբողջ Երկրում: Շուկայական տնտեսությանն անցման փուլում այդ անհամաշափություններն ավելի խորանալով՝ հասել են մտահոգիչ մակարդակի, ինչը խոչընդոտում է Հայաստանի ոչ միայն ներքին սոցիալական ու տնտեսական կայունությանը, այլ նաև անվտանգությանը՝ նպաստելով տնտեսապես թույլ զարգացած տարածքներից բնակչության անցանկալի արտահոսքի: Ուստի, տարածքային համաշափ զարգացումը և դրան ուղղված նպատակային քաղաքականության իրականացումը դիտարկվում են որպես Երկրի տարածքային զարգացման գերակայություն:

Տարածքային զարգացման նպատակային քաղաքականությունն ուղղված է «Հարգերում ու համայնքներում տնտեսական աճի խրախուսմանը, զարգացման ցածր մակարդակ ունեցող տարածքների տնտեսական առաջանցիկ զարգացման տեմպերի ապահովմանը և միջնաժամկետ հեռանկարում դրանց մակարդակների աստիճանական մոտեցմանը միջին հանրապետական մակարդակին: Միաժամանակ, այս քաղաքականության նպատակն է ապահովել տարածքների զարգացման համաշափ տեմպեր Երկարաժամկետ հեռանկարում: Զարգացման այս քաղաքականությունը ներառում է մի շարք հիմնարար միջոցառումներ, որոնք կխրախուսեն տարածքներում տնտեսական ու ներդրումային ակտիվության աճը, ինչի արդյունքում ինչպես պետական, այնպես էլ հատկապես մասնավոր ներդրումները Երևանից կվերառուղվեն դեպի «Հայլ քաղաք»

<sup>78</sup> «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» «ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» «ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» «ՀՀ օրենքների ընդունման նախագիծ», Եր, 2017. <https://www.e-draft.am/projects/193/justification>

ներ ու գյուղական բնակավայրեր՝ նպաստելով << տարածքային համալիր զարգացմանը, կիանգեցնի կենսամակարդակի, զբաղվածության ու մարդկային ներուժի բարելավմանը, տարածքային անհամաշափությունների մեղմմանը:

Համայնքների խոշորացման ծրագրի հիմքում դրվել են հետևյալ սկզբունքներն ու ցուցանիշները. համայնքների հեռավորությունը միմյանցից և մոտակա քաղաքային բնակավայրից, տրանսպորտային ենթակառուցվածքների առկայությունը, դրանց անանցելիությունը, յուրաքանչյուր համայնքի էթնիկ առանձնահատկությունները, համայնքների համագործակցության աստիճանը և այլն: Ըստ այդմ՝ ձևավորված տեղական ինքնակառավարման համակարգն իր բնույթով համապատասխանում է խառը տիպի մոդելին, որտեղ համայնքներն ունեն իրենց լիազորությունները և ինքնուրույնության աստիճանը, միևնույն ժամանակ գործում են պետական համակարգի ներսում և հաշվետու են վերին մակարդակին: Չնայած համայնքների ինքնուրույնության աստիճանի բարձրացման իրավական նախադրյալներին, առկա են համար, փաստացի ինքնուրույնության մակարդակը շատ ցածր է: Խնդիրներն ի հայտ են գալիս ոչ թե օրենքների մշակման, այլ իրավունքների իրացման և պարտականությունների ստանձնման փուլում:

Համայնքների խոշորացման արդյունքում ակնկալվող դրական արդյունքներն են.<sup>79</sup>

1. մարդկային ռեսուրսների համախմբումը,
2. համայնքի կառավարման արդյունավետության բարձրացումը,
3. տեղական ինքնակառավարման մարմինների մրցակցային և թափանցիկ ընտրությունների ապահովման հնարավորությունների ընդլայնումը,
4. ենթակառուցվածքների զարգացումը և ծառայությունների արդյունավետության ու որակի բարելավումը,
5. ավելի մեծ թվով մարդկանց որակյալ ծառայություններ տրամադրելու հնարավորությունները,
6. ֆինանսական կարողությունների մեծացումը և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդլայնումը,
7. համայնքային զարգացման կապիտալ ծրագրերի իրականացումը և այլն:

<sup>79</sup> Համայնքների խոշորացման և միջիամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ, Եր., 2011, էջ 26-27:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն հանրապետության տարածքը բաժանվում է 10 մարզի և Երևան համայնքի:<sup>80</sup> Վերջինիս սահմանները որոշվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ըստ 2015-2017 թթ. տեղի ունեցած վարչատարածքային փոփոխությունների, ՀՀ-ում կա 502 համայնք, որոնք ներառում են 1005 բնակավայր: Համայնքների խոշորացման արդյունքում ՀՀ վարչատարածքային բաժանումն ունի հետևյալ տեսքը:

Աղյուսակ 7

### **ՀՀ վարչատարածքային բաժանումը և հիմնական բնութագրիչները**

**2018 թ. հունվարի 1-ի դրությամբ<sup>81</sup>**

<b>Մարզ</b>	<b>Տարածքը, (կմ<sup>2</sup>)</b>	<b>Բնակչության թիվը (հազ. մարդ)</b>	<b>Բնակավայրերի քանակը</b>	<b>Համայնքների թիվը</b>
<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>29 743</b>	<b>2 972.9</b>	<b>1 005</b>	<b>502</b>
Երևան	223	1 076.4	1	1
Արագածոտն	2 756	127.9	120	72
Արարատ	2 090	257.4	99	95
Արմավիր	1 242	265.4	98	97
Գեղարքունիք	5 349 <sup>2</sup>	229.2	98	57
Լոռի	3 799	217.8	130	56
Կոտայք	2 086	250.7	69	42
Շիրակ	2 680	236.3	131	42
Սյունիք	4 506	138.6	138	8
Տավուշ	2 704	123.4	66	24
Վայոց ձոր	2 308	49.8	55	8

2017 թ. ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգում շարունակվել է 2015 թվականին սկիզբ առած համայնքների խոշորացման գործընթացը: Ի տարբերություն 2015 թվականի, 2016 թվականին խոշորացման փնջերի թիվը ավելի մեծ է՝ 15 փունչ,

<sup>80</sup> «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, 07.11.1995 թ., ՀՕ-18 (17.06.2016 թ., ՀՕ-100-Ն փոփոխություններով և լրացումներով):

<sup>81</sup> Հայաստանի Հանրապետության ազգային և վիճակագրական ծառայություն.  
[http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_17a\\_520.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_17a_520.pdf)

որոնք ընդգրկված են Շիրակի, Տավուշի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում: «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը<sup>82</sup>, որով սահմանվեցին խոշորացման ենթակա համայնքների առաջին 3 փնջերը (Դիլջան, Թումանյան, Տաթև), փաստացի ուժի մեջ է մտել 2016 թ. հունվարի 9-ին: 2016 թ. հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի համաձայն՝ նախկին 118 համայնքներ, որոնք ընդգրկում էին 135 բնակավայրեր, խոշորացվեցին, և ձևավորվեցին 15 նոր համայնքներ՝ իրենց կենտրոններով:

ՀՀ կառավարության ծրագրի համաձայն՝ խոշորացման գործընթացն ավարտվելու է 2019 թվականին: Արդյունքում՝ համայնքների թիվը, մոտավոր հաշվարկով, կլինի 120-140: Ըստ 2017 թ. նոյեմբերի 5-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների՝ 34 փնջերում ընդգրկվել է 325 համայնք, վերջին խոշորացումից հետո Հայաստանում կա 502 վարչատարածքային միավոր: 2018 թ. նախատեսվում է խոշորացնել 8 մարզերի (բացի Սյունիքի և Վայոց ձորի) դեռևս չխոշորացված համայնքները: Փնջերի կազմը դեռևս քննարկման փուլում է:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումը պայմանավորված է ապակենտրոնացման և ժողովրդավարացման գործընթացների հետ: Բարեփոխումներն այս ոլորտում կատարվում են համակարգային մոտեցումների բացակայության պայմաններում, ինչը նվազեցնում է իրականացվող պետական քաղաքականության արդյունավետությունը:

Ներկայումս համայնքային բյուջետավորումը փաստացի կատարվում է պետական հսկողությամբ՝ տարածքային կառավարման օղակի՝ մարզպետարանի միջոցով: Թեև գույքահարկը և հողի հարկը ամբողջությամբ փոխանցվում են համայնքային բյուջե, դրանց միջոցով, լավագույն դեպքում, ծածկվում է ընդհանուր ծախսերի միայն կեսը: Տեղական հարկերը ապահովում են բյուջեի 30-35%-ը<sup>83</sup>: Առկա է նաև համայնքների կողմից տեղական հարկերի հավաքագրման խնդիր, ինչը առաջացնում է հարկերի գծով պարտքեր՝ ապահովեր, որոնց գոյացման պատճառներից են հարկային վճարում-

<sup>82</sup> «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 24.11.2015 թ., ՀՕ-148-Ն:

<sup>83</sup> «Տարածքային կառավարման և զարգացման նախարարության վերլուծություն 2007-2016 թթ.:

ների ուշացումները: Այդ առումով որոշակիորեն ապահովված են խոշոր քաղաքային բնակավայրերը, որոնցում կենտրոնացած են հարկման աղբյուր հանդիսացող օբյեկտներ՝ գործարաններ, գովազդային վահանակներ, առևտրային կետեր և այլն: Սակայն սրանք նույնպես պետական աջակցության կարիք ունեն: Համահարթեցման մասին օրենքի համաձայն՝ լրահատկացումները կատարվում են տրամադրումը իրականացվում է մեկ շնչին բաժին ընկնող եկամտահարկի, հողի հարկի և գույքահարկի մակարդակի, բնակչության թվաքանակի, պետության կողմից առաջնային օժանդակություն ստանալու անհրաժեշտության ցուցանիշների հիման վրա: Այս համայնքների ցանկը սահմանում է << կառավարությունը՝ հիմք ընդունելով առաջին երկու գործոնների հարաբերական ցուցանիշները: Դուտացիայի տրամադրման նվազագույն շեմը 3.5 մլն դրամ է, որից ցածր հաշվարկված լրահատկացումը նշված չափով է կատարվում: Դա չունի որոշակի նպատակայնություն և ուղղվում է համայնքային բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը: Կա նաև սուբվենցիաների տրամադրման հնարավորություն, որոնք ունեն նախապես սահմանված նպատակ և չեն կարող օգտագործվել այլ կարիքների համար: Ֆինանսական տեսակետից փոքր տեսակարար կշիռ են կազմում նաև պատվիրակված լիազորությունները, որոնց կատարման համար պետությունը պարտավորվում է ֆինանսավորել համայնքը: Բացի տեղական հարկերից և պետական դրամաշնորհներից, բյուջետավորման մասին օրենքը նախատեսում է նաև որոշ հարկատեսակների գծով մասհանումներ համայնքային բյուջեներին (եկամտահարկ, շահութահարկ), ինչպես նաև սահմանում է տեղական տուրքեր: Հարկաբյուջետային (ֆինանսական) լիազորություններն ուղղակիորեն առնչվում են համայնքի զարգացման ծրագրին և բյուջեի կազմմանը, դրանց իրականացման նկատմամբ վերահսկողության, սեփական եկամուտների հավաքագրման գործընթացներին:

Համայնքների բյուջեների ձևավորման հրապարակայնության ապահովման օրենսդրական պահանջը գործնականում լիարժեք չի կատարվում: Ըստ համայնքային ֆինանսների կառավարման ապակենտրոնացված վերահսկողական համակարգի՝ ներքին առլիտորական ինստիտուտի գործառույթները պատշաճ կերպով չեն իրականացվում. շատ համայնքներում չեն մշակվում առլիտի պլաններ, չեն կազմվում բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություններ՝ ներկայացնելով համայնքի ավագանութնարկմանը: Ներքին առլիտի իրականացնող համայնքային ծառայողների մասնագի-

տական կարողությունները և հմտությունները խիստ անբավարար են, նրանք անկախ չեն և հիմնականում գործում են իրենց վերադասի անմիջական ցուցումներով, առողի-տի իրականացումը լավագույն դեպքում սահմանափակվում է ֆինանսական համապատասխանության առողիտում<sup>84</sup>:

Ըստ իրականացված հարցումների՝ << քաղաքացիների մեծ մասը տեղյակ չէ իր համայնքների ֆինանսական խնդիրներից. հարցվածների 91 տոկոսը չգիտի իր համայնքի բյուջեի ծավալը, ճնշող մեծամասնությունը՝ 78 տոկոսը, չի պատկերացնում՝ արդյոք իր համայնքը պարտքեր ունի, թե՛ ոչ, 73 տոկոսը տեղյակ չէ, թե՛ ՏԻՄ-ը ուր է ուղղում տեղական հարկերից, տուրքերից, վճարներից և տուժ-տուգանքներից գոյացած եկամուտները: <ամայնքի պարտքերի մասին պատկերացում ունեցող քաղաքացիների 66.5 տոկոսի տեղեկատվության աղբյուրը շրջապատն է, 16.8 տոկոսինը՝ տեղական հեռուստատեսությունը, 14.8 տոկոսինը՝ ՏԻՄ-ը<sup>85</sup>:

Չնայած տեղական խնդիրների լուծման և բնակչության կարիքների բավարարման տեսանկյունից համայնքային մակարդակում գործում են բավականին բարենպաստ օրենսդրական պայմաններ, այդուհանդերձ, դրանց իրացումը թերի է: Պատճառներից մեկը ոչ բավարար ապակենտրոնացվածությունն է և՛ վարչական, և՛ ֆինանսական տեսանկյուններից: <ամայնքներում օրենսդրական իրավունքի իրացումը անմիջականորեն կապված է պետական ինստիտուտներից համայնքների ֆինանսական անկախությունից: Եթե ՏԻՄ ֆինանսական հնարավորությունները կախում չունենային կենտրոնացված ապարատից, ապա կառավարումը ավելի արդյունավետ կլիներ: <ամայնքային մակարդակում բնակչության կարիքներն ավելի հեշտ է բացահայտել և բավարարել՝ ստանալով անմիջական արձագանք կառավարման հետագա շտկումների համար: Ապակենտրոնացվածության աստիճանի բարձրացման ուղի կարելի է համարել համայնքներում ֆինանսական անկախության նոր հնարավորությունների բացահայտումը: <իմնական շեշտը պետք է դնել սեփական եկամուտների ավելացման վրա՝ գույքային և հողային բազայի արդյունավետ օգտագործման միջոցով: Այդ նպատակի իրագործման միջոց է համայնքներում մասնավոր հատվածի հետ սերտ գործընկե-

<sup>84</sup> Տե՛ս <այսատանի <անրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ, Եր., 2012:

<sup>85</sup> Բարեփոխումների երկար ճանապարհին. << տեղական ինքնակառավարման համակարգը քաղաքացիների աչքերով, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության գեկուց, 2016, էջ 5-7:

րության վրա հիմնված տնտեսական, արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների վերականգնումը և/կամ ձևավորումը, ինչպես նաև հիմնարար ծառայությունների հավասար հասանելիությունն ու մատչելիությունը:

Հանրապետության փոքր ու միջին քաղաքների սոցիալ-տնտեսական զարգացման ցածր տեմպերն այս համայնքներում աղքատության բարձր մակարդակի (միջին հանրապետականի, Երևանի ու գյուղական համայնքների համեմատությամբ) և բնակչության արտահոսքի պատճառ են դարձել, և տարածքային զարգացման նպատակային քաղաքականությունը պետք է ուղղված լինի դրանց զարգացմանը, ինչը միջնաժամկետ հեռանկարում աստիճանաբար կմոտեցնի այդ համայնքների զարգացման տեմպերը միջին հանրապետականին:

Գյուղական համայնքների զարգացման անհամաշափությունների մեղմման հարցում անհրաժեշտ է տնտեսական ու ներդրումային ակտիվությունը, համայնքային միջիամայնքային ենթակառուցվածքների զարգացումը, համայնքային ու հանրային ծառայությունների հասանելիությունն ու որակի բարձրացումը խրախուսող քաղաքականություն, ինչը կհանգեցնի համայնքների ֆինանսական ինքնուրույնության աճի: Կարևոր է նաև պատվիրակված լիազորությունների ինստիտուտի զարգացումն ու կիրառման շրջանակների ընդլայնումը:

Տարածքային զարգացման անհամաշափությունների մեղմմանը ուղղված նպատակային համալիր քաղաքականությունը պետք է մի կողմից՝ ապահովի տարածքային ձեռնարկատիրական և ներդրումային միջավայրերի, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման որակի կտրուկ բարձրացումը, իսկ մյուս կողմից՝ պետություն-տեղական ինքնակառավարում-մասնավոր հատված համագործակցության խրախուսումն ու զարգացումը:

Բացի այդ, անհրաժեշտ է որոշակի փոփոխություններ կատարել հարկային քաղաքականության մեջ, մասնավորապես առևտրային ընկերությունների պարագայում, օժանդակելով ոչ միայն սուբյեկտի՝ Երևան քաղաքից դուրս իրավական գրանցմանը, այլև դրա հիմնական գործունեության իրականացմանը մարզերում: Ներկայում յուրաքանչյուր համայնք ինքնուրույն է վարչական որոշումների կայացման հարցում, սակայն ֆինանսական ապահովածությունը վերապահված է կենտրոնական իշխանությանը: Տեղական իշխանության մարմինները սեփական խնդիրները լուծելու տեսանկյունից

ունեն ցածր մոտիվացիա և շահագրգոված չեն կրելու ֆինանսական, վարչական ամբողջ պատասխանատվությունը:

Համայնքի ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման առումով կարևորվում է արդյունավետ ռազմավարական պլանավորումը: Հայաստանի բոլոր համայնքներն ունեն զարգացման հնգամյա ծրագիր, սակայն դրանք հիմնականում չեն արտացոլում իրական վիճակը: Ավելին՝ համայնքների զարգացման ծրագրերը համապատասխանեցված չեն ինչպես պետական ռազմավարական, այնպես էլ մարզի զարգացման ծրագրերին: Հարկ է նշված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը մոտենալ մեծ պատասխանատվությամբ և պրոֆեսիոնալիզմով: Այդ նպատակով << կառավարությունը, ի դեմս տարածքային կառավարման և զարգացման նախարարության, քայլեր է ձեռնարկում առավել իրատեսական, համայնքի զարգացմանը նպաստող միջոցառումներ և գործարարությանն աջակցող ծրագրեր մշակելու համար<sup>86</sup>:

Այսօր աստիճանաբար ամրապնդվում է այն տեսակետը, որ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման համար անհրաժեշտ է արդիական, ավելի արդյունավետ մեթոդների կիրառում: Սակայն այս ոլորտում բարեփոխումներն իրականացվում են համակարգային մոտեցումների բացակայության պայմաններում, ինչը կասկածի տակ է դնում պետական քաղաքականության արդյունավետությունը: Զարգացման նոր համակարգի ծևավորումը ենթադրում է բոլոր շահագրգիռ կողմերի (հասարակություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, համայնք, երկիր) շահերի դիտարկում: Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը պահանջում է կառավարման տեխնոլոգիաների ընդգրկուն համակարգի առկայություն, որը հնարավորություն կտա գնահատելու հեռանկարային ուղղությունները, ինչպես նաև հավասարակշռելու գերակայությունները և զարգացման տեմպերը գոյություն ունեցող ռեսուրսներով:

Ռազմավարական պլանավորման Էռլեյյունը համայնքի սեփական ռեսուրսների, ինչպես նաև ներքին ու արտաքին գործոնների հիման վրա ապագայի տեսլականի կառուցումն է և դրան հասնելու քայլերի ու միջոցառումների առաջադրումը: Բնակչության բարեկեցության աճը և կյանքի որակի բարելավումը համայնքում սոցիալ-տնտեսական

<sup>86</sup> Դավիթ Լորյանի Ելոյթը ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնֆերենսի լիազումար նիստում, 21 հոկտեմբերի 2016 թ.:

զարգացման հիմնական ռազմավարական առաջնահերթություններից են ինչպես արտերկրում, այնպես էլ հայրենական իրականության մեջ<sup>87</sup>: Նշանակալի դերակատարություն ունի նաև համայնքի մրցունակության մակարդակը, քանի որ դա թույլ է տալիս ճիշտ գնահատել տնտեսական առաջընթացի շարժիչ ուժը, ինչպես նաև արտացոլում է ժամանակակից պայմաններին համապատասխանող որակով և արժեքով պարտականությունների կատարման կարողությունը: Առաջին հերթին դա արտահայտվում է հանրային և մասնավոր գործընկերությամբ (ՀՄԳ) իրականացվող նախագծերում: ՀՄԳ նախագիծը «փոխկապված միջոցառումների համակարգ է՝ նպատակառությված սահմանված ժամանակահատվածում, նախատեսված բյուջեով և պահանջվող որակով առաջադրված նպատակի իրագործմանը»<sup>88</sup>: ՀՄԳ զարգացման նախագծերի իրականացումը համայնքների աջակցման լավագույն տարբերակն է սահմանափակ բյուջեի պայմաններում: Սակայն այստեղ ևս կան լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ: Վերջին տարիներին տեղական ինքնակառավարման մարմինները նշված նախագծերի իրագործումն ապահովող սկզբունքներ են կիրառում: Համայնքներում հանրային և մասնավոր նախագծերի մի շարք դրույթների ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ տեղական ինքնակառավարման մարմինները կիրառում են գործընկերությանը վերաբերող պետական օրենքներ և նախագծերի նախապատրաստման ու կառավարման իրավական նորմեր՝ գնահատելով դրանց ֆինանսատնտեսական արդյունավետությունը, սահմանելով վերահսկման համապատասխան կարգ:

Համայնքային-գործընկերային նախագծերն իրագործում է գործադիր մարմինը՝ սկզբից մինչև համաձայնագրի ավարտը՝ առանց ներկայացուցչական մարմնի և հասարակության մասնակցության: Փաստորեն, նման պայմաններում գործընկերությունը կարող է միայն որպես համայնքային գույքի և բյուջետային միջոցների օգտագործման օրինական միջոց ծառայել մասնավոր շահերի իրացման համար:

Իրականացված նախագծի արդյունքը դրա արդյունավետության գնահատման ամենակարևոր գործոնն է: Որպես կանոն, դա գնահատվում է տնտեսական, սոցիալական և բնապահպանական տեսանկյուններից: Տնտեսական արդյունքն արտահայտ-

<sup>87</sup> Елькин В.А., Хорохонов Д.Ю., Совершенствование региональной системы анализа социально-экономического развития муниципальных образований, «Известия», ИГЭА, №1(75), 2011.

<sup>88</sup> Кузьмин Е.А., Реализация проектов государственно-частного партнерства в муниципальных образованиях. Интернет-журнал “Региональная экономика и управление”, 2010, №4: <http://region.mcnip.ru>

վում է խնայողությունների և լրացուցիչ եկամուտների ձևով, որը համալրում է համայնքային բյուջեն: Սոցիալական արդյունքը դրսնորվում է կյանքի որակի բարելավման հանդեպ բնակչության շահագրգովածության մեծացմամբ, որը պայմանավորված է լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների շնորհիվ բնակչության եկամուտների աճով, նոր աշխատատեղերի ստեղծմամբ և, առհասարակ, մշակույթի զարգացմամբ<sup>89</sup>: Էկոլոգիական արդյունքը թույլ է տալիս գնահատել և համեմատել ՀՄԳ նախագծերի տնտեսական գործունեության հետևանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Այսպիսով՝ համայնքների համաշափ զարգացման և առկա խնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է բարելավել տարածքային զարգացման ֆինանսավորման համակարգը, ինչը ենթադրում է մի կողմից տարածքային զարգացմանն ուղղվող պետական միջոցների, իսկ մյուս կողմից՝ նույն նպատակին ուղղվող մասնավոր ներդրումների համակարգում, որի ամենաարդյունավետ տարբերակը մասնավոր ներդրուների և հանրային մարմինների համագործակցությունն է հանրային և մասնավոր գործընկերության շրջանակներում:

## 2.2. Հանրային և մասնավոր գործընկերության դրսնորումները

### ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ավելացել է ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածի հետաքրքրությունը հանրային-մասնավոր գործընկերային նախագծերի հանդեպ: Ակտիվացել են պետական մարմինների և փորձագետների քննարկումները աշխարհում լայնորեն կիրառվող ՀՄԳ նախագծերի որոշ մեխանիզմների պայմանների, դրանց կիրառման բացասական և դրական հետևանքների շուրջ: Այդ գործընթացների մասնակիցներ են նաև միջազգային կազմակերպությունները՝ Եվրասիական զարգացման բանկը, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկը, Միջազգային ֆինանսական կորպորացիան, Եվրոպական ներդրումային բանկը, Եվրոպական տնտեսական հանձնաժողովը, Համաշխարհային բանկը և այլն:

<sup>89</sup> Никитенко С.М., Методология управления процессом формирования высокотехнологичных секторов инновационной экономики на мезоуровне: автореф. дис....доктор экон.наук. Новосибирск, 2011.

Անկախ ազգային օրենսդրության առանձնահատկություններից՝ ՀՄԳ-ն պետք է բավարարի հետևյալ պայմանները.

- գործընկերության երկարատև բնույթ,
- գործընկերների միջև ռիսկերի և պատասխանատվության բաշխում, այդ թվում՝ մասնավոր գործընկերոց ներգրավվածություն ոչ միայն հանրային օբյեկտի կառուցմանը, այլ նաև հետագա շահագործմանը (և/կամ արդիականացմանը, և/կամ պահպանմանը),
- մասնավոր գործընկերոց կողմից հանրային ենթակառուցվածքի օբյեկտի կառուցման (և/կամ վերակառուցման, և/կամ արդիականացման) ամբողջական կամ մասնակի ֆինանսավորում:

ՀՄԳ նախագծերի երկարաժամկետ բնույթը պայմանավորված է մասնավոր ներդրումների վերադարձման անհրաժեշտությամբ և այդ նախագծերին բնորոշ բարդությամբ (համաձայնագրի շրջանակներում օբյեկտի կառուցման և շահագործման և/կամ տեխնիկական սպասարկման փուլերի պարտադիր միավորում):

ՀՄԳ համաձայնագրի կնքման ժամկետի որոշումը պայմանավորված է երեք գործոնով.

- 1) ներդրումների վերադարձման ժամկետով,
- 2) մասնավոր գործընկերոց կողմից մատակարարվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների՝ հանրային կողմի պահանջվածությամբ,
- 3) օբյեկտի ինժեներատեխնիկական առանձնահատկություններով (օրինակ՝ պարտադիր կապիտալ վերանորոգման ժամկետով և հաճախականությամբ):

Համագործակցության երկարաժամկետ բնույթով և ֆինանսավորման ու շահագործման փուլերում գործառնական բոլոր անհրաժեշտ պայմանները ձևակերպելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀՄԳ նախագծերի պայմանագրային հարաբերություններն ավելի բարդ են, քան պետական պատվերի կամ պետության և բիզնեսի միջև իրավական հարաբերությունների այլ տեսակների դեպքում: Որպես հետևյան՝ ՀՄԳ նախագծերի նախապատրաստական, մինչնախագծային աշխատանքներն ավելի բարձր արժեք ունեն և ավելի երկար ժամանակ են պահանջում ինչպես հանրային և մասնավոր գործընկերոց միջև նախագծի պայմանների համաձայնեցման, այնպես էլ մասնավոր գործընկերոց ընտրության փուլերում:

Գործընկերային հարաբերությունները կարող են ձևավորվել իշխանության պետական, մարզային, համայնքային մակարդակներում, որոնք տարբերվում են լիազորությունների սահմանափակության աստիճանով և դրանից բխող գործընկերային համաձայնագրերի կնքման պայմաններով: Պետական մակարդակով կնքված համաձայնագրերն առավել առաջգական են: Համայնքային մակարդակում իրականացվող նախագծերն ավելի սահմանափակ հնարավորություններ են ընձեռում: Միաժամանակ, գործարարության այն հատվածի համար, որը չունի ակտիվ շուկայական մասնակցություն, համայնքային մակարդակում համագործակցությունը գործունեության լավ հնարավորություններ է ընձեռում:

**Մեր կարծիքով՝ *համայնքային-մասնավոր գործընկերությունը պեղական ինքնակառավարման մարմինների և գնդեսավարող սուբյեկտների միջև միջին և երկարաժամկետ փոխշահավետ գործընկերության (համագործակցության) ձևերի և մեխանիզմների ամբողջությունն է՝ համայնքի բարածքում հանրային նշանակության նախագծերի իրականացման նպատակով:***

Տեղական ինքնակառավարման համակարգում հանրային-մասնավոր գործընկերությունը պետության մակարդակում իրականացվող հանրային-մասնավոր գործընկերությունից հիմնականում տարբերվում է նախագծերի ծավալով: Որպես կանոն, պետությունը հանրային-մասնավոր գործընկերության նախագծերում ներգրավվում է տնտեսության առանձին ոլորտների կամ տարածաշրջանի զարգացման նպատակով: Համայնքները հետաքրքրված են ավելի փոքր նախագծերով: Այս տարբերությունները չեն փոխում նախագծերի նախապատրաստման և իրականացման սկզբունքները, բայց որոշում են նախագծի ձևի և մոդելների ընտրությունը: Սակայն պետությունը, շահագրգուված լինելով հանրային-մասնավոր համագործակցության խոշոր նախագծերի կենսագործմամբ, ոչ միշտ կարող է դրանք իրականացնել առանց տեղական իշխանությունների հետ համագործակցելու: Դա պայմանավորված է նախագծերի նախապատրաստման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության տակ գտնվող տարածքային պլանավորման փաստաթղթերի, հողահատկացման, շինարարության իրավունքի թույլտվության և այլ հարցերը տեղական իշխանությունների հետ համաձայնեցնելու պահանջով: Հետևաբար՝ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությունը հանրային-մասնա-

վոր գործընկերության նախագծերի իրականացման ընթացքում հիմնականում անխուսափելի է: Տեղական ինքնակառավարման մարմիններն ավելի շահադրդված են ներդրումներ ներգրավելու համայնք, բայց, միևնույն ժամանակ, շատ ավելի քիչ հնարավորություն ունեն քիզնես գործընկերներին շահագրգուելու: Փաստորեն, տեղական ինքնակառավարման մարմինները պետք է քաղաքականություն վարեն ոչ միայն մասնավոր ներդրումներ ներգրավելու, այլ նաև պետական մարմինների շահագրգուելու ուղղությամբ:

Համայնքները, համայնքային կազմակերպությունների և համայնքապետարանների աշխատակազմերի միջոցով, բնակչությանը տրամադրում են բազմաթիվ ծառայություններ՝ աղբահանություն, սանհিটարական մաքրում, համայնքի տարածքի կանաչապատում, համայնքի բարեկարգում, ճանապարհների կառուցում և շահագործում, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների կառուցման ավարտի՝ ավարտական ակտով փաստագրման ձևակերպում, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների տրամադրում և այլն<sup>90</sup>:

Հայտնի են ՀՄԳ բազմաթիվ տարբերակներ՝ սկսած պարզ հավատարմագրային կառավարման պայմանագրերից մինչև համայնքային գույքի մասնավորեցում կամ համատեղ ձեռնարկության ստեղծում (տե՛ս ՀՀ կառավարության 2009 թ. հունվարի 29-ի նիստի թիվ 4 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր հատվածների համագործակցության հայեցակարգը): Գործընկերության տեսակն ընտրելիս հատկապես կարևորվում են ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ գույքի և ենթակառուցվածքի սեփականության (ծառայություն մատուցելու ընթացքում և դրանից հետո) և ծառայությունների մատուցման ծախսածածկման և ֆինանսական ներդրումների խնդիրները:

**Կառավարման պայմանագիր.** ՀՄԳ ամենապարզ տարբերակն է, ըստ որի համայնքը պայմանագիր է կնքում մասնավոր ընկերության հետ համայնքի անոնից և համայնքի գույքով բնակիչներին և ծառայությունների շահառուներին ծառայություններ

<sup>90</sup> Համայնքների կողմից տրամադրվող ծառայությունները մասնավոր ընկերություններին, պատվիրակման մեթոդական ցուցումներ, Եր., 2017, [www.mtad.am/files/docs/1602.pdf](http://www.mtad.am/files/docs/1602.pdf)

մատուցելու վերաբերյալ: Այս գործընկերությունն առավել նպատակահարմար է այն պարագայում, երբ ծառայության մատուցման համար գանձվող վճարը բավարար չափով չի ծածկում ծառայության տրամադրման հետ կապված ծախսերը, կամ էլ ծառայության համար վճար չի գանձվում: Կառավարման պայմանագրերը, որպես կանոն, ունենում են համեմատաբար կարճ ժամկետ: Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո մասնավոր գործընկերը համայնքին է վերադարձնում իրեն տրամադրված գույքը կամ ենթակառուցվածքը, որին նա տիրապետել էր պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար: Այս տիպի գործընկերությամբ համայնքն ակնկալում է, որ իր կողմից մատուցվող ծառայությունը մասնավոր ընկերությունը կտրամադրի ավելի բարձր որակով կամ ավելի էժան, կամ երկուսը միասին: Մասնավոր ընկերությունը մատուցած ծառայության դիմաց համայնքից համապատասխան վճար է ստանում: Օրինակ՝ համայնքը կարող է որևէ մասնավոր ընկերության հետ կնքել կառավարման պայմանագիր, համայնքի տարածքում գործող գերեզմանատունը բարեկարգելու կամ համայնքի կանաչապատումը ապահովելու, կամ աղբահանություն իրականացնելու վերաբերյալ՝ պահպանելով տարածքի և գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:

### **«համայնքների կողմից կառավարման պայմանագրի հիման վրա իրականացված հանրային-մասնավոր նախագծերի օրինակներ»**

«Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն» ՓԲԸ (2012 թ.): Բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման պայմանագրի առաջարկը ներկայացվել է «Մեդիքալ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից և կնքվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 954-967-րդ հոդվածների և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համապատասխան՝ մասնավոր կողմի և քաղաքապետարանի միջև (պայմանագրի մարմանաները՝ հավելված 1-ում):

«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲԸ (2014 թ.): Բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվել է «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Երևանի քաղաքապետարանի միջև՝ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 954-967-րդ հոդվածների և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի (պայմանագրի մանրամասները՝ հավելված 2-ում):

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ (2016 թ.): Ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայություններ մատուցող «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման են հանձնվել «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերությանը: Երևան համայնքի անունից հավատարմագրային կառավարչի հետ կնքվել է Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիր մինչև տասը տարի ժամկետով<sup>91</sup> (պայմանագրի մանրամասները՝ հավելված 3-ում):

**Վարձակալական (լիզինգային) պայմանագիր.** տնտեսական և իրավական հարաբերությունների մի ամբողջություն է, որն առաջանում է վարձակալական պայմանագրի իրացման ընթացքում: Մասնավոր հատվածի ընկերությունների հետ վարձակալական փոխհարաբերությունները կարող են երկու տեսակի լինել՝ ա) լիզինգային պայմանագիր, երբ վարձակալը, լիզինգային պայմանագրի ավարտից հետո, ստանում է գույքի նկատմամբ սեփականության իրավունք, թ) վարձակալական պայմանագիր, երբ վարձակալը, վարձակալական պայմանագրի ժամկետի ավարտից հետո, ամբողջ գույքը փոխանցում է համայնքին: Վարձակալական կամ լիզինգային պայմանագիրը վարձակալի կողմից ներդրումային պարտավորություններ չի ենթադրում: Այս տիպի գործընկերության պարագայում մասնավոր ընկերությունը վարձակալում է համայնքին պատկանող գույքը կամ ենթակառուցվածքը և դրանով համայնքին ծառայություն է մատուցում: Լիզինգային պայմանագրով աշխատելու դեպքում մասնավոր ընկերությունը ծառայության շահառուներից որոշակի վճար է ստանում, որի մի մասը, որպես գույքի դիմաց վարձ, վճարում է համայնքին: Մասնավոր ընկերության համար այս մոդելի կիրառումը շահեկան է, երբ հավաքված վճարը գերազանցում է վճարված վարձը: Համայնքի համար այս մոդելի կիրառումը նպատակահարմար է, երբ խնդիր կա բարելավելու տրամադրվող ծառայությունների որակը, կառավարման մակարդակը, և երբ վարձակալության վճարն ավելի մեծ է, քան վարձակալման տրվող գույքից ու ենթակառուցվածքից ստացվող եկամուտը: Վարձակալը չի կարող փոփոխել վարձակալվող գույքի նպատակային նշանակությունը, օրինակ՝ մանկապարտեզի փոխարեն մանկապարտեզի շենքում խաղատուն բացել: Աղքահանության կազմակերպման համար, մասնա-

<sup>91</sup> [www.yerevan.am/am/elders-decisions/655-a/](http://www.yerevan.am/am/elders-decisions/655-a/)

վոր ընկերությունը կարող է վարձակալել համայնքի գույքը՝ մեքենաներ, աղբամաններ և ինքնուրույն հավաքել ծառայության դիմաց վճարները:

### **«Համայնքների կողմից վարձակալական պայմանագրի հիման վրա իրականացված հանրային-մասնավոր նախագծերի օրինակներ»**

«Երևանի ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ (2016 թ.): Այն նախատեսում է «Երևանի ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքի՝ մայրաքաղաքի և հարակից 30 համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործում, վերանորոգում և պահպանություն: Միջազգային օպերատորի ընտրությունն իրականացվել էր Համաշխարհային բանկի հովանու ներքո կազմակերպված միջազգային մրցույթի արդյունքում: Առաջարկը հաջողություն ունեցավ առաջարկվող ծառայություններով տեխնիկական որակի և հաճախորդների համար ծախսային արդյունավետության շնորհիվ: Անցումային երկրներում ջրային ծառայությունների բնագավառում հանրային և մասնավոր հատվածների համագործակցությունը գրավիչ լուծում է բոլոր շահառուների՝ պետական մարմինների, սպառողների և օպերատորի համար (մանրամասները՝ հավելված 4-ում):

«Բեյքի Լայֆ» ՍՊԸ (2015 թ.): Համայնքային սեփականություն հանդիսացող 189.6 քմ տարածքի վարձակալության պայմանագիր է կնքվել (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-րդ, 464-րդ հոդվածները և Երևանի քաղաքապետի 2010 թվականի ապրիլի 12-ի թիվ 1541-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 32-րդ կետի համաձայն) «Բեյքի Լայֆ» ՍՊԸ տնօրենի և Երևանի քաղաքապետարանի միջև: Վարձակալության տրամադրման ժամկետը 47 տարի է:

**Կոնցեսիոն պայմանագիր.** հանրային-մասնավոր գործընկերության շրջանակներում առավել կիրառելի պայմանագրի տեսակ է: Ըստ «Հանրային ոլորտի գնումների 2004/17/ԵՀ կանոնակարգի՝ կոնցեսիաները հանրային ոլորտի գնումների պայմանագրեր են, որոնց հիման վրա կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցումն իրականացվում է բացառապես կառավարման օբյեկտի շահագործումից<sup>92</sup>: Կոնցեսիոն պայմանագրով համայնքի մասնավոր գործընկերը (կոնցեսիոները) իրավունք է ստանում երկարաժամկետ կտրվածքով տն-

<sup>92</sup> Public Procurement Concessions and PPPs in Armenian - sigma - oecd:  
[www.sigmapublications.org/publications/49661670.pdf](http://www.sigmapublications.org/publications/49661670.pdf)

օրինելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ տրամադրելու համայնքային ծառայություններ, որոնք նշված են կոնցեսիոն պայմանագրում:

Գույքը տնօրինելու իրավունքի դիմաց մասնավոր ընկերությունը կոնցեսիոն վճար է վճարում գույքի սեփականատեր համայնքին: Պայմանագրային պարտավորությունները կոնցեսիոնները իրագործում է սեփական միջոցների հաշվին՝ կատարելով բնականոն գործունեության և բարձրորակ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ներդրումներ, օրինակ՝ սարքավորումների ձեռքբերման կամ Ենթակառուցվածքի կառուցման համար: Մասնավոր ընկերությունը, կոնցեսիոն պայմանագրի ժամկետի ավարտից հետո, համայնքին է վերադարձնում համայնքային գույքը (ներառյալ նոր ձեռք բերված գույքը կամ կառուցված Ենթակառուցվածքը): Համայնքային գույքով (որի մի մասը ստեղծվում կամ բարելավվում է սեփական միջոցներով) համայնքային ծառայություններ մատուցելով կոնցեսիոնները շահույթ է ապահովում: Համայնքի համար կոնցեսիոն պայմանագիրը նույնպես շահեկան է, քանի որ Ենթադրվում է, որ մասնավորը հիմնական ակտիվների (գույք և Ենթակառուցվածք) և կառավարման որակի աճ կապահովի:

### **«Համայնքի կողմից կոնցեսիոն պայմանագրի հիման վրա իրականացված հանրային-մասնավոր նախագծի օրինակ»**

«Սյունիքի օդանավակայան» ՍՊԸ (2017 թ.): «Հ Սյունիքի մարզի Սյունիք համայնքի Գաղթական թաղամաս 70 հասցեում գտնվող օդանավակայանը կոնցեսիոն կառավարման իրավունքով, 25 տարի ժամկետով տրամադրվել է «Սյունիքի օդանավակայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Պայմանագիրը կնքվել է՝ դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, հաշվի առնելով «Հ Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամի տնօրենի 2017 թվականի հունիսի 28-ի և օգոստոսի 15-ի գրությունները և համայնքի դեկավարի առաջարկությունը (պայմանագրի մանրամասները՝ հավելված 5-ում):»

**Ներդրումներ Ենթադրող գործընկերություն.** մինչ այժմ դիտարկված մոդելներում համայնքային ծառայությունները մասնավորին պատվիրակելիս համայնքը տրամադրում էր սեփական գույքը: Սակայն «Տեղական ինքնակառավարման մասին» «Հ օրենքով սահմանված համայնքի պարտադիր խնդիրները լուծելու կամ «Տեղական

տուրքերի և վճարների մասին» <<օրենքով համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցվող ծառայությունների համար կարող է նոր ենթակառուցվածքային օբյեկտ կառուցելու անհրաժեշտություն առաջանալ: Այս դեպքերում համայնք-մասնավոր հատված համագործակցության առանցքային խնդիրներ են դառնում նոր օբյեկտի կառուցման ֆինանսավորումը, տնօրինումը և օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը ծառայության մատուցման ընթացքում և դրանից հետո: Օրինակ՝ համայնքն, իր պարտադիր խնդիրների լուծման կամ այլ շրջանակներում, կարող է մասնավորին պատվիրել կառուցել մանկապարտեզի շենք, համայնքային այգի կամ ավտոկայանատեղի: Մասնավորն, իր ֆինանսներով կամ համայնքային համաֆինանսավորմամբ, կարող է կառուցել անհրաժեշտ ենթակառուցվածքը և օգտագործել համապատասխան ծառայություններ մատուցելու համար: Պայմանագրով նախատեսված ժամանակահատվածից հետո կառուցված օբյեկտի սեփականության իրավունքը կամ փոխանցվում է համայնքին, կամ մասնավորին: Կառուցելուց բացի, մասնավորը կարող է նաև նախագծել ենթակառուցվածքային օբյեկտը: Պայմանականորեն այս տիպի գործընկերությունները անվանենք «ներդրումային <ՄԳ-ներ»:

Վերը նկարագրված գործընկերային հարաբերությունները բնորոշ են շահութաբերության բավարար ներուժ ունեցող նախագծերին, օրինակ՝ ավտոկայանատեղերի կառուցումը կամ կենտրոնական ջեռուցման մատակարարումը:

Նման համագործակցությամբ մասնավոր ընկերությունը կարողանում է բավարար շահույթ ապահովել, իսկ համայնքը լուծում է ֆինանսավորման ու կազմակերպչական խնդիրները:

**<<համայնքի կողմից ներդրումներ ենթադրող գործընկերության պայմանագրի հիման վրա իրականացված հանրային-մասնավոր նախագծի օրինակ**

«Դաբլյուհի-բայ-Հիլթն» հյուրանոց (2015 թ.): Հյուրանոցը կառուցվել է հանրային-մասնավոր գործընկերության պայմանագրի շրջանակներում՝ նախկին հեծանվահրապարակի տարածքում, «Ռենկո» ընկերության կողմից: «Դաբլյուհի-բայ-Հիլթն» հյուրանոցը նախկին հեծանվահրապարակի տարածքում կառուցված առաջին շենքն է և զբաղեցնում է 16000 քմ մակերես: 16 ամիս տևած շինարարության ընթացքում «Ռենկո» ընկերությունը ներգրավել է ավելի քան 500 աշխատակից: Պատասխանատուների ներկայացմամբ՝ հյուրանոցի անձնակազմը բաղկացած կլինի մոտ 200 աշխատակիցից:

Ընդհանուր ներդրումը կազմում է 35 մլն ԱՄՆ դոլար: Այս հյուրանոցն առաջին և եզակի «Հիլթն»-ն է Հայաստանում (միջազգային դասակարգմամբ՝ 4S): Ընկերությունը ներկայացրել է նաև Երևան քաղաքի նախկին հեծանվահրապարակի տարածքի օարգագուն նախագիծը, ըստ որի «Ունկո» ընկերությունը նախատեսում է իրականացնել բնապահպանական նախագիծ՝ նախկին հեծանվահրապարակի տարածքի մնացած հատվածի համար՝ ստեղծելով կանաչ տարածքներ և շատրվաններ, ինչի շնորհիվ հանրային և առևտրային հատվածը կրառնա առավել իրապուրիչ: Ընկերությունը նախագծի շինարարական աշխատանքները նախատեսում է իրականացնել 5 տարվա ընթացքում (մինչև 2020 թ.)՝ կատարելով 130-150 մլն եվրոյի ներդրում<sup>93</sup>:

**Խառը.** քանի որ հանրային և համայնքային-մասնավոր գործընկերության ձևերը ՀՀ օրենքով չեն սահմանազատված, ապա կարող են օգտագործվել նաև տարբեր խառը ձևեր կամ նախագծեր:

Ինչպես արդեն նշվել է, հանրային-մասնավոր գործընկերությունը կարող է իրականացվել միայն փոխահավետության դեպքում: Փոխահավետությունը գործընկերության անհրաժեշտ պայմանն է: Սակայն այդպիսի համագործակցության մասնակիցների շահերը տարբեր, հաճախ նույնիսկ իրար հակասող հիմքեր ունեն: Հետևաբար՝ որպեսզի ճիշտ ձևակերպվեն հանրային-մասնավոր գործընկերության պայմանները, պետք է լավ պատկերացնել հանրային և մասնավոր հատվածի շահերի բնույթը: Կարևոր է նաև, որ երկու կողմերն էլ ճիշտ պատկերացում ունենան սեփական և գործընկերության շահերի վերաբերյալ:

**ՀՀ համայնքի կողմից իրականացված հանրային-մասնավոր նախագծի օրինակ**

«Սանիթեք» ՍՊԸ (2014 թ.)<sup>94</sup>: Երևանում աղբահանության գործընթացը կանոնակարգելու նպատակով 2012 թ. հայտարարված միջազգային մրցույթին աշխարհի 8 երկրներից հայտ ներկայացրած մասնագիտացած ընկերություններից 2013-ին ընտրվեցին երկուսը՝ լիբանանյան «Sanitek s.a.r.l» ընկերությունը և հայ-շվեյտական «Էկոգրուա» և «ԼԼ Միլյոքոնսուլտ» ընկերությունների կոնսորցիոնը:

<sup>93</sup> <http://www.yerevancitycentre.doubletree.com>

<sup>94</sup> <https://www.facebook.com/SanitekArmenia/>

«Սանիթեք Հայաստանը» «Սանիթեք Ինքնուրության մասնաճյուղն է: Գլխամասային գրասենյակը գտնվում է Լիբանանում: Ընկերությունը հիմնվել է 2010 թ. սեպտեմբերին Բեյրութում, իսկ 2014 թ. դեկտեմբերից գործում է նաև Հայաստանի մայրաքաղաք Երևանում: Համագործակցում է Ասիայի, Եվրոպայի և Միացյալ Նահանգների մի շարք ընկերությունների հետ:

Երևանի վարչական շրջաններից մի քանիսում աղբահանության աշխատանքներն իրականացնելու համար ընկերությունը սկզբնապես ներդրել է 10 միլիոն եվրո և աշխատանքի ընդունել 150 մարդու, 2015 թ. ավարտին արդեն ներդրումները կազմել են 20 միլիոն եվրո, իսկ աշխատակիցների քանակը՝ 1100:

«Սանիթեք» մատուցում է բազմաբնույթ ծառայություններ՝ սանիտարական մաքրում, աղբահանություն, ձնամաքրման աշխատանքներ, կոմպոստացում, թափոնների այրում, կոշտ և առողջապահական թափոնների համար նախատեսված կայանների կառուցում և շահագործում, սանիտարական աղբավայրերի կառուցում և կառավարում:

Ինստիտուցիոնալ տեսանկյունից գործարարությունը փոխգործակցում է պետական կառուցների հետ հետևյալ ոլորտներում.

- *օրենսդրահրավական*. Երկրում ձեռնարկատիրական գործունեության որոշակի ոլորտները կարգավորող օրենսդրահրավական դաշտի արդիականացում,
- *ֆինանսական*. տնտեսության առանձին ճյուղերի և գործարանների տարբեր նպատակային ծրագրերի իրականացման ֆինանսական աջակցություն,
- *լրնդեսական*. տնտեսական համակարգի զարգացման գործընթացում իշխանությունների և գործարարության հակադիր շահերի կարգավորում,
- *սոցիալական*. սոցիալական հրատապ հարցերի լուծման աջակցություն, օրինակ՝ բարեգործություն, համաֆինանսավորում, հովանավորչություն և այլն,
- *գործընկերության*. համալիր խնդիրների լուծման համար պետության և գործարարության առավել սերտ համագործակցություն (հանրային-մասնավոր գործընկերություն):

ՀՄԳ նախագծերի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է ունենալ զարգացած ինստիտուցիոնալ միջավայր: Սակայն ինստիտուցիոնալ միջավայրի զարգացմանը կարող են խոչընդոտել որոշ գործոններ, որոնք ներկայացված են աղյուսակ 8-ում:


**ՀՀ-ում ՀՄԳ ինստիտուցիոնալ միջավայրի գարգացման խոչընդոտները և  
առաջարկվող լուծումները<sup>95</sup>**

<b>Հիմնական խոչընդոտներ</b>	<b>Առաջարկվող լուծումներ</b>
Տարածաշրջանի գարգացման հիմնարար ռազմավարության բացակայություն: Ծրագրերը հաճախ հատվածային են և նախատեսված չեն համալիր նախագծերի համար:	Յուրաքանչյուր նախագծի իրականացմանը համալիր մոտեցում՝ հաշվի առնելով տարածաշրջանի գարգացման ռազմավարությունը և իրականացվող այլ նախագծերը, կապը նրանց միջև:
Պետության կողմից նախագծի անհամապատասխան կառավարում, կոռուպցիայի հնարավորություն	Փոփոխությունների հաշվառում ոչ միայն նախագծի իրականացման որոշակի, այլև հարակից ոլորտներում:
Կողմերի անհավասարություն	Պետական գույքի վրա մասնավոր հատվածի ներդրումների երաշխավորման համակարգ:
Գործարար մշակույթի ցածր մակարդակ	Կադրերի լրացուցիչ վերապատրաստում և հմտությունների զարգացում, համայնքների միջև փորձի փոխանակում, օտարերկրյա դրական փորձի փոխանակում, ՀՄԳ նախագծերի սկզբունքների ձևավորում:
Կարճաժամկետ պետական բյուջետավորում	Երկարաժամկետ պլանավորման անհրաժեշտությունից ելնելով՝ ֆինանսական պլանավորման վերակազմում:
Վերջնական արդյունքի որակի հանդեպ հանրության վերահսկողության մեխանիզմների բացակայություն	Ներդրումային որոշումների ընդունում, որոնք արտացոլում են նախագծի իրականացման վերջնական արդյունքը ոչ միայն ֆինանսական, այլև սոցիալական ազդեցության տեսանկյունից:

Համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության անհրաժեշտությունը պայմանավորված է այս մեխանիզմին բնորոշ առավելություններով: Այն շահավետ է գործընկերության յուրաքանչյուր կողմի համար (գործարարությանը ապահովում է զար-

<sup>95</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը:

գացմանը նպաստող անհրաժեշտ ռեսուրսներով և ձևավորում է արտադրանքի սպառման շուկա, ինչպես նաև լուծում է համայնքների զարգացման սոցիալ-տնտեսական միշտը խնդիրներ) (գծապատկեր 5):



Գծապատկեր 5. **Տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի փոխհարաբերությունները հանրային-մասնավոր գործընկերության շրջանակներում<sup>96</sup>**

Հանրային կողմը և/կամ համայնքը հանրային-մասնավոր գործունեությունից ակնկալում է:

- 1) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով մասնավոր ներդրումների ներգրավում:
- 2) նախագծի իրագործման ժամկետների կրճատում,
- 3) սեփական ծախսերի կրճատում,

<sup>96</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը:

- 4) համայնքային ծառայությունների որակի բարելավում,
- 5) համայնքային ծառայությունների գների իշեցում,
- 6) նոր տեխնոլոգիաների ներգրավում,
- 7) որակյալ աշխատուժ:

Սակայն միշտ չէ, որ հնարավոր է ապահովել գործընկերային հարաբերությունների արդյունքում ակնկալվող օգուտները: Դրա համար պետք է շահավետ գործարքներ իրականացնել, ստանալ օգուտ և ճիշտ օգտագործել այն: <անրային-մասնավոր գործընկերության ոլորտում կան բազմաթիվ օրինակներ, երբ ակնհայտ օգուտները չեն իրացվել, ինչի հետևանքով գործընկերները նյութական կորուստներ են կրել, կամ նախագիծը ավարտին չի հասցվել:

Մասնավոր կողմի օգուտներն են.

- 1) հաշվարկված շահութաբերության, ներդրումների վերադարձի, նախատեսված շահույթի ստացման բարձր երաշխիքները,
- 2) նախանշված գործընկերային համաձայնագրում որոշակի արտոնությունները, որոնք կնվազեցնեն ծախսերը և կնպաստեն տնտեսական գործունեության արդյունավետությանը,
- 3) երաշխավորված սպառողների կամ սպառման շուկայի առկայությունը,
- 4) ֆինանսավորման երաշխիքը, եթե նախագիծը ենթադրում է համաֆինանսավորում համայնքի բյուջեից,
- 5) գործընկերոջ երաշխավորությամբ վարկերի ստացման ավելի լայն հնարավորությունը,
- 6) երաշխավորված կամ հավանական եկամուտների հաշվարկը գործընկերային համաձայնագրի ընթացքում,
- 7) առանձին ռիսկերի համար համատեղ պատասխանատվության ամրագրումը համաձայնագրում,
- 8) երկարաժամկետ կայուն եկամտի առկայության շնորհիվ մրցակցային առավելությունը,
- 9) հասարակական նշանակությամբ նախագծերի մասնակցությամբ հեղինակության ձեռք բերումը, որը հետագայում կհանգեցնի շուկայում մրցակցային առավելության:

Որպես կանոն, հանրային-մասնավոր համագործակցության նախաձեռնողը հանրային կողմն է: Հետևաբար՝ գործընկերների համար բարենպաստ պայմանների առաջարկելը նախաձեռնող գործընկերոջ գործառույթն է, ինչը պահանջում է դեռ առաջարկների փուլում ձևակերպել գործընկերների շահերի հավասարակշռություն, այլապես գործարարը պարզապես ուշադրության չի արժանացնի այդ առաջարկները:

Երկու կողմերի հավանական օգուտները ենթադրում են նաև հավանական ոիսկեր:

Ենթակառուցվածքային նախագծերում ոիսկերը նախնական ցուցանիշների հավանական փոփոխություններն են, որոնք ազդում են նախագծի կողմերի եկամուտների և ծախսերի վրա:

Անկախ նախագծի իրականացման բնույթից՝ ցանկացած ենթակառուցվածքային նախագիծ ենթակա է ոիսկերի և, որպես կանոն, ենթակառուցվածքային նախագծերի փաստացի արժեքն ավելի բարձր է նախնական արժեքից: Պետական բյուջեի ֆինանսավորմամբ (պետական պետական բյուջե) նախագծերի դեպքում բոլոր ոիսկերը կրում է հանրային կողմը, իսկ ՀՄԳ-ն հնարավորություն է տալիս ոիսկերը բաշխելու կողմերի միջև: Օրինակ՝ շինարարության ծախսերի գերազանցման ոիսկը հիմնականում կրում է մասնավոր կողմը, պահանջարկի ոիսկը՝ երկու կողմերը:

ՀՄԳ նախագծերում ոիսկերի բաշխումը պարտադիր պայման է մասնավոր և հանրային գործընկերների փոխհարաբերություններում, և նախագծի նախապատրաստման ամենամեծ դժվարությունը ծագում է կողմերի միջև ոիսկերի օպտիմալ բաշխման ընթացքում:

Նախագծային ֆինանսավորման տեսության մեջ ենթադրվում է, որ նախագծի իրականացման բոլոր հնարավոր ոիսկերը պետք է փոխանցվեն այն կողմին, որը կարող է լավագույնս հաղթահարել դրանք՝ կազմակերպելով ոիսկերի ավելի արդյունավետ կառավարում: Սակայն ՀՄԳ նախագծերի իրականացման անհաջողությունների հիմնական պատճառներից են կողմերի միջև ոիսկերի օպտիմալ բաշխման բացակայությունը և յուրաքանչյուր կողմի՝ ոիսկի պատասխանատվությունից խուսափելու ձգտումը: Դժվարություններ են առաջանում նաև ոիսկերի հաշվարկման ժամանակ, հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում, որտեղ տնտեսական աճի տեմպերը,

որպես կանոն, ավելի քիչ կանխատեսելի են, ինչը զգալիորեն դժվարացնում է կանխատեսումները:

ՀՄԳ սահմաններում ենթադրվում է ռիսկերի փոխանցում մասնավոր հատվածին, որը կարող է առավել արդյունավետ կառավարել դրանք: Սակայն հնարավոր ռիսկերի համար հանրային կողմը ևս պետք է ստանձնի պատասխանատվության որոշակի մասնաբաժին և աջակցի մասնավոր հատվածին: Ռիսկերի հավասարակշռությունը չափազանց կարևոր է ՀՄԳ զարգացման համար: Նախագծի հաջող մեկնարկի համար հանրային կողմը պետք է նախանշի և առանձնացնի ենթակառուցվածքային ծառայությունների հետ կապված նախագծերի իրականացմանը բնորոշ հիմնական ռիսկերը:

**Ռիսկերի մատրիցի ծևավորում:** Ինչպես հանրային մարմինների, այնպես էլ մասնավոր հատվածի համար ամենաարդյունավետ գործիքներից մեկը ռիսկերի մատրիցի ծևավորումն է նախագծի յուրաքանչյուր փուլի համար, որի հիման վրա որոշվում են ՀՄԳ նախագծին հաղկացվող միջոցների առավել նախընդունելի ուղղությունները: ՀՄԳ նախագծի նախապատրաստման և հետագա մրցույթի փուլում ռիսկերի մատրիցը կարող է օգտագործվել նախագծի իրականացման հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերի ցանկը կազմելու և դրանք սահմանափակելու կամ կանխելու հնարավոր ուղիների նախանշման համար: Բանակցությունների փուլում մատրիցը կարող է օգտագործվել որպես հնարավոր բոլոր ռիսկերի հաշվառումը վերահսկող գործիք, իսկ պայմանագրի ստորագրումից հետո՝ որպես ռիսկերի կանխարգելման միջոց:

Համայնքների համար հանրային-մասնավոր գործընկերության հնարավոր ռիսկերն են.

- 1) համայնքի կողմից լրացնից ֆինանսավորման անհրաժեշտությունը (Եթե դա նախատեսված է համաձայնագրով) կամ նախագծի իրականացման ուղացումը՝ ընդհուապ մինչև դրանից հրաժարվելը սխալ տնտեսական նախագծման կամ շուկայական պայմանների փոփոխությունների հետևանքով,
- 2) կատարողի կողմից նախագծի ժամկետների հետաձգումը,
- 3) սեփական ծախսերի ավելացումը տնտեսական նախագծի սխալ տեխնիկա-տնտեսական հիմնավորման, շուկայական պայմանների փոփոխությունների կամ կարգավորման փոփոխությունների հետևանքով,

- 4) հանրային ծառայությունների որակի անկումը գործընկերոց անբարեխողության կամ ցածր պատրաստվածության հետևանքով,
  - 5) հանրային ծառայությունների արժեքի բարձրացումը նախագծի սխալ տնտեսական հիմնավորման կամ շուկայական պայմանների փոփոխության հետևանքով,
  - 6) հեղինակության կորուստը նախագծի ձախողման դեպքում:
- Մասնավոր կողմի ռիսկերն են.
- 1) քաղաքական գործոնների փոփոխության հետևանքով ընկերակցության գործունեության պայմանների փոփոխությունները (իրավական կարգավորման, հանրային իշխանությունների գերակայությունների փոփոխություններ և այլն),
  - 2) սպառողական նախապատվությունների փոփոխությունները, շուկայական պայմանների փոփոխությունները գործընկերության համաձայնագրի պայմանների վերանայման անհնարինության դեպքում,
  - 3) հաշվարկված շահութաբերության մակարդակներն ապահովելու անկարողությունը կամ շահութաբերության նվազումը շուկայական պայմանների փոփոխությունների կամ տարբեր տնտեսական և քաղաքական գործոնների հետևանքով,
  - 4) պայմանավորված տարբեր քաղաքական գործոններով՝ համայնքի կողմից նախատեսված ֆինանսավորման մակարդակի նվազեցումը,
  - 5) գնահատված եկամտի նվազումը գործընկերային համաձայնագրի ժամկետի ընթացքում,
  - 6) պայմանագրի համատեղ պատասխանատվության ձախողումը,
  - 7) հեղինակության կորուստը նախագծի կամ նախանշված նպատակի ձախողման դեպքում:

ՀՄԳ-ն հանրային և մասնավոր գործընկերներին համատեղ նախագծի իրականացման ընթացքում ռիսկերի բաշխման եզակի հնարավորություն է ընծեռում՝ երկու կողմերին տրամադրելով փոխադարձ լրացուցիչ օժանդակություն նախագծից առավելություններ և օգուտներ ապահովելու համար:

ՀՄԳ նախագծեր արդեն իսկ իրականացվել են << տնտեսական ենթակառուցվածքների յուրաքանչյուր խոշոր հատվածում, ներառյալ՝ Էլեկտրաէներգիայի, հեռահա-

ղորդակցության, ջրամատակարարման, կոմունալ ծառայությունների, փոստային ծառայության և այլն: ՀՄԳ կառուցակարգերը օգտակար են եղել Էներգիայի արտադրության և բաշխման ցանցերի, համապետական մայրուղիների, ջրամատակարարման և այլ ցանցերի վերականգնման և պահպանման գործում: ՀՀ-ում հիմնական ենթակառուցվածքներն արդիականացնելու և գործարկելու համար կիրառվել են ՀՄԳ մոդեների բոլոր հիմնական տեսակները՝ կոնցեսիոն պայմանագիր, օտարում, նոր շինարարություն նախատեսող ծրագրեր, կառավարման և վարձակալության պայմանագրեր: Մասնավորապես՝ հավատարմագրային կառավարում և վարձակալություն՝ ջրամատակարարման, մասնավորեցում՝ Էներգետիկայի և հեռահաղորդակցության ոլորտներում, օդանավակայանի և երկաթգծի շահագործման՝ կոնցեսիա:

Հայաստանում իրականացված ՀՄԳ փորձից կարելի է եզրակացնել, որ համայնքային տնտեսության զարգացման կառավարման համակարգում համագործակցության այս մոդելի կիրառումը կթեթևացնի համայնքի բյուջետային բեռը և կնվազեցնի պետական սուբսիդավորման բաղադրիչը: Համայնքներում որպես ՀՄԳ կառուցակարգերի բարելավման նախաձեռնող, մեր կարծիքով, պետք է հանդես գա պետությունը, քանի որ նա է շահագրգուված նախագծի վերջնական արդյունքում (հանրային ծառայությունների մատուցում), ընդ որում՝ պետությունը պարտավոր է բնակչությանն ապահովել ոչ միայն բարձրորակ, այլև մատչելի ծառայությունների մատուցում: ՀՄԳ նախագծերում մասնավոր կողմի շահերն ավելի ակնհայտ են՝ նախագծի շահութաբերության մակարդակի, զուտ շահույթի և ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում: Ուստի, պետությունն ինքը պետք է իրականացնի համայնքներում ՀՄԳ նախագծերի իրականացման վերլուծություն և ընտրի համապատասխան իրավական, ֆինանսական գործիքակազմեր ՀՄԳ վերահսկողության և արդյունավետության բարձրացման համար:

## **2.3. Հանրային և մասնավոր գործընկերության օրենսդրանորմատիվային կարգավորման կառուցակարգերը <<-ում**

Անկախ ազգային օրենսդրության առանձնահատկություններից՝ կարելի է առանձնացնել ՀՄԳ նախագծի իրագործման համար հետևյալ հիմնական փուլերը.

1. նախաձեռնում, մշակում,
2. գնահատում, հաստատում,
3. մրցութային կարգով մասնավոր գործընկերոջ ընտրության նախապատրաստում և անցկացում, պայմանագրի կնքում,
4. նախաներդրումային փուլ, որը, որպես կանոն, ներառում է՝
  - նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացում,
  - պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքի փոխանցում,
  - մասնավոր գործընկերոջ կողմից նախագծի իրականացման համար ֆինանսավորման ներգրավում,
  - հանրային և մասնավոր գործընկերների փոխգործակցության կանոնակարգերի, ինչպես նաև նախագծի իրականացման համար անհրաժեշտ այլ պայմանագրերի և համաձայնագրերի (հողերի վարձակալության պայմանագրեր, տեխնիկական կանոնակարգեր և այլն) մշակում և հաստատում,
5. ներդրումային փուլ, որի ընթացքում մասնավոր գործընկերը իրականացնում է պայմանագրի օբյեկտի ստեղծում – վերակառուցում – բարելավում – վերազինում, այսինքն՝ իրականացնում է առավելագույն ներդրում,
6. շահագործման փուլ (մասնավոր գործընկերը իրականացնում է նախագծի օբյեկտի տեխնիկական սպասարկում և/կամ շահագործում՝ պայմանագրի համաձայն) և նախագծի ավարտ:

Քանի որ ՀՄԳ-ն նախատեսում է նաև մեկ նախագծի շրջանակներում օբյեկտի շինարարության (վերակառուցում, վերազինում) և շահագործման և/կամ տեխնիկական սպասարկման փուլերի պարտադիր միավորում, ուստի հանրային կողմը պարտավոր է առավել հանգամանալից մշակել նախագիծը, ինչը ենթադրում է.

- Երկարաժամկետ հեռանկարում օբյեկտի պահանջարկի վերլուծություն,
  - ոչ միայն նախագծի օբյեկտի ստեղծման, այլև շահագործման արժեքի գնահատում,
  - նախագծի ողջ կենսապարբերաշրջանի ընթացքում հանրային և մասնավոր կողմերի միջև դիսկրետ տեղաբաշխման օպտիմալ մոդելի մշակում,
  - հողի և այլ գույքային խնդիրների լուծում՝ մինչ պայմանագրի կնքումը և այլն:
- Այս առումով ՀՄԳ մեխանիզմների կիրառումը նախագծային թիմից մեծ ջանքեր և ծախսեր է պահանջում (ֆինանսական և ժամանակային):

**ՀՄԳ նախագիծը պետք է բավարարի հետևյալ պահանջները.**


- հիմնված լինի պետական և համայնքային ռազմավարական, սոցիալ-տնտեսական ոլորտների զարգացման ծրագրերի վրա,
- հաստատվի պետական լիազորված մարմնի կողմից:

#### **ՀՄԳ նախագծի առաջարկ ներկայացնելու կարգը ՀՀ-ում<sup>97</sup>**

Հանրային կողմը նախագծի առաջարկը և հարակից փաստաթղթերը ներկայացնում է ՀՀ կառավարություն, իսկ կրկնօրինակը՝ ՀՄԳ լիազոր մարմին: Կառավարության աշխատակազմը նախագծի առաջարկի հայտը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ վարչապետի հանձնարարությամբ պետք է եզրակացություն ստանալու նպատակով հայտն ուղարկի ֆինանսների ոլորտում պետական լիազոր մարմին, ՀՄԳ լիազոր մարմին, համապատասխան ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին: Այդ գերատեսչությունները, իրենց իրավասությունների շրջանակներում, նախագծի առաջարկի հայտի վերաբերյալ եզրակացությունը 30 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են լիազոր մարմին: Նրանք կարող են նաև իրենց պարտավորությունների կատարման նպատակով նախագծին վերաբերող լրացուցիչ փաստաթղթեր և պարզաբանումներ պահանջել: Հանրային կողմը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Գերատեսչական մարմինները սահմանված ժամանակահատվածում ներկայացնում են իրենց դրական կամ բացասական եզրակացությունները՝ պատճառբանումների և հիմնավորումների հետ միասին: Լիազոր մարմինը եզրակացությունը

<sup>97</sup> ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241 - Ն որոշումը «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման» կարգը հաստատելու մասին:

ստանալուց 20 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է այն և ներկայացնում ՀՀ կառավարության քննարկմանը, որը քննարկում է նախագծի առաջարկի մերժման կամ հաստատման մասին որոշման նախագիծը և 15 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է այն: Եթե ՀՀ կառավարությունը հաստատում է նախագծի առաջարկը, ապա հանրային կողմը, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, իրականացնում է մասնավոր գործընկերոջ ընտրություն: Եթե ՀՀ կառավարությունը մերժում է նախագծի առաջարկը, ապա այն կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով: Նախագծի առաջարկի ներկայացման ընդհանուր կարգը ներկայացված է գծապատկեր 6-ում:



#### Գծապատկեր 6. ՀՄԳ նախագծի առաջարկ ներկայացնելու կարգը ՀՀ-ում<sup>98</sup>

1. Հանրային կողմը նախագծի առաջարկի հաստատման նպատակով ներկայացնում է.

- **նախագծի առաջարկ**, որը ներառում է՝

<sup>98</sup> Կազմել է հեղինակը՝ ըստ ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241 - Ն որոշմամբ հաստատված «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման» կարգի:

- ա. հանրային կողմի անհատականացման տվյալներ,
- բ. նախագծի համառոտ բնութագիր,
- գ. նախագծի իրականացման նպատակով ՀՄԳ մոդելի նկարագրություն,
- դ. ՀՄԳ պայմանագրի նախագիծ,
- ե. մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի և ժամանակացուցի բնութագիր,
- զ. նախագծի իրականացման ուսումնասիրություն, ներառյալ ՀՄԳ մոդելի պլանավորած արժեքի և նախագծի իրականացման բոլոր ծախսերի և դասական (բյուջետային) ֆինանսավորման մոդելի համեմատությունը, պայմանագրով նախատեսվող ժամկետի ընթացքում,
- է. ռիսկերի մատրից, որը ներառում է հանրային և մասնավոր գործընկերների միջև ռիսկերի բաշխումը,
- ը. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ որոշում:
- **փաստաթղթեր՝**
- ա. առաջարկվող նախագծի իրականացմանը հանրային կողմի մասնակցության իրավասությունը հաստատող որոշման կամ այլ իրավական ակտի պատճեն,
- բ. հիմնավորում, որ նախագծի առաջարկը համապատասխանում է հանրային կողմի՝ մինչև այդ ընդունված ռազմավարական և/կամ զարգացման փաստաթղթերին,
- գ. տեղեկատվություն ՀՀ-ում գործող նմանատիպ ՀՄԳ նախագծերի մասին և դրա վրա հիմնված հաշվարկներ:
2. << կառավարությունը եզրակացություն տվող մարմիններին պետք է տրամադրի հանրային կողմի ներկայացրած տեղեկատվությունը՝
- ա. հանրային կողմի անհատականացման տվյալներ,
  - բ. նախագծի առաջարկի համառոտ բնութագիր,
  - գ. առաջարկվող ՀՄԳ մոդելի նկարագրություն,
  - դ. մասնավոր գործընկերոջ ընտրության՝ առաջարկվող ընթացակարգի և ժամանակացուցի համառոտագիր,
  - ե. ռիսկերի մատրից, որն ամփոփում է հանրային կողմի և մասնավոր գործընկերոջ միջև ռիսկերի բաշխում,

գ. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ որոշում:

**Նախագծի կենսունակության գնահատման համար համեմատում** են նախագծի տարբերակները ծախսերի, իրացման ժամկետների և շահութաբերության առումներով: Այդպիսի գնահատման արդյունքում պատվիրատուն պետք է վստահ լինի, որ նախագծից ակնկալվող արդյունքը ողջ կենսապարբերաշրջանի ընթացքում կունենա կայուն պահանջարկ, ինչը կրավարարի նախագծի օբյեկտի շահագործման և տեխնիկական սպասարկման ծախսերի մարմանը և ներդրումներից բավարար հասույթի ստացմանը:

Նախագծի կենսունակության գնահատումը սովորաբար իրականացվում է երկու փուլով.

- 1) այլընտրանքային տարբերակներից ընտրվում է նախագծի առավել կենսունակ տարբերակը,
- 2) նախագծի ընտրված տարբերակի համար որոշվում են նախագծի առավելագույն կենսունակություն ապահովող ֆինանսավորման մեթոդները և ներդրումային կառուցվածքը:

Նախագծի կենսունակությունը գնահատվում է նախագծերի տարբերակների արդյունավետության գնահատման մեթոդով:

**ՀՄԳ նախագծի ֆինանսական իրագործելիությունը:** Այս ցուցանիշը բնութագրում է նախագծի իրագործման ֆինանսական հնարավորությունը: Ֆինանսական անիրազործելիության դեպքում նախագծի ֆինանսավորման սխեման, ինչպես նաև կազմակերպատնտեսական մեխանիզմի որոշ տարրեր պետք է փոփոխվեն: Ֆինանսական իրագործելիությունը ստուգվում է՝ հաշվի առնելով նախագծի բոլոր մասնակիցների, բացառությամբ հանրության, ընդհանուր կապիտալը:

Նախագծի յուրաքանչյուր մասնակիցից ստացվող դրամական միջոցները համարվում են ներհոսքեր (+), իսկ նախագծից յուրաքանչյուր մասնակիցին փոխանցվող միջոցները՝ արտահոսքերը (-): Բացի այդ, դիտարկվում են նախագծի դրամական հոսքերը (այս դեպքում շահույթի և այլ եկամուտների դրամական հոսքերը համարվում են ներհոսքեր (+), իսկ ներդրումային և գործառնական ծախսերը, առանց հարկերի՝ արտահոսքեր (-)):

Այսպիսով, նախագիծը ֆինանսապես իրագործելի է, եթե բոլոր մասնակիցների և նախագծի դրամական ներհոսքերի և արտահոսքերի հանրահաշվական գումարը (ըստ նշանների) ոչ բացասական է<sup>99</sup>:

ՀՀ-ում ՀՄԳ նախագծի գնահատման չափանիշներն են՝<sup>100</sup>

- հանրային հետաքրքրության առկայություն կամ հանրային ծառայության ապահովման անհրաժեշտություն,
- հանրային կողմի՝ նախագիծն իրականացնելու օրինական իրավասություն,
- նախագծի և տվյալ ոլորտում առկա զարգացման ծրագրերի ու ռազմավարությունների համապատասխանություն,
- նախագծի համապատասխանություն բյուջետային կանխատեսումներին, ֆիսկալ ռիսկերին ու սահմանափակումներին,
- նախագծի ֆինանսական և ֆիսկալ կայունություն,
- նախագծի համապատասխանություն ՀՄԳ պետական քաղաքականությանը,
- պարտավորությունների և ռիսկերի բաշխում հանրային և մասնավոր գործընկերների միջև,
- ՀՄԳ նախագծի պայմանագրի համապատասխանություն ՀՄԳ պայմանագրերի օրինակելի ձևով սահմանված բովանդակությանը ներկայացվող պարտադիր պահանջներին,
- առաջարկվող պայմանագրային ժամկետ (որը չի կարող լինել ավելի կարճ, քան 5 տարին և ավելի երկար, քան 30 տարին):

Նախագծի վերաբերյալ եզրակացություն ներկայացնող լիազոր մարմինները պետք է հաշվի առնեն հետևյալ չափանիշները՝


- նախագծի հանդեպ հանրային հետաքրքրության առկայություն կամ հանրային ծառայության ապահովման անհրաժեշտություն,
- նախագծի համապատասխանությունը տվյալ ոլորտի զարգացման ծրագրերին ու ռազմավարություններին,

<sup>99</sup> Мазур И.И., Шапиро В.Д., Ольдероргге Н.Г., Управление проектами: учебное пособие, 2-е изд., М., “Омега-Л”, 2004, с. 57.

<sup>100</sup> ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N1241-Ն որոշումը «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման» կարգը հաստատելու մասին:

- Նախագծի համապատասխանությունը բյուջետային կանխատեսումներին, ֆինանսավորումներին,
- Նախագծի համապատասխանությունը ՀՄԳ պետական քաղաքականությանը տվյալ ոլորտում:

ՀՄԳ նախագծի համաձայնեցման և փորձաքննության (արդյունավետության գնահատում) փուլերը նախատեսված են շատ երկրների ՀՄԳ մասին օրենքներով: Լիազոր մարմնի կողմից ՀՄԳ նախագծի արդյունավետության գնահատման ընդհանուր կարգը և առանձնահատկությունները ներկայացված են գծապատկեր 7-ում:



## Գծապատկեր 7. ՀՄԳ նախագծի արդյունավետության գնահատման ընդհանուր կարգ<sup>101</sup>

Ֆինանսական արդյունավետության գնահատման նպատակն է որոշել նախագծի կոմերցիոն նպատակահարմարությունը (նախագծի փոխհատուցելիությունը մասնավոր գործընկերոջ համար):

<sup>101</sup> Государственно-частное партнерство в стенах Евразийского экономического союза. Практическое руководство для инвесторов, М., Центр развития ГЧП, 2017.

**Համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության արդյունավետության  
գնահատման համակարգը<sup>102</sup>**

<b>Արդյունավետության գնահատման սույնեկոր</b>	<b>Արդյունավետության դեսակ</b>	<b>Արդյունավետության հիմնական ցուցանիշները</b>
Մասնավոր կողմ	տնտեսական	Գործարարության ակտիվություն, շուկայական մասնաբաժնի աճ, արտադրական ծավալների աճ
	ֆինանսական	Զուտ բերված (ընթացիկ) արժեք, շահութաբերության ներքին նորմ, շահույթ
	ճյուղային	Հարակից ձեռնարկությունների եկամտի աճ
Տեղական ինքնակառավարման մարմին	բյուջետային	Հարկային, համայնքային մուտքեր
Համայնք	սոցիալական	Զբաղվածություն և բնակչության եկամուտների մակարդակ
	հանրային	Էկոլոգիական ցուցանիշներ, հանցագործությունների նվազում, առողջապահական ծառայությունների որակի բարելավում

Նախագիծը համարվում է ֆինանսական արդյունավետության չափանիշներին համապատասխանող, եթե մասնավոր գործընկերոց համար նախագծի զուտ բերված արժեքը՝  $\Sigma \alpha_i \geq 0$ :

Նախագծի զուտ բերված արժեքը մասնավոր գործընկերոց համար հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\Sigma \alpha_i = \sum_{i=1}^S \frac{\text{ԱՐՁՍԳ}_i}{(1+r_{\text{ՏՄ}})^i}^{103},$$

որտեղ՝

$\text{ԱՐՁՍԳ}_i$ -ն նախագծի իրականացման  $i$ -րդ տարում ազատ դրամական հոսքերի  
մեծությունն է,

$r_{\text{ՏՄ}}$ -ն՝ մասնավոր գործընկերոց համար հաշվարկված դիսկոնտային դրույքաչափը, որը պետք է 2.5 տոկոսային կետով գերազանցի նույն ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը,

տ-ն՝ նախագծի իրականացման տարին,

S-ն՝ նախագծի իրականացման տարիների ընդհանուր թիվը:

<sup>102</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը:

<sup>103</sup> Государственно-частное партнерство в стенах Евразийского экономического союза. Практическое руководство для инвесторов, М., Центр развития ГЧП, 2017.

ՀՄԳ նախագծերի սոցիալ-տնտեսական արդյունքների գնահատման նպատակն է որոշել նախագծի համապատասխանությունը փաստաթղթերում առաջադրված նպատակներին, ինչպես նաև ճշգրտել ծրագրման համապատասխան մակարդակում գործող փաստաթղթերի տեխնիկատնտեսական ցուցանիշների նպատակային արժեքների համապատասխանությունը

Նախագծի համեմատական առավելությունների գնահատման նպատակն է որոշել բյուջեի օգտագործման առավելությունները ՀՄԳ նախագծի կամ պետական, կամ համայնքային պայմանագրի դեպքում, պայմանով, որ ապրանքի, աշխատանքի և ծառայությունների գինը, ծավալը, որակը և այլ բնութագրերը հավասար են երկու դեպքում էլ: Համեմատական առավելությունների գնահատման խնդիրն է հիմնավորել ՀՄԳ նախագծի բյուջետային իրագործումը՝ հաշվի առնելով նախագծի ռիսկերի բաշխումը և այլ շեղումները:

ՀՄԳ նախագծի նախապատրաստման կառավարման խնդիրներից է հանրային մրցույթի անցկացման հնարավորության բացակայությունը՝ հատկապես համայնքների մակարդակով, հասարակության անվտահությունը ոչ թափանցիկ ՀՄԳ նախագծերի նկատմամբ և մրցույթի անցկացման համար վարչական ընթացակարգերի անհամապատասխանությունը:

ՀՄԳ նախագծին մասնակից գործընկերները պետք է ընտրվեն թափանցիկության, օբյեկտիվության և անկողմնակալության սկզբունքներով: Ընդ որում, պետք է անհանդուրժող լինել կոռուպցիոն ցանկացած դրսնորման նկատմամբ:

**Թափանցիկությունը** ենթադրում է բաց քաղաքականություն և մրցակցություն: Առաջարկի գնահատումը պետք է լինի հանրային:

**Օբյեկտիվությունը** պահանջում է հստակ, որոշակի և կանխատեսելի կանոններ, որոնք ապահովում են ընթացակարգը, ինչպես նաև կանոնների պահպանումը, դրանց իրականացման մշտադիտարկումը և կանխարգելում են շահերի բախումները:

**Անկողմնակալությունը** ենթադրում է ՀՄԳ նախագծերի մրցույթն անցկացնելիս արդար և անկողմնակալ վերաբերմունք հանրային և մասնավոր հատվածի բոլոր մասնակիցների հանդեպ՝ ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայրենական:

Մասնավոր գործընկերոջ ընտրության գործընթացի ավարտից հետո հանրային կողմը վերջնական նախագիծը և դրա վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնում է

<< կառավարություն և լիազոր մարմին, որոնք իրենց հերթին, եզրակացություն ստանալու նպատակով այն ուղարկում են ֆինանսների ոլորտում պետական լիազոր մարմին, <ՄԳ լիազոր մարմին, համապատասխան ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին՝ եզրակացություններ ստանալու նպատակով, որի ստացումից հետո լիազոր մարմինն ամփոփում է այն և սահմանված կարգով << կառավարության քննարկմանը ներկայացնում վերջնական նախագիծը, որը ներառում է եզրակացությունների ամփոփումը՝ մասնագիտական առաջարկությունների հետ միասին։ Վերջնական քննարկումից հետո << կառավարությունը հաստատում կամ մերժում է նախագիծը։

Այսպիսով՝ հանրային-մասնավոր գործընկերությունը չի կարող ինքնանպատակ լինել։ <ՄԳ յուրաքանչյուր նախագիծ պետք է ուղղված լինի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման որևէ խնդրի լուծմանը։ Հակառակ դեպքում, նման նախագծերը կծառայեն միայն անձնական շահերին՝ համայնքային գույքի և բյուջեի միջոցների հաշվին, ինչը քիչ է տարբերվում պարզունակ կոռուպցիայից։

## ԳԼՈՒԽ 3

### ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ «ՀԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ»

#### 3.1. «Համայնքներում հանրային և մասնավոր գործընկերության նախագծերի արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումները»

Համայնքների տնտեսական զարգացման արդյունավետ կառավարման ապահովումը հանրային-մասնավոր գործընկերության միջոցով՝ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական խնդիրներից մեկն է: ՀՄԳ արդյունավետ մեխանիզմների, գործիքների և ձևերի մշակումը օգնում է ներգրավել պոտենցիալ ներդրողների համայնքների ենթակառուցվածքային նախագծերում (նաև սոցիալական ոլորտի):

Կարելի է տարբերակել համայնքային-մասնավոր գործընկերության նախագծերի երկու տեսակ.

- գրավիչ՝ մասնավոր բիզնեսի համար,
- անհրաժեշտ՝ համայնքի համար:

Նախագծերի այս տարբերակումը պետք է հիմնված լինի որոշակի սկզբունքների վրա:

Բնականաբար, ոլորտների սահմաններում ևս կան տարբերություններ: Հետևաբար՝ նպատակահարմար է ձևավորել ոչ թե առանձին հանրային-մասնավոր գործընկերային նախագծեր, այլ հանրային-մասնավոր գործընկերության ոլորտային նախագծեր:

Նման երկարաժամկետ թիրախային ծրագրի առկայությունը թույլ է տալիս համայնքին առավել արդյունավետ պլանավորել իր ռեսուրսները, իսկ պոտենցիալ բիզնես գործընկերներին՝ նախապես հաշվարկելու իրենց շահերը, գնահատելու նման նախագծերին մասնակցության ոիսկերը և, անհրաժեշտության դեպքում, մասնակցելու խոշոր ներդրումային նախագծերում: Բացի այդ, երկարատև նախագծերում ոլորտը բնութագրող տնտեսական վերլուծության, վիճակագրական տվյալների, որոշ մարքեթինգային ուսումնասիրությունների արդյունքների առկայությունը նախնական նյութեր են տալիս

մասնավոր կողմին սեփական վերլուծության համար, թույլ են տալիս գնահատել իրենց ռեսուլսային և մրցակցային հնարավորությունները:

Որոշ նախագծի համար համայնքային-մասնավոր գործընկերությունը կախված է դրա ոլորտային պատկանելությունից, ներդրումային արժեքից, իրականացման տևողությունից և այլ գործոններից:

Ներդրումային նախագծեր կարող են կիրառվել համայնքային-մասնավոր գործընկերության համաձայնագրերի բազմաթիվ տարբերակներով:

Կարելի է առանձնացնել համաձայնագրերի երկու տեսակ:

Առաջինը ներառում է այն ներդրումային նախագծերը, որոնք նախատեսված են ներդրողների կողմից արդյունաբերական կամ այլ առևտրային գործունեություն իրականացնելու համար, առաջարկվում են համայնքին ներդրողի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, որը կարող է հետաքրքրված լինել դրա իրականացմամբ՝ նոր աշխատատեղերի ստեղծման և սեփական հարկային հավաքագրումներն ընդլայնելու առումով: Օրինակ՝ համայնքապետարանը կամ ներդրողը կարող են ներկայացնել հողային տարածքում որևէ ժամանցային կամ առևտրի կենտրոնի կառուցման կամ գոյություն ունեցող շենքի՝ այդ նպատակով վերակառուցման նախագիծ:

Օրինակ Երևանի քաղաքապետարանին առաջարկ է արվել **Հրազդան գետի կիրճում սրեղծել արկածային զբոսաշրջության կենտրոն**<sup>104</sup>, որտեղ կկազմակերպվի մայրաքաղաքի բնակչության և հյուրերի ակտիվ հանգիստը, կնախատեսվի էքստրեմալ թիավարություն, հրաձգություն, նետաձգություն և ժայռամագլցում մարզաձևերով զբաղվելու համար համապատասխան պայմաններ, ինչը կիսթանի մայրաքաղաքում առողջ ապրելակերպը: Ծրագրով նախատեսվում է ներդնել արկածային տուրիզմի առաջատար ուղղություններից մեկը՝ Զիվ-Լայնը: Հանգստյան գոտին նախատեսվում է կառուցել ավտոճանապարհի երկայնքով: Ծրագիրը կներառի՝ Հրազդան գետի վրա էքստրեմալ թիավարության 1-1,5 կմ երկարությամբ խոչընդոտներով գետուղի, որի համար անհրաժեշտ է գետի հունի ուսումնասիրություն, մաքրման աշխատանքներ, ջրահոսքի արագացում, ափերի ամրացում, ջրաֆիլտրերի տեղադրում, էլինգի և արհեստական խոչընդոտների կառուցում, նստարանների տեղադրում գետափի առաջարկված տարածքի երկարությամբ: Ծրագրի շրջանակներում կկառուցվի ժայռամագլցման ուղի,

<sup>104</sup> [www.yerevan.am/am/investment/adventurous-recreational-sports-investment-project-in-hrazdan-gorge/](http://www.yerevan.am/am/investment/adventurous-recreational-sports-investment-project-in-hrazdan-gorge/)

նետածգարան, մարզասարքերով հագեցած բացօթյա մարզահրապարակ, մարզատրամաբանական խաղերի և մարզագույքի վարձույթի տաղավարներ, վրանային ավան, նաև տնակային հյուրանոց ծառերի վրա, ամբողջ տարածքի կանաչապատում, ձևավորում, լուսավորության անցկացում:

Հանգստի գոտու շերտի հաշվարկային երկարությունը 1,5 կմ է, իրականացման ժամկետը 3 տարի: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 0,6 մլն. ԱՄՆ դոլար: Հնարավոր է ծրագիրն իրականացնել նաև փուլային տարբերակով: Նախագիծը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակում:

Եթե առաջարկն արվում է ներդրողի կողմից, ապա համայնքապետարանը պետք է ուսումնասիրի տվյալ տարածքում առաջարկի իրականացման հնարավորությունը, քաղաքաշինական փաստաթղթերը, ենթակառուցվածքային հնարավորությունները, վերակառուցման ենթակա օբյեկտի վիճակը, գնահատի հնարավոր արդյունքները սոցիալ-տնտեսական արդյունավետության առումով, հետազոտի շուկայի կառուցվածքը և ձևակերպի մրցութային պայմաններ, ինչը հնարավորություն կտա ներգրավելու հնարավորինս մեծ թվով ներդրողների և համաձայնագիր կնքելու առավել շահավետ մրցակցային պայմաններով:

Երկրորդ տեսակին են պատկանում այն ներդրումային նախագծերը, որոնք բխում են բուն համայնքի կարիքներից: Օրինակ՝ **ներկայացվել է Երևանի կոչքի թափոնների կառավարման ներդրումային նախագիծ<sup>105</sup>**: Ներդրումային ծախսերի հիմնական ուղղություններն են՝ Նուբարաշենի առկա աղբավայրի հարակից՝ շուրջ 32 հա տարածքում եվրոպական չափանիշներին համապատասխան նոր աղբավայրի նախագծումը, կառուցումը և շահագործումը, ինչպես նաև եվրոպական չափորոշիչներին համապատասխան առկա աղբավայրի (աղբավայրերի) տարածքների մեկուացումը: Նախագծի շրջանակներում նախատեսվում է կառուցել ջրհավաք ջրանցքներ, անձրևաջրերի կուտակման ավագան, գրասենյակային շինություն, լաբորատորիա, հիմնական մոտեցնող ճանապարհ և շահագործման համար անհրաժեշտ գրունտային ճանապարհներ, մեքենաների անվադողերի մաքրման կայան, վառելիքի լցակայան, ավտոկայանատեղի, ցանկապատ և դարպաս, անհրաժեշտ հաղորդուղիներ, ինչպես նաև ջրավագան: Նախատեսվում է նաև ձեռք բերել մեքենա-մեխանիզմներ (տոփանիչ, բուլդոզեր, ինքնա-

<sup>105</sup> <https://www.yerevan.am>

թափ և այլն), բարձր ճնշմամբ աշխատող մաքրման սարքավորումներ, ջրի/օդի/կիմայի մոնիթորինգի սարքավորումներ և կամրջային տիպի կշեռք: Նախատեսվում է նոր կառուցվող աղբավայրի տարածքը մեկուսացնել առկա աղբավայրից, կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայր՝ շահագործման համար բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքներով, իհմքերը մեկուսացնելով անջրաթափանց շերտերով, կառուցելով հոսքաջրերի դրենաժային համակարգեր և համապատասխան ռեզերվուարներ վերջինիս պահեստավորման համար: Աղբավայրի շրջակայքում բնապահպանական պայմանները վերահսկելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ ստորգետնյա ջրերի ստուգում, կիմայի, օդի որակի և վերգետնյա ջրերի վերահսկման կետեր:

Նախագծի ընդհանուր արժեքը նախնական գնահատմամբ կազմում է 24 մլն եվրո (Եվրոպական ներդրումային բանկից վարկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից վարկ և դրամաշնորհ ԵՄ Հարևանության ներդրումային գործիքի միջոցներից): Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՀԵԲ) կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներով կֆինանսավորվեն ծրագրի կառավարման խորհրդադրուի, բնապահպանական փաստաթղթերի պարբասարման, կենսապահովման վերականգնման ծրագրի և հանրային իրազեկման հետ կապված ծախսերը: Այս միջոցները չեն հանդիսանում վարկի մաս (կամ դրամաշնորհային միջոցների մաս) և տրամադրվելու են ՎՀԵԲ-ի տեխնիկական աջակցության միջոցներից: Փաստացի ծրագրի արժեքի առնվազն 1/3-ը ֆինանսավորվելու է դրամաշնորհային միջոցներից, որի արդյունքում ծրագիրը դառնում է բավականին մատչելի:

Այս պարագայում համայնքապետարանը պետք է մշակի ներդրողի համար շահավետ պայմաններ՝ ապահովի նախագծի հաշվարկային արժեքի որոշակի համաֆինանսավորում, ներկայացնի ներդրումների վերադարձի երաշխիքներ, օրինակ՝ ձեռնարկության շահույթի, գույքի գրավի և այլ պայմանների հաշվին:

Ներդրումային նախագծերի բյուջետայինն, հանրային, ֆինանսական արդյունավետության գնահատումը դրանց վերլուծության կարևոր բաղադրիչներից է, որի հիման վրա որոշվում են նախագծերի իրականացման հնարավորությունն ու նպատակահարմարությունը: Սակայն, ինչպես ցույց է տալիս ներկայիս իրավիճակը, նմանատիպ նախագծերը ներկայացվում են ոչ լիարժեք, սահմանափակ ցուցանիշներով, ինչի արդյուն-

քում լրացուցիչ հաշվարկների և ճշգրտումների անհրաժեշտություն է առաջանում: Իսկ դա արդեն լրացուցիչ խոչընդոտ էներդրողների համար (այսուակ 10):

Այսուակ 10

**Երևանի քաղաքային զարգացման ներդրումային  
ծրագրերի առաջարկներ (2018 թ.)**

		ՀՄԳ կիրառելի տարբերակ	Ծրագրի արժեքը, մյն ԱՄՆ դրամ	Տևողու- թյունը, տարի
1.	Հերիաթային քաղաք Երևանում	Ներդրումային պայմանագիր	28	3
2.	«Հաղթանակ» գրոսայգու բարաձրի վերակա- ռուցում և արդիականացում	Ներդրումային պայմանագիր	60	3
3.	Երևան քաղաքում նոր ճոպանուղու կառուցում	Ներդրումային պայմանագիր	20	3
4.	Երևանի բուսաբանական այգում բացօթյա հանգստի, ժամանցի և գրոսաշրջային կենսորոն հիմնելու ծրագիր	Համայնք-մասնավոր համագործ.	2,5	3
5.	Մարզա-առողջարանային և հանգստի բազմաֆունկցիոնալ համալիր	Ներդրումային պայմանագիր	24	3
6.	Երևանի Սպ. Շահումյանի անվան հրապարա- կում սպորտեկնյա բազմաֆունկցիոնալ հա- մալիրի և ավտոկայանափեղի կառուցում	Համայնք-մասնավոր համագործ.	11	2
7.	Երևանի Ռուսաստանի հրապարակում սպոր- գեկնյա բազմաֆունկցիոնալ համալիրի և ավ- տոկայանափեղի կառուցում	Համայնք-մասնավոր համագործ.	17	2
8.	«Նոյենդ» պատմահնագիրական և գրոսաշրջության կենսորոնի սպեղծում	Ներդրումային պայմանագիր	40	3
9.	Արվեստի, գրոսաշրջության անդառապուրա- կային համալիր կենսորոնի սպեղծում	Համայնք-մասնավոր համագործ.	80	3
10.	Երևանի Աջափնյակ վարչական շրջանում բնակելի թաղամասի վերակառուցման ծրագիր	Համայնք-մասնավոր համագործ.	100	5
11.	Երևանում մերձքաղաքային բրանսպորտի վերջնակետային հանգույցի կազմավորման ներդրումային ծրագիր	Համայնք-մասնավոր համագործ.	ճշգրած չէ	3-5
12.	«Երևանի Բերդ» հասարակական, գործարա- րական և մշակութային համալիրի կառուցման ծրագիր	Ներդրումային պայմանագիր	ճշգրած չէ	3
13.	Հրագդանի կիրճում արկածային ժամանցա- սպորտային կենսորոնի ներդրումային ծրագիր	Համայնք-մասնավոր համագործ.	0,6	3
14.	Երեխաների համար արկածային քաղաքի սպեղծման ներդրումային նախագիծ	Համայնք-մասնավոր համագործ.	1	3
15.	Երևանում «Վարպետաց քաղաք» մշակութային համալիրի սպեղծում	Համայնք-մասնավոր համագործ.	1,5-2	3
16.	«Հայաստանի 12 մայրաքաղաքներ» թեմատիկ այգու կառուցման ներդրումային նախագիծ	Համայնք-մասնավոր համագործ.	3	2
17.	«Էրերունի» պատմահնագիրական արգելոց- թանգարանի վերականգնում և գրոսաշրջային ենթակառուցվածքների սպեղծում	Համայնք-մասնավոր համագործ.	10	3

Աղյուսակ 10-ի շարունակությունը

		ՀՄԳ կիրառելի տարբերակ	Ծրագրի արժեքը, մին ԱՄՆ դոլար	Տևողությունը, դարի
18.	Շենգավիթ հնավայրի վերականգնման և գրուաշրջային ենթակառուցվածքների սրեղծման ներդրումային առաջարկ	Համայնք-մասնավոր համագործ.	1.6	2
19.	Հայկական պատմամշակութային ժառանգությունը ցուցադրող այգու կառուցման ներդրումային նախագիծ	Համայնք-մասնավոր համագործ.	4	2
20.	«Մանկական քաղաք» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ներդրումային ծրագիր	Ներդրումային պայմանագիր	10	2
21.	Բազմաֆունկցիոնալ առողջարարական-վերականգնողական համալիր-կենտրոնի սրեղծման ներդրումային ծրագիր	Ներդրումային պայմանագիր	20	3
22.	Արևային ֆորովոլուսային համակարգերի կառուցում	Ներդրումային պայմանագիր	1	1
23.	Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում	Ներդրումային պայմանագիր	10	3
24.	Նոր թաղամասի կառուցման ներդրումային նախագիծ	Ներդրումային պայմանագիր	ճշգրված չէ	5
25.	Երևան քաղաքի սպորտելիքնյա անցումների վերակառուցման և արդիականացման ներդրումային նախագիծ	Ներդրումային պայմանագիր	ճշգրված չէ	1
26.	Կաթսայափան շինության վերակառուցում բազմաֆունկցիոնալ սպասարկման օբյեկտի	Ներդրումային պայմանագիր	70 մլն. << դրամ	2
27.	Հասարակական սպասարկման օբյեկտի կառուցում՝ կաթսայափան շինության վերակառուցմամբ	Ներդրումային պայմանագիր	15 մլն. << դրամ	1
28.	Հասարակական սպասարկման օբյեկտի կառուցում՝ կաթսայափան շինության վերակառուցմամբ	Ներդրումային պայմանագիր	11 մլն. << դրամ	1
29.	Հասարակական սպասարկման օբյեկտի կառուցում՝ կաթսայափան շինության վերակառուցմամբ	Ներդրումային պայմանագիր	ճշգրված չէ	1
30.	Բնակելի փան, գրասենյակի կառուցում՝ կաթսայափան շինության վերակառուցմամբ	Ներդրումային պայմանագիր	22 մլն. << դրամ	1
31.	Կաթսայափան շինության վերակառուցում հասարակական սպասարկման օբյեկտի	Ներդրումային պայմանագիր	ճշգրված չէ	1
32.	Հյուրանոցային համալիրի սրեղծում Հրազդանի կիրճում	Ներդրումային պայմանագիր	6	3
33.	Ազար փնտեսական գործուն հարող լրարածքի կառուցման ներդրումային ծրագիր	Ներդրումային պայմանագիր	ճշգրված չէ	3
34.	Երևանում կինոդպրոց-կինոսպուտիա կառուցելու ներդրումային նախագիծ	Ներդրումային պայմանագիր	10	3
35.	Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցում	Ներդրումային պայմանագիր	5,5	3
36.	Առևտուր կենտրոնի և սպորտելիքնյա ավտոկայանափեղի սրեղծում	Ներդրումային պայմանագիր	2	2
37.	Ճանապարհային էստրակադա Արգավանդի հանգուցից մինչև օդանավակայանի խաչմերուկ հսակովի պողովայով	Ներդրումային պայմանագիր	44	3

Այուսակ 10-ի շարունակությունը

		ՀՄԳ կիրառելի տարբերակ	Ծրագրի արժեքը, մին ԱՄՆ դոլար	Տևողու- թյունը, տարի
38.	Երևանի կայարանամերձ հրապարակում սրորդելոյա առևտուրի և սպասարկման համայնքի ու ավորկայանափեղի կառուցում	Համայնք-մասնավոր համագործ.	26	3
39.	Երևանի Կիևյան փողոցի սկզբնամասում սրորդելոյա ուրբանիզացիայի ծնավորում	Համայնք-մասնավոր համագործ.	6,6	3
40.	Վերգելոյա ավտոհանգրվանների կառուցում	Համայնք-մասնավոր համագործ.	1քմ համար՝ 650-950 ԱՄՆ դոլար	1-1,5 ամիս
41.	Կարմիր բլուր հնավայրի վերականգնման և գրոսաշրջային ենթակառուցվածքների սրեղծման ներդրումային առաջարկ	Համայնք-մասնավոր համագործ.	3,5	3
42.	Տարեցների համար նախադեսված ժամանակակից կենդրոնի սրեղծում Երևան քաղաքում	Ներդրումային պայմանագիր	4,8	3
43.	Երևան քաղաքում սրորդելոյա ավտոկայանափեղի կառուցման ներդրումային նախագիծ	Համայնք-մասնավոր համագործ.	1 քմ-ի համար՝ 650 ԱՄՆ դոլար	2
44.	Մեծածախ ապրանքների և պահեստավորման լոգիստիկ կենդրոնի կառուցման ներդրումային նախագիծ	Ներդրումային պայմանագիր	15	3-5
45.	Սայաթ-Նովա պj.-Արտվյան փ. խաչմերուկի սրորդելոյա անցման կառուցում՝ մերրոպելիքենի «Երիտասարդական» կայարանի II մուլտով	Համայնք-մասնավոր համագործ.	4-7	2 + 4
46.	Նորագոյն գեխնոլոգիաներով հագեցած զարգացման կենդրոնի հիմնում բոլոր տարիքային խմբերի երեխաների համար	Ներդրումային պայմանագիր	5	3
47.	Վերգելոյա անցումների կառուցման ներդրումային նախագիծ	Համայնք-մասնավոր համագործ.	150 հազ. ԱՄՆ դոլար	1
48.	Փակ լողավազանի կառուցման ծրագիր	Ներդրումային պայմանագիր	7	2
49.	«Պլանետարիում» ասվողագիտական, գիտակրթական կենդրոնի սրեղծում	Համայնք-մասնավոր համագործ.	2	3

Այուսակում ներկայացված նախագծերի համար որպես իրականացման ձև նշվում են համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում կամ մասնավոր ներդրումների ներգրավմամբ տարբերակները: Առաջին դեպքում չի նշվում համայնքային-մասնավոր գործընկերության կոնկրետ ձևը, ինչն արդեն ներդրողին հնարավորություն կտար որոշակի պատկերացում կազմել նախագծի կառուցակարգերի և սեփական մասնակցության մասին: Մասնավոր ներդրումների ներգրավմամբ նախագծերի դեպքում համայնքն առաջարկում է իր աջակցությունը հողատարածքների իրավական կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում, ինչպես նաև ծրագրի

կազմման և գործընթացի կազմակերպման գործում: Այս պարագայում սա ևս դառնում է հանրային-մասնավոր գործընկերության մի տեսակ՝ ներդրումային պայմանագիր: Բացի այդ նախագծերում ներկայացված է օբյեկտի շինարարության ժամկետը, սակայն հասկանալի է, որ այն չի ներառում ներդրողի գումարների ետքնման ժամկետը, ինչը հանրային-մասնավոր գործընկերության կարևորագույն սկրունքներից է, և ինչով պայմանավորված է ՀՄԳ նախագծերի երկարատևությունը: ՀՄԳ նախագծերի երկարաժամկետ բնույթը պայմանավորված է մասնավոր ներդրումների վերադարձման անհրաժեշտությամբ և այդ նախագծերին բնորոշ բարդությամբ (համաձայնագրի շրջանակներում օբյեկտի կառուցման և շահագործման և/կամ դեհննիկական սպասարկման փուլերի պարզադիր միավորում): Հաշվարկված չեն նաև օբյեկտի շահութաբերությունը, համայնքի մասնակցության բաժինը, տրամադրվող արտոնությունները և այլն: Ուստի ստորև ներկայացնում ենք ՀՄԳ նախագծերի առաջարկի պարտադիր պայմանները, որոնցից միայն առաջին երկուսն են առկա ներկայացվածներում.

- ✓ հանրային կողմի անհատականացման տվյալները,
- ✓ նախագծի համառոտ բնութագիրը,
- նախագծի իրականացման նպատակով ՀՄԳ մոդելի նկարագրությունը,
- ՀՄԳ պայմանագրի նախագիծը,
- մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի և ժամանակացույցի բնութագիրը,
- նախագծի իրականացման ուսումնասիրություն, ներառյալ ՀՄԳ մոդելի պլանավորած արժեքի և նախագծի իրականացման բոլոր ծախսերի և դասական (բյուջետային) ֆինանսավորման մոդելի համեմատությունը, պայմանագրով նախատեսվող ժամկետի ընթացքում,
- ոիսկերի մատրից, որը ներառում է հանրային և մասնավոր գործընկերների միջև ոիսկերի բաշխումը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ որոշում:

Այսինքն՝ ներկայացվող նախագծերը լիարժեք մշակված չեն: Հասկանալի է, որ նախնական փուլում գնահատումները կատարվում են որակական մակարդակում, քանակական չափանիշները որոշվում են որպես կանխատեսում, սակայն դրանք պետք է ներառված լինեն նախագծերում:

2017 թ-ին ՀՀ վարչապետը ներդրողների մասնակցությամբ քննարկել են առավել իրատեսական մարզային 11 ներդրումային ծրագիր<sup>106</sup>.

1. ՀՀ Լոռու մարզի Ամրակից համայնք, «Ֆերմերային տնտեսության զարգացում»,
2. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնք, ««Ռոզֆոռութ» արտադրամասի ընդլայում»,
3. ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնք, «Ժամականակից տեխնոլոգիաներով բազմաթիվ ելակի արտադրություն»,
4. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք, «Շինչիլաբուծության տոհմային տնտեսություն»,
5. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք համայնք, «Վարդենիսի պանրի գործարան՝ տարածաշրջանի զարգացման լոկոմոտիվ»,
6. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնք, «Խելացի տուն համակարգի արտադրություն»,
7. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնք, «Բասեն հյուրանոցային համալիրի, առևտունության կառուցում և հանրային սննդի կազմակերպում»,
8. ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեազ համայնք, ««Ոսկեվազ» գինու գործարանի ընդլայնում և զբոսաշրջության նոր ուղղությունների զարգացում»,
9. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնք, «Մետաղի հղկումից և մշակումից պատրաստվող իրերի արտադրության հիմնում»,
10. ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան համայնք, «Էկոտուրիզմի և հանգստյան գոտու հիմնում՝ «Էկոմյունիթի»»,
11. ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք, «Սպանդանոցի ընդլայնում և թափոնների վերամշակման հոսքագծի կառուցում»:

Քննարկման արդյունքներով տրված հանձնարարականների համաձայն՝ արդեն իսկ 2 ծրագիր ֆինանսավորվել են.

1. ՀՀ Լոռու մարզի «Ֆերմերային տնտեսության զարգացում» ներդրումային ծրագրով ակնկալվող 35,0 մլն ՀՀ դրամ գումարից 14.03.2017 թ-ին տրամադրվել է վարկի 1-ին փուլ՝ 20,0 մլն ՀՀ դրամ գումարի չափով՝ տարեկան 12% տոկոսադրույթով: Վարկի առաջին փուլի ծախսման հիմնավորումները ներկայացնելուց և մոնիթորինգ իրա-

<sup>106</sup> [http://mtad.am/u\\_files/file/marzayin%20cragrer/texekatvutyun%20\\_11cragrer%20\\_2\\_.pdf](http://mtad.am/u_files/file/marzayin%20cragrer/texekatvutyun%20_11cragrer%20_2_.pdf)

կանացնելուց հետո կտրամադրվի վարկի 2-րդ փուլը՝ 15,0 մլն << դրամ գումարի չափով: Ծրագրով ակնկալվում է ստեղծել 5 հիմնական աշխատեղ:

2. << Տավուշի մարզի «Ժամականակից տեխնոլոգիաներով բազմաթերթ ելակի արտադրություն» ծրագրով ակնկալվող 10,0 մլն դրամ վարկային միջոցները տրամադրվել են տարեկան 10% տոկոսադրույթով՝ 14.03.2017 թ-ին կնքված պայմանագրի հիման վրա: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի 20 աշխատեղ:

#### Դրա հետ մեկտեղ՝

1. << Արագածոտնի մարզի «Մետաղի հղկումից և մշակումից պատրաստվող իրերի արտադրության հիմնում» ներդրումային ծրագրով ակնկալվող 15,0 մլն << դրամ գումարից 2017 թվականի ապրիլ ամսվա 3-րդ տասնօրյակում նախատեսվում է 5,0 մլն << դրամը տարեկան 4% տոկոսադրույթով տրամադրել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի Սիրիահայերի աջակցության ծրագրի շրջանակներում, իսկ 10 մլն << դրամը՝ ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ ՓԲԸ վարկավորման հաշվին՝ տարեկան 11% տոկոսադրույթով:

2. << Արագածոտնի մարզի ««Ոսկեվազ» գինու գործարանի ընդլայնում և զբոսաշրջության նոր ուղղությունների զարգացում» ներդրումային ծրագրով ակնկալվող 300,0 մլն << դրամը նախատեսվում է տրամադրել տարեկան 12% տոկոսադրույթով և 3% սուբսիդավորմամբ (վարկի առաջին 2 տարվա համար):

3. << Շիրակի մարզի «Բասեն հյուրանոցային համալիրի, առևտրի կենտրոնի կառուցում և հանրային սննդի կազմակերպում» ծրագրի իրագործման նպատակով՝ ներկայում ընթանում են «Բասենի Գովը» ՍՊԸ-ին անհատույց սեփականության իրավունքով Գյումրի քաղաքի նախկին Շիրակ հյուրանոցի շինության և հողամասի նվիրատվության գործընթացները:

4. << Արագածոտնի մարզի «Էկոտուրիզմի և հանգստյան գոտու հիմնում՝ «Էկոմյունիթի»» ծրագրի իրագործման նպատակով՝ ներկայում ընթանում են Էկոթաղամասի համար նախատեսված 4,0 հա մակերեսով հողատարածքի գործառնական նշանակության փոփոխության գործընթացները: Մյուս 5 ներդրումային ծրագրերի մասով ընթանում են դրանց ֆինանսական գործիքների և մեխանիզմների աջակցության ուսումնասիրության գործընթացները:

Հաջորդ՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Որակյալ պանրի արտադրության կազմակերպում՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ» ծրագրի իրագործման դեպքում ակնկալվում է ստեղծել 16-18 նոր աշխատատեղ: Այս ծրագրով ակնկալվող 42,0 մլն << դրամից արդեն իսկ տրամադրվել է 10,0 մլն << դրամը ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ ՓԲԸ վարկավորման հաշվին՝ տարեկան 12% տոկոսադրույթով: Ծրագրով նախատեսվում է վերագինել գործարանը նոր սարքավորումներով և արտադրել բարձր որակական չափանիշներով պանիրներ (սեփական բրենդային արտադրանքի տեսքով):

Միաժամանակ, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի «Շինշիլաբուծության տոկմային տնտեսության» ծրագրի ֆինանսավորման համար արդեն իսկ կնքվել է վարկային պայմանագիր՝ տարեկան 12% տոկոսադրույթով վարկային միջոցների տրամադրման նպատակով: Ծրագրով նախատեսվում է ստեղծել շինշիլաբուծությամբ զբաղվող մինի ֆերմաների լայն ցանց, ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի 30 աշխատատեղ:

Ներկայացված նախագծերից հնարավոր չէ հասկանալ, թե դրանք ի՞նչ հիմունքներով և ո՞ր մակարդակում են իրականացվում կամ նախատեսվում իրականացնել:

Ընդհանրացնելով <<-ում հանրային-մասնավոր գործընկերության առկա խնդիրները կարելի է եզրակացնել, որ համայնքներում իրականացված <ՄԳ նախագծերի գերակշիռ մասն իրականացվել է պետական մակարդակում, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացված նախագծերի թիվը շատ փոքր է և տեղեկատվությունը դրանց վերաբերյալ հիմնականում բացակայում է՝ բացառությամբ Երևան քաղաքի: Կարծում ենք խնդիրն այստեղ պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ համակարգային մոտեցման և համայնքներում այս ոլորտի մասնագետների բացակայությամբ, բյուջեի սղությամբ, օրենսդաիրավական անկատարությամբ և այլն: Ուստի կարևոր ենք համարում ոլորտը համակարգող մարմնի ստեղծումը, որի անհարժեշտությունը զգացվում է <ՄԳ առնչվող ցանկացած խնդրին անդրադառնալիս:

<<-ում իրականացվող և ներկայացվող նախագծերից կարելի է եզրակացնել, որ <ՄԳ կառուցակարգերը թեև ամրագրված են << կառավարության կողմից ընդունված «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման»

կարգով<sup>107</sup>, սակայն տարբեր գերատեսչությունների կողմից ներկայացվող նախագծերը չեն համապատասխանում <ՄԳ ընդունված ընդհանուր չափորոշիչներին:

Հանրային-մասնավոր գործընկերության նախագծի արդյունավետության գնահատումը պետք է իրականացվի նախագծի իրագործման բոլոր փուլերում: Այս բնագավառի մասնագետներն առավել կարևորում են նախագծի ֆինանսական և տնտեսական արդյունավետությունը:

Մեր կարծիքով, հանրային (սոցիալական) արդյունավետությունը, որի գնահատումը պետք է տա քաղաքացիական հասարակությունը, հավասարապես կարևոր է, իսկ որոշ դեպքերում դառնում է վճռորոշ նախագծի հաջողության համար: Առավելապես դա առաջնային է համայնքների համար, քանի որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը միշտ հանրության ուշադրության կենտրոնում է: Իհարկե, կախված նախագծի ծավալից և նշանակությունից, նախագծերի արդյունավետության գնահատման միջոցառումների բովանդակությունը կարող է տարբերվել:

Այս համատեքստում ուսումնասիրենք հանրային-մասնավոր գործընկերության հիման վրա կնքված «Լոկատոր» և «Փարկինգ սիթի սերվիս» ընկերությունների կոնսորցիումի հետ կնքված պայմանագրերը:

Հաշվի առնելով Երևանում մեքենաների թվի աճը և դրա հետ կապված անհարմարությունները, ուսումնասիրելով միջազգային փորձը, Երևանի քաղաքապետարանը որոշում կայացրեց հանրային-մասնավոր համագործակցության միջոցով Երևանում ներդնել համապատասխան համակարգ:

Երևանի քաղաքապետարանը 2012 թ. դեկտեմբերի 17-ին հայտարարեց ԵՔ-ՄԵԾԶԲ-12/2 ծածկագրով ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների ձեռքբերման մրցույթ (մրցակցային երկխոսության ձևով) և 2013 թ. ապրիլին հաղթող ճանաչեց «Լոկատոր» և «Փարկինգ սիթի սերվիս» ընկերությունների կոնսորցիումը, որի հետ կնքեց համապատասխան պայմանագիր:

«Փարկինգ սիթի սերվիս» ընկերությունը պայմանագրի շրջանակներում նախատեսում էր իրականացնել \$10 մլն-ի ներդրում և ակնկալվում էր, որ մինչ 2014 թ. սկիզբը

<sup>107</sup> <<կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241 - Ն որոշումը «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման» կարգը հաստատելու մասին:

Երևանում կգործի 20 հազ. վճարովի կայանատեղի: Կտեղադրվեն 5 հազ. տեսախցիկ, մնացած կայանատեղիները կվերահսկվեն շրջիկ մեքենաների միջոցով:

Կայանման վարձավճարները կազմում են՝ յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 100 դրամ, յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 500 դրամ, մեկ շաբաթվա համար՝ 1 հազ. դրամ, մեկ ամսվա համար՝ 2 հազ. դրամ, մեկ տարվա համար՝ 12 հազ. դրամ:

Քանի որ նախագծի քննարկումը պատշաճ ընթացակարգով իրականացված չէր, բացահայտված չէին նախագծի թերությունները, դրա իրականացման հնարավոր վտանգները, ուստի նախագծի մեկնարկին հետևեց հասարակական ընդվզում: Մի խումբ քաղաքացիներ սոցիալական ցանցերում ձևավորեցին «Ավտոկանգառային անհնազանդությունը սկսված է» խումբը, որը վճարովի ավտոկայանատեղիների մասին որոշումը համարում էր անօրինական: Խմբի տարածած հայտարարությունում մասնավորապես ասված էր. «Վճարովի ավտոկանգառների որոշումը անօրինական է և չի բխում հանրային շահից: Հանրային տարածքները տրամադրվել են մասնավոր ընկերության, որը ստանալու է ավտոկանգառներից ստացվող եկամտի 70%-ը: Մասնավոր ընկերությանն է տրամադրվել մեքենայատեր քաղաքացիների տվյալների բազան, մասնավոր ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել տեսանկարահանումներ, կիրառել տույժեր << քաղաքացիների նկատմամբ, ինչը սահմանադրության և մարդու իրավունքների կոպիտ խախտում է:

Նմանատիպ իրավիճակներից խուսափելու համար նախնական փուլում ՀՄԳ նախագծերի պետք է ենթարկվեն հասարակական արդյունավետության գնահատման:

Ըստ պայմանագրի՝ ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների ձեռքբերման մրցույթի հաղթողներ «Փարկինգ սիթի սերվիսի» և «Լոկատորի» հավաքագրած գումարի 70%-ը ընկերություններին էր, որից՝ 20%-ը տրամադրվելու էր վճարահաշվարկ իրականացնող կազմակերպություններին, 16,6%-ը ԱԱՀ-ն էր, 10%-ը՝ ընկերության շահութաբերությունն էր, մնացած մասն ուղղվելու էր ներդրումների վերադարձելիությանը:

Ֆինանսական հոսքերի կառավարման տեսակետից ավագանու որոշումն անտրամաբանական էր: Անգամ այս պայմաններում կայանման համար գանձվող գումարները չեն ուղղվելու քաղաքային բյուջե, դրանք տնօրինել է մասնավոր ընկերությունը: Փաստացի ավագանին առաջնորդվել է հենց «Փարկինգ սիթի սերվիսի» շահերից: Գու-

մարների միանվագ հավաքագրումը բխում է ընկերության շահերից, քանի որ նվազեցնում է կայանատեղերի սպասարկման ծախսերը: Ընկերությունը վճարովի ավտոկայանատեղերի հսկողությունը խոստացել է իրականացնել ավտոմատացված համակարգով՝ տեսախցիկների միջոցով: Եթե վարորդների մեծ մասը կատարում է մեկ տարվա վճարում, ապա նվազում են վճարումների վերահսկողության համար կատարվող ծախսերը:

Բացի այդ՝ քաղաքապետարանի կողմից կնքված 2013 թ. պայմանագրից երևում է, որ վճարովի ավտոկայանատեղեր կազմակերպող ընկերությունը ծախսերը հոգալու է ոչ միայն հավաքագրվող գումարներից, այլև վճարվելու է քաղաքային բյուջեից (ծախսերի մոտ 70%-ը): Միջոցները հատկացվելու են քաղաքապետարանի բյուջեի «համայնքների պահուատային ֆոնդից»: Ի՞նչ գումարի մասին է խոսքը՝ պայմանագրում չի նշվում:

Հանրային ճնշման և ընկերությունների և քաղաքապետարանի կողմից նախագծի ոչ արդյունավետ նախապատրաստման արդյունքում կառավարությունը որոշում կայացրեց Երևանում վճարովի ավտոկայանատեղերի մատուցման ծառայությունը կազմակերպող «Փարքինգ սիթի սերվիս» և «Լոկատոր» ընկերությունների հետ բանակցություններ անցկացնել՝ սեփականության ձևով պայմանավորված նրանց գործառույթները, այդ թվում՝ ֆինանսական հոսքերի տնօրինումն ու կառավարումը համայնքային կառույցներին անցնելու ուղղությամբ: Բանակցությունների արդյունքում «Երևանի քաղաքապետարանը համաձայնության է եկել որպես նվիրատվություն ձեռք բերելու «Փարկինգ սիթի սերվիս» ընկերության 100 տոկոս բաժնեմասը<sup>108</sup>, այն պայմանով, որ ձեռքբերման պահին ընկերության ակտիվները պետք է հավասար կամ ավելի լինեն պարտավորություններից, որը պետք է ամրագրվի արտասահմանյան հեղինակավոր առողիտորական կազմակերպության կողմից:

Ուստի Երևանի քաղաքապետարանը փոխադարձ համաձայնությամբ վաղաժամկետ լուծեց «Փարկինգ սիթի սերվիս» ընկերության հետ կնքված «Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման» գնման պայմանագիրը: Փոխարենը << կառավարության համաձայնությամբ ուղղակի

<sup>108</sup> << Երևան քաղաքի ավագանու «Փարկինգ սիթի սերվիս» ՓԲԸ բաժնետոմսերը որպես նվիրատվություն ընդունելու և այդ բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին N 655-Ա որոշում, 21 դեկտեմբերի 2016 թ.:

Եղանակով մինչև 10 տարի ժամկետով կնքեց Երկու պայմանագիր, որոնցից առաջինը «Փարկինգ սիթի սերվիս»-ի հետ՝ վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման նպատակով՝ դրա համար անհրաժեշտ հաշվարկված և ֆիքսված գումարի չափով՝ հստակ սահմանելով ծառայության մատուցման չափորոշիչները։ Երկրորդ պայմանագիրը «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ՝ բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման ծառայության ձեռքբերման համար։ Պայմանագրով հստակ սահմանված են այն նվազագույն արդյունքները, որոնք պետք է ապահովի «Փարկինգ սիթի սերվիս»-ը, և որոնք պետք է պակաս չլինեն նախորդ ժամանակահատվածում ձեռք բերված առավելագույն արդյունքից, որի դիմաց «Լոկատոր» ՓԲԸ-ն կվարձատրվի հստակ ամրագրված գումարի չափով։

Գործարքի արդյունքում վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման համար ներդրված ակտիվները կդառնան համայնքային սեփականություն, իսկ ավտոկայանատեղերի տուրքից Երևանի բյուջե հավաքագրվող գումարները (հանած ծախսերը), ըստ կանխատեսումների, առաջիկա տարիների ընթացքում կաճեն տարեկան առնվազն 100 մլն դրամով, իսկ դրանից հետո տարեկան առնվազն 400 մլն դրամով։ Նոր պայմանագրով վճարովի ավտոկայանտեղերի համար սահմանված տեղական տուրքերի դրույթափերի որևէ փոփոխություն չի եղել։ Այսուակ 11-ում ներկայացված են 2013 թ. և 2016 թ. նախագծերի հիմնական դրույթները։

***Վճարովի ավտոկայանագրեղերի համար սահմանված դեղական դրույթափերը***

Յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 100 դրամ,  
յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 500 դրամ,  
մեկ շաբաթվա համար՝ 1 000 դրամ,  
մեկ ամսվա համար՝ 2 000 դրամ,  
մեկ տարվա համար՝ 12 000 դրամ։

**Երևանում վճարովի ավտոկայանափեղերի մարուցման ծառայություն կազմակերպող «Փարքինգ սիթի սերվիս» և «Լոկատոր» ընկերությունների հետ կնքված պայմանագրերի համեմարտությունը**

ՀՀ	Ծրագրի դրույթներ	2013 թ. «Լոկատոր» և «Փարքինգ սիթի սերվիս» ընկերությունների կոնսորցիոնի հետ կնքված պայմանագիր	2016 թ. «Լոկատոր» և «Փարքինգ սիթի սերվիս» ընկերությունների հետ կնքված պայմանագիր
1	<b>Մարուցվող ծառայությունը</b>	Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայություններ	Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայություններ
2	<b>Պայմանագրի գեսակ</b>	հանրային-մասնավոր	հավատարմագրային կառավարում
3	<b>Պայմանագրի գործողության ժամկետը</b>	10 տարի	10 տարի
4	<b>Մասնավոր կողմին ներդրումները</b>	10 մլն դրամ	-
5	<b>Հանրային կողմին ներդրումները</b>	-	փոխառությունների մասով պարտավորությունների մարում
6	<b>Հանրային կողմին հասույթ (ամսական)</b>	ընդհանուր ծավալի 30 %	100 մլն դրամ <sup>2</sup>
7	<b>Մասնավոր կողմին հասույթ (ամսական)</b>	ընդհանուր ծավալի 70 %	7 մլն. դրամ <sup>3</sup> (ներառյալ ԱԱՀ)
8	<b>Սոցիալական ազդեցություն</b>	1. Վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մասով պարբավորությունները (շուրջ 2 001 մլն ՀՀ դրամ): 2. Վճարովի ավտոկայանատեղերի համար սահմանվել են տեղական տուրքերի դրույթաչափեր	անփոփոխ

<sup>1</sup> 10 դրամա ընթացքում Երևան քաղաքի բյուջեից «Փարքինգ սիթի սերվիս» ընկերության կանոնադրական կափիկալում ներդրումներ կապարելու միջոցով կմարի ակդիվների ձեռք բերման համար վերցված փոխառությունների մասով պարբավորությունները (շուրջ 2 001 մլն ՀՀ դրամ):

<sup>2</sup> 1 200 մլն ՀՀ դրամը հաշվեկու դրամում գերազանցելու դեպքում մասնավոր կողմին որպես պարզևման կամաց աղյուսակային գումարի 10%-ի չափով

<sup>3</sup> 1 200 մլն ՀՀ դրամը հաշվեկու դրամում բյուջե չմուգքագրվելու դեպքում մասնավոր կողմը որպես գումանք պետք է վճարի հավաքագրված և 1200 մլն ՀՀ դրամի դրամում գումարի 10%-ի չափով

## **2013 թ. «Լոկատոր» և «Փարկինգ սիթի սերվիս» ընկերությունների կոնսորցիոնմի հետ կնքված պայմանագրի բացահայտված թերությունները**

1. Նախագծի առաջարկի հաստատման փուլում հանրային կողմը չի ներկայացրել ՀՄԳ մոդելի նկարագրությունը, ոիսկերի մատրիցը (հանրային և մասնավոր գործընկերների միջև ոիսկերի բաշխումը) և չի ապահովել նախագծի հանրային քննարկումներ (սոցիալական արդյունավետության հաշվարկ), ինչի արդյունքում այն բացասական արձագանք է ստացել հանրության կողմից:

2. Ըստ <<կառավարության 2012 թ. որոշման «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման» գործող կարգի հանրային կողմը նախագծի առաջարկը պետք է ներկայացներ <<կառավարություն և ՀՄԳ լիազոր մարմին, որոնք պետք է եզրակացնեն ստանալու նպատակով ուղարկեին ֆինանսների ոլորտում պետական լիազոր մարմին, համապատասխան ոլորտի պետական կառավարման մարմին: Գերատեսչական մարմինները սահմանված կարգով պետք է ներկայացնեին իրենց դրական կամ բացասական եզրակացնելունները, ինչն այս նախագծի պարագայում՝ ելնելով նախագծի բազմաթիվ թերություններից, լիարժեքորեն իրականացված չէ:

3. Հիմնավորված չէ նաև մասնավոր և հանրային կողմերի ավտոկանգառներից ստացվող եկամտի 70/30 հարաբերակցությունը, այս պայմաններում կայանման համար գանձվող գումարները չեն ուղղվելու քաղաքային բյուջե, դրանք տնօրինել է մասնավոր ընկերությունը: Փաստացի հանրային կողմն առաջնորդվել է «Փարկինգ սիթի սերվիսի» շահերից:

4. ՀՄԳ նախագծերի հաջող իրականացման անփոխարինելի պայման է պետական և համայնքային սեփականության օբյեկտների հարցում մասնավոր ընկերությունների գործունեության թափանցիկությունը, ինչը ենթադրում է բաց քաղաքականություն և մրցակցություն, ինչպես նաև հստակ ուղեցույցների և կանոնակարգերի մշակումը, ինչն այս նախագծի շրջանակներում չի ապահովվել:

## **2016 թ. «Լոկատոր» ընկերության հետ կնքված պայմանագիր**

1. Երևանի քաղաքապետարանը համաձայնության է եկել որպես նվիրատվություն ձեռք բերելու «Փարկինգ սիթի սերվիս» ընկերության 100 տոկոս բաժնեմասը: Գործարի արդյունքում վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման համար ներդրված

ակտիվները դարձել են համայնքային սեփականություն և ծառայության ձեռքբերման համար հանձնվել հավատարմագրային կառավարման «Լոկատոր» ՓԲԸ-ին:

2. Պայմանագրով հստակ սահմանված են այն նվազագույն արդյունքները, որոնք պետք է ապահովի «Փարկինգ սիթի սերվիս»-ը, և որոնք պետք է պակաս չլինեն նախորդ ժամանակահատվածում ձեռք բերված առավելագույն արդյունքից, որի դիմաց «Լոկատոր» ՓԲԸ-ն կվարձատրվի հստակ ամրագրված գումարի չափով:

3. Ավտոկայանատեղերի տուրքից Երևանի բյուջե հավաքագրվող գումարները (հանած ծախսերը), ըստ կանխատեսումների, առաջիկա տարիների ընթացքում կաճեն տարեկան առնվազն 100 մլն դրամով, իսկ դրանից հետո տարեկան առնվազն 400 մլն դրամով:

4. Նախագիծը համապատասխանեցրած է նաև բյուջետային կանխատեսումներին (1 200 մլն << դրամը հաշվետու տարում գերազանցելու դեպքում մասնավոր կողմին որպես պարզավճար կտրամադրվի գերազանցող գումարի 10%-ի չափով), ֆիսկալ ռիսկերին (1200 մլն << դրամը հաշվետու տարում բյուջե չմուտքագրվելու դեպքում մասնավոր կողմը որպես տուգանք պետք է վճարի հավաքագրված և 1200 մլն << դրամի տարբերությունը կազմող գումարի 10%-ի չափով):

5. Վճարովի ավտոկայանտեղերի համար սահմանված տեղական տուրքերի դրույթափերի փոփոխություն չի իրականացվել:

### **Համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի հասարակական (սոցիալական) արդյունավետության գնահատում**

Առաջին՝ նախածրագրային փոլիտ անհրաժեշտ է որոշել նախագծի հասարակական նշանակությունը և բացահայտել հասարակության վերաբերմունքը:

Դրա համար անհրաժեշտ է որոշել նախագծի նախնական սոցիալ-տնտեսական հիմնավորման չափորոշիչները.

- արդյոք նախագիծը համայնքի պատասխանատվության շրջանակներում է,
- արդյոք համայնքային տնտեսության տվյալ ոլորտը պահանջում է պետական և/կամ համայնքային աջակցություն,
- արդյոք կան տվյալ ոլորտի զարգացման պետական կամ տարածաշրջանային ծրագրեր, որին պատկանում է նախագիծը

- արդյոք առկա է նախագծի պետական կամ տարածաշրջանային ծրագրերում ներառելու հնարավորություն,
- արդյոք կա ծրագրի համաֆինանսավորման հնարավորություն պետական կամ տարածաշրջանային բյուջեից,
- սպառողների, հատկապես բնակչության համար հնարավոր առավելություններ, ներառյալ գոյություն ունեցող ծառայությունների ծավալի աճ, որակի բարելավում, նոր՝ նախկինում անհասանելի ծառայությունների ներդրում, ծառայությունների արժեքի կրճատում, ներկայիս մակարդակի պահպանում կամ ծառայությունների արժեքի բարձրացում որակի բարելավման պարագայում,
- ընդհանուր օգուտներ տվյալ ոլորտի համար, նոր տեխնոլոգիաների նոուիհանությունների ներգրավում, շուկայում ոլորտի մրցունակության բարձրացում, ներոլորտային մրցակցության բարձրացում,
- նախագծի իրականացման արդյունքում ազդեցությունը շրջակա միջավայրի և էկոլոգիական անվտանգության վրա,
- ազդեցությունը բնակչության զբաղվածության ցուցանիշների վրա,
- նախնական բյուջեի արդյունավետությունը, նախագծի իրականացման հետ կապված բյուջեի սպասվող ծախսերը և եկամուտները:

Նախագիծը նախնական սոցիալ-տնտեսական հիմնավորմամբ ներկայացվում է պոտենցիալ շահագրգիռ կողմերի, գործարար միությունների, հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ հանրային քննարկման:

Քննարկման նպատակն է բացահայտել նախագծի թերությունները, դրա իրականացման հնարավոր վտանգները, նախագծի հանրային (սոցիալական) նշանակության փորձագիտական գնահատականների հավաքագրումը: Իշխանությունների համար ևս մեկ կարևոր նպատակ է, բացահայտել սոցիալական, հնարավոր հեղինակային կորուստի ռիսկերը և հասնել դրական հասարակական կարծիքի նախագծի իրականացման նպատակահարմարության մասին:

Հանրային կարևորության գնահատման արդյունքը նախագծի մեկնարկն է, եթե գնահատումները հիմնականում դրական են, կամ նախագծից հրաժարվելու որոշումը, եթե գնահատումները հիմնականում բացասական են: Նախագծի հանրային կարևորու-

թյան բացասական գնահատականներով նախագծի մեկնարկի որոշումը հղի է ձախողման և զգալի հեղինակային կորուստների բարձր ռիսկով:

Նախագծային փաստաթղթերի նախապատրաստման փուլում անհրաժեշտ է նախագծում հիմնավորել հանրային նշանակությունը որոշող գործոնները, չեզոքացնել սպառնալիքները և հանրային կարևորությունը նվազեցնող գործոնները:

Նախքան նախագծի հաստատելը սոցիալ-տնտեսական հիմնավորումը պետք է կրկին վերադարձնել հանրային քննարկման, բացատրելով գնահատման բացասական գործոնների վերացմանն ուղղված նախագծում իրականացված շտկումները և նախագծի նախկին հակառակորդների համաձայնությանը հասնելու համար:

### **Համայնքներում հանրային-մասնավոր համագործակցության նախագծերի ֆինանսատնտեսական արդյունավետության գնահատում**

Որպես կանոն, հանրային մարմիններն ուղղակիորեն չեն կառավարում նախագծի իրականացման գործընթացը: Նախագծի իրականացման ֆինանսական և տնտեսական արդյունավետության հաշվարկների մանրամասն թիզնես պլանը նախապատրաստում է նախագծի կատարողը: Ըստ այդմ՝ հանրային մարմինները մասնակցում են հանրային-մասնավոր գործընկերության նախագծին սահմանափակ ծավալով: Նախնական փուլում, եթե տեղական ինքնակառավարման մարմինը նախապատրաստում է ներդրումային առաջարկ, ապա անհրաժեշտ է նախագծի նախնական ֆինանսատնտեսական արդյունավետության գնահատում, որպեսզի գնահատվի նախագծի գրավչությունը պոտենցիալ ներդրողների համար:

Համաձայնագրի կնքման նախապատրաստման փուլում անհրաժեշտ է գնահատել նախագծի ֆինանսատնտեսական արդյունավետությունը համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի (բյուջեի արդյունավետության) առումով, հատկապես, եթե ակնկալվում է բյուջետային ֆինանսավորում:

Այսպիսով, համայնքային-մասնավոր գործընկերության նախագծերի ֆինանսատնտեսական արդյունավետության գնահատումն իրականացվում է հետևյալ նպատակների համար.

1. Ներդրումային առաջարկի նախապատրաստման փուլում (սոցիալ-տնտեսական հիմնավորման նախապատրաստում) նախագծի իրագործելիության հիմնավորման և ներդրումների ներգրավման համար: Այս դեպքում ՀՄԳ նախագծի ֆինանսա-տնտե-

սական արդյունավետության գնահատումն իրականացվում է հանրային մարմնի (կամ նրա պատվերով՝ երրորդ կազմակերպության) կողմից: Այստեղ նախապես հաշվարկվում է նաև բյուջեի արդյունավետությունը:

2. Համաձայնագրի կնքման նախապատրաստման փուլում (մրցութային փաստաթղթերի նախապատրաստում) գործընկերների ընտրության հիմնարար չափանիշների որոշման համար:

3. Նախագծի իրականացման փուլում, անհրաժեշտության դեպքում, պայմանագրի պայմանները կարգավորելու, նախագծին աջակցելու և այն ավարտելու համար բյուջետային միջոցների ծախսերի արդյունավետությունը որոշելու և նախագծի հաջողությունը ընդհանուր գնահատելու համար:

Ներկայացնենք հիմնական մոտեցումները, որոնք պատկերացում են տալիս ներդրումային նախագծերի ֆինանսատնտեսական արդյունավետության գնահատման ընդհանուր մեթոդաբանության մասին:

Ներդրումային առաջարկության նախապատրաստման փուլում տեղական ինքնակառավարման մարմինը պետք է սահմանի մի շարք հիմնարար չափանիշներ, որոնք կորոշեն նախագծի ֆինանսատնտեսական արդյունավետությունը և կշահագրգուն պոտենցիալ ներդրողներին: Այս առումով առավել կարևոր չափանիշներ են ներդրումների ծավալը, նախագծի իրականացման և ներդրումների փոխհատուցման ժամկետները: Անհրաժեշտ ներդրումների ծավալը որոշվում է աշխատանքի և նյութերի, ձեռք բերված հիմնական միջոցների և վարչական ծախսերի արժեքների հիման վրա, որոնք հաշվարկվում են նախագծի նախնական փուլում՝ միջին շուկայական գներով: Այն դեպքում, եթե նախագիծն իրականացվելու է համայնքի համաֆինանսավորմամբ, պետք է հաշվարկել համայնքի ֆինանսական կարողությունները և բյուջեի նախատեսվող ֆինանսավորման չափը: Մասնավորապես համաձայնագրի օբյեկտի մատուցած ծառայությունների իրացման հաստատված սակագները (որը բնորոշ է կոմունալ ենթակառուցվածքներին) կարող են անբավարար լինել կանխատեսելի ժամկետում մասնավոր ներդրումների վերադարձն ապահովելու համար: Այս դեպքում նախագծի իրականացումն անիրազորելի է առանց համաֆինանսավորման: Համաֆինանսավորման չափը որոշվում է համայնքային բյուջեի եկամտային հնարավորություններից, կապիտալի շուկայում բյուջետային փոխառության հնարավորություններից, հատուցվող կամ անհատուց-

պայմաններով մարզային կամ պետական բյուջեների համաֆինանսավորման հնարավորություններից ելնելով:

Նույն փուլում որոշվում են նաև բյուջեի անուղղակի համաֆինանսավորման հնարավորությունները հարկային խրախուսման տեսքով: Կարող է կիրառվել նաև տեղական ինքնակառավարման մարմինների երաշխիքների տրամադրում, որոնց չափը, ինչպես և համայնքային փոխառությունների չափը սահմանափակվում է համայնքային պարտքի թույլատրելի չափորոշիչներով:

Ներդրումների փոխառուցելիության ժամկետները որոշելու համար կարող է պահանջվել մարքեթինգային հետազոտություն, ինչը որոշ դեպքերում նպատակահարմար է իրականացնել նաև համայնքային-մասնավոր գործընկերության նախագծի նախնական կազմման փուլում: Մարքեթինգային հետազոտությունն անհրաժեշտ է ապրանքների և ծառայությունների պահանջարկի և գնային քաղաքականության կանխատեսման համար: Նախագծի փոխառուցելիության ժամկետը որոշվում է վարկերի միջին շուկայական արժեքի, ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի միջին շուկայական գներով և նախագծի շահութաբերության կանխատեսմամբ:

Կախված համայնքային-մասնավոր գործընկերության ծնից կարող են պահանջվել նաև այլ չափորոշիչներ:

Համայնքի շահերի տեսակետից համայնքային-մասնավոր գործընկերային նախագծի նպատակահարմարության գնահատման համար որոշվում է կանխատեսվող բյուջետային արդյունավետությունը:

Բյուջետային արդյունավետությունը հաշվարկվում է որպես նախագծի իրականացման արդյունքում ստացված բյուջեի դիսկոնտավորված դրամական եկամուտների և նախագծի իրականացմանն ուղղված բյուջեի դիսկոնտավորված ծախսերի տարբերություն: Դրական հաշվեկշռի (ընդհանուր եկամուտների և ընդհանուր ծախսերի տարբերություն) դեպքում բյուջեի արդյունավետությունը դրական է համարվում:

Բյուջեի արդյունավետությունը հաշվարկվում է նախագծի իրականացման հետ կապված բյուջետային միջոցների հոսքերի որոշման հիման վրա:

Հավաքագրվող միջոցներից են.

- հարկերից, ակցիզներից, տուրքերից հավաքագրումները և մասհանումները արտաբյուջետային հիմնադրամներ,

- Եկամուտները նախագծով նախատեսված օբյեկտի շինարարության և շահագործման, լիցենզավորման, մրցույթների և տենդերների նախագծման և մշակման աշխատանքներից,
  - նախագծի մասնակիցներին համապատասխան բյուջեից տրված վարկերի մարման համար վճարումներ,
  - հարկային վարկերի մարման համար վճարումներ:
- Բյուջետային միջոցների ծախսերն են.
- նախագծի իրականացման համար բյուջետային ռեսուրսների տրամադրում,
  - ներդրումային վարկի ձևով բյուջետային ռեսուրսների տրամադրում,
  - բյուջետային միջոցների անհատույց տրամադրում (սուբսիդավորում),
  - որոշակի գնային քաղաքականության իրականացման և սոցիալական գերակայությունների ապահովման հետ կապված բյուջետային դուտացիաներ:
- Նախագծի արդյունավետությունը գնահատելիս հաշվի առնելով ոիսկի գործոնը ծախսերի մեջ ներառվում է նաև ապահովագրական վճարները:

Նախագծի բյուջետային արդյունավետության գնահատման ժամանակ հաշվի են առնվում նաև բյուջետային միջոցների Եկամուտների և ծախսերի փոփոխությունները, պայմանավորված նախագծի ազդեցությամբ կողմնակի ձեռնարկությունների և բնակչության վրա, եթե նախագիծը այդպիսի ազդեցություն է գործում:

Նախապատրաստական աշխատանքների արդյունքում պատրաստվում և իրապարակվում է ներդրումային առաջարկ: Եթե պոտենցիալ ներդրողները հետաքրքրություն են ցուցաբերում, ապա դիմում են լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար: Պոտենցիալ ներդրողների հարցումները կարող են ծառայել որպես տեղեկատվություն ներդրումային առաջարկի մշակման և դրա շտկման համար:

Պոտենցիալ ներդրողների հետաքրքրության դեպքում նախապատրաստվում են մրցութային փաստաթղթերը և հայտարարվում է մրցույթ:

Համայնքային-մասնավոր գործընկերության նախագծի իրականացման փուլերում ծրագրի ֆինանսատնտեսական արդյունավետությունը գնահատվում է վերը նշված սկզբունքների համաձայն, սակայն կանխատեսվող տվյալների փոխարեն օգտագործվում են փաստացի տվյալներ:

**Բյուջետային և սոցիալական արդյունավետության հաշվարկը** կատարվում է ներդրումային նախագծի հայտում ներկայացված ներդրումային նախագծի տվյալների հիման վրա: Տվյալները հաշվարկվում են ընթացիկ գներով:

Եթե նախագծի իրականացումը տևում է մի քանի տարի, բյուջետային և սոցիալական արդյունավետության ստորև նշված ցուցանիշների հաշվարկը կատարվում է նախագծի շահագործման ողջ ժամանակահատվածի համար և բոլոր ցուցանիշները հաշվարկվում են ընթացիկ գներով:

Հաշվարկներում կիրառվում են հետևյալ ցուցանիշները.

Ն - ներդրումային նախագծի յուրաքանչյուր փուլում համայնքային բյուջեից նախատեսվող ներդրումների ծավալը: Ցուցանիշը հաշվարկվում նախագծի յուրաքանչյուր փուլում ներդրված դրամական միջոցների ծավալների հիման վրա, ներառյալ նախագծային և հետազոտական աշխատանքները, նախագծային և նախահաշվարկային փաստաթղթերի կազմման ծախսերը, շինմոնտաժային աշխատանքները, սարքավորումների արժեքը, որը ներառված չէ նախագծային և նախահաշվարկային փաստաթղթերի ծախսերում:

$\varphi_2$  - ներդրումային օբյեկտը շահագործման հանձնելուց հետո (մեկ տարի) տրամադրված պլանավորված ծառայությունների քանակը (աշխատանք, արդյունքի միավորներ): Հաշվարկվում է ներդրումային նախագծի տվյալների հիման վրա: Ներդրումային նախագծի նախաձեռնողը հիմնավորումներում ներկայացնում է միասնական չափանիշ, որը բնութագրում է ծառայությունների մատուցման գործունեության արդյունքը (աշխատանքների կատարում, արդյունքի միավոր):

$\sigma_2$  - նախագծի իրագործման արդյունքում պարտավորությունների ծրագրավորված չափը: Ցուցանիշը հաշվարկվում է ներդրումային օբյեկտը շահագործման հանձնելուց հետո դրա գործունեության համար բյուջեի տարեկան ծախսերի ցուցանիշների հիման վրա:

$\varphi_1$  - տվյալ ժամանակահատվածում (մեկ տարում) համայնքի սպասարկվող տարածքում մատուցված ծառայությունների քանակը (աշխատանք, արդյունքների միավոր): Ցուցանիշը ներկայացնում է համայնքի սպասարկվող տարածքում բոլոր օբյեկտների կողմից մատուցված ծառայությունների հանրագումարը: Ներդրումային նախագծի

հիմնավորումներում կիրառվում է ծառայությունների մատուցման արդյունքը բնութագրող միասնական չափանիշ:

$S_1$  – տվյալ ժամանակահատվածում համայնքի սպասարկվող տարածքում ծառայությունների մատուցման համար (աշխատանք, արդյունքների միավոր) բյուջեի ծախսերն (մեկ տարվա ընթացքում) ընթացիկ գներով: Ցուցանիշը համայնքի տարածքում տվյալ ծառայությունը (աշխատանք, արդյունքի միավոր) մատուցող բոլոր օբյեկտների ծառայություններին ուղղված ծախսերի հանրագումարն է:

$S_2$  - ներկա պահին (մեկ տարի) համայնքի սպասարկվող տարածքում ծառայությունների նկատմամբ (աշխատանք, արդյունքների միավոր) պահանջարկը: Նախագծի նախաձեռնողը տրամադրում է ցուցանիշի վերաբերյալ հիմնավորված հաշվարկներ:

$S_3$  - ներդրումային օբյեկտը շահագործման հանձնելուց հետո պլանավորված ծառայությունների (աշխատանք, արդյունքի միավոր) պահանջարկը համայնքի սպասարկվող տարածքում (տարվա ընթացքում): Նախաձեռնողը տրամադրում է հիմնավորված հաշվարկներ:

### **Նախագծային տվյալների հիմնավորում**

$S_1$  և  $S_2$  ցուցանիշների համար հաշվարկված արժեքների հիմնավորումները կատարվում է հետևյալ քանաձների միջոցով.

$$S_1 = \varrho O_1 \times \Theta O_1, \quad S_2 = \varrho O_2 \times \Theta O_2,$$

որտեղ՝

$\varrho O_1$  - համայնքի սպասարկվող տարածքում բնակվող մեկ օգտատիրոջ համար մատուցվող ծառայությունների (աշխատանք, արդյունքի միավոր) քանակի ներկայիս արժեքը,

$\Theta O_1$  - սպասարկվող տարածքում համայնքային ծառայությունից (աշխատանք, արդյունքի միավոր) օգտվողների ներկայիս թիվը,

$\varrho O_2$  - սպասարկվող տարածքում բնակվող յուրաքանչյուր օգտատիրոջ համար նախագծի ավարտին նախատեսված ծառայությունների (աշխատանք, արդյունքի միավոր) քանակը.

$\Theta O_2$  - սպասարկվող տարածքում նախագծի ավարտին նախատեսվող համայնքային ծառայություններից (աշխատանք, արդյունքի միավոր) օգտվողների թիվը:

$\rho_1$ ,  $\rho_2$ ,  $\theta_1$ ,  $\theta_2$  ցուցանիշների արժեքների հաշվարկը իրականացվում է հետևյալ մոտեցումների հիման վրա:

Աղյուսակ 12

**$\rho_1$ ,  $\rho_2$ ,  $\theta_1$ ,  $\theta_2$  ցուցանիշների հաշվարկի սկզբունքը**

Հաշվարկի սկզբունքը	$\rho_1$	$\rho_2$	$\theta_1$	$\theta_2$
Սպասարկող տարածքում համայնքային ծառայությունների (աշխատանք, արդյունքի միավոր) տրամադրման կարգը սահմանող նորմատիվակարական ակտերի կիրառում	+	+		
Սպասարկող տարածքում սոցիոլոգիական հետազոտության անցկացում ծառայությունների (աշխատանք, արդյունքի միավոր) պահանջարկի և դրանցից օգտվողների քանակի գնահատման նպատակով	+	+	+	+
Սպասարկող տարածքում ծառայությունների (աշխատանք, արդյունքի միավոր) պահանջարկի և սպառողների քանակի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն	+	+	+	+
Սպասարկող տարածքում ծառայությունների (աշխատանք, արդյունքի միավոր) պահանջարկի և սպառողների քանակի փոփոխությունների կանխատեսում		+		+

**Բյուջետային էֆեկտի և բյուջետային արդյունավետության հաշվարկ**

Ներդրումային նախագծի բյուջետային էֆեկտը՝  $\beta$ , հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\beta = \left( \frac{\bar{\rho}_1}{\rho_1} - \frac{\bar{\rho}_2}{\rho_2} \right):$$

Բյուջետային էֆեկտը արտացոլում է համայնքի բյուջեի տնտեսումը ծառայությունների մատուցման ժամանակ բյուջետային միջոցների առավել արդյունավետ օգտագործմամբ պայմանավորված: Խնայողությունը արտացոլում է նախագծի իրականացման արդյունքում ծառայության տրամադրման ծախսերի կրճատումը:

Բյուջետային արդյունավետությունը՝  $\beta$ , հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\beta = \frac{\frac{\rho_1}{\bar{\rho}}}{\frac{1}{\rho_2}} :$$

Բյուջետային արդյունավետությունը արտացոլում է խնայողությունների և բյուջետային ներդրումային ծախսերի հարաբերակցությունը միավոր ծառայություն տրամադրելու արդյունքում:

## **Սոցիալական էֆեկտի և սոցիալական արդյունավետության հաշվարկ**

Սոցիալական էֆեկտը, կախված օբյեկտի տեսակից, հաշվարկվում է տարբեր ձևերով.

1) Ներդրումային օբյեկտի շինարարության սոցիալական էֆեկտի (ՍԷ) հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$ՍԷ = \left( \frac{\rho_1 + \rho_2}{S_1} - \frac{\rho_2}{S_2} \right) \times \frac{\bar{O}_2}{\rho_2} :$$

2) Ներդրումային օբյեկտի վերակառուցման սոցիալական էֆեկտի (ՍԷ) հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$ՍԷ = \left( \frac{\rho_2}{S_2} - \frac{\rho_1}{S_1} \right) \times \frac{\bar{O}_2}{\rho_2} :$$

Օբյեկտների շինարարության կամ վերակառուցման ներդրումային նախագծերի սոցիալական էֆեկտը արտացոլում է տվյալ ծառայության նկատմամբ պահանջարկի փոփոխությանը համապատասխան բնակչությանը մատուցվող ծառայության փոփոխության չափը: Բնակչի համար ծառայության մատուցման փոփոխությունն արտահայտվում է դրամական միավորներով:

3) սոցիալական էֆեկտի (ՍԷ) հաշվարկը վթարային ներդրումային օբյեկտի համար.

$$ՍԷ = \frac{\rho_1}{S_1} \times \frac{\bar{O}_2}{\rho_2} :$$

Վթարային օբյեկտի սոցիալական էֆեկտի տնտեսական բովանդակությունը կայանում է բնակչությանը մատուցվող մեկ տեսակի ծառայության տրամադրման փոփոխությունն ըստ դրա պահանջարկի անհրաժեշտության (վթարային օբյեկտի չվերանորոգման դեպքում, բնակչությունը կնվազեցնի այդ ծառայությունների անհրաժեշտության սեփական կարիքը): Փոխելով անվտանգության ծառայությունները բնակիչներին արտահայտված դրամական միավորներով: Բնակչի համար ծառայության մատուցման փոփոխությունն արտահայտվում է դրամական միավորներով:

Սոցիալական արդյունավետությունը՝ ՍԱ, հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՍԱ = \frac{ՍԷ}{\frac{U}{\rho_2}} :$$

Սոցիալական արդյունավետությունը արտահայտվում է տրամադրված միավոր ծառայությունից ստացված սոցիալական էֆեկտի և բյուջետային ներդրումային ծախսերի հարաբերությամբ:

### **Ֆինանսական էֆեկտի հաշվարկ**

Ֆինանսական էֆեկտը՝ ֆԷ, հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՖԷ = \sum_{i=1}^S \frac{t_i + lu_i + L \times U_2 - u_i - \bar{C}O_i}{(1+\eta)^i},$$

որտեղ՝

$t_i$  - ներդրումային նախագծի իրականացման արդյունքում համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների աճը և ժամանակահատվածում,

$lu_i$  - ներդրումային նախագծի իրականացման արդյունքում համայնքի բյուջեի խնայողությունները՝ որտեղ ներառված չեն շահագործման ծախսերը և ժամանակահատվածում,

$S$  - ներդրումային ծախսերը  $S$  ժամանակահատվածում,

$\bar{C}O_i$  - նախագծի իրագործման արդյունքում ապագա շահագործման ծախսերը և ժամանակահատվածում,

$\eta$  - դիսկոնտավորման դրույքաչափը  $S$  ժամանակահատվածում,

$S$  - ցուցանիշների հաշվարկման ժամանակահատվածը, որը հավասար է նախագծի իրականացման և շահագործման տարիների (որի ընթացքում հաշվարկված են շահագործման ծախսերը) (օբյեկտի շահագործման հանձնելուց ոչ պակաս, քան 3 տարի) հանրագումարին,

$L$  - ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում ստեղծված լրացուցիչ աշխատատեղերի քանակը,

$U_2$  - միջին տարեկան աշխատավարձը ներդրումային նախագծի արդյունքում ստեղծված աշխատավայրում: Ցուցանիշի բացակայության դեպքում կիրառվում է տվյալ ոլորտում միջին տարեկան աշխատավարձի ցուցանիշը:

ՀՄԳ նախագծի գործնական գնահատումը ներկայացված բանաձևերի օգնությամբ առավել տեսանելի կդարձներ դրանց արդյունավետությունը: Սակայն մեր կողմից առաջարկվող մեթոդաբանությունը, մի շարք օբյեկտիվ պատճառներով, ներկայումս հնարավոր չէ ամբողջությամբ կիրառել: Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում իրականացված և ներկայացված ՀՄԳ նախագծերի մի շարք

մեթոդաբանական թերություններով և բացթողումներով. մասնավորապես՝ դիտարկած գրեթե բոլոր նախագծերում ներկայացված չեն որոշ կարևորագույն ցուցանիշներ, որոնք թույլ կտային կիրառել մեր կողմից առաջարկվող գնահատման մեթոդաբանությունը: Մեթոդաբանության ամբողջական և արդյունավետ կիրառության համար անհրաժեշտ են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են ներդրումային նախագծի յուրաքանչյուր փուլում համայնքային բյուջեից նախատեսվող ներդրումների ծավալը (որը ներառում է նաև հետազոտական, նախագծային, նախահաշվարկային փաստաթղթերի կազման նպատակով իրականացված ծախսերը), ներդրումային օբյեկտը շահագործման հանձնելուց հետո սպասվելիք ծառայությունների քանակը (որը հաշվարկվում է ներդրումային նախագծի տվյալների հիման վրա), տվյալ ժամանակահատվածում համայնքի սպասարկվող տարածքում մատուցվող ծառայությունների քանակը (որը ներկայացնում է համայնքի տարածքում բոլոր օբյեկտների կողմից մատուցված ծառայությունների հանրագումարը) և այլն: Հարկ է նաև նշել, որ որոշ ցուցանիշների հաշվարկման համար առաջանում է փորձագիտական եզրակացությունների և սոցիոլոգիական հարցումների անցկացման անհրաժեշտություն, ինչը համայնքային մակարդակում իրականացնելը բավականին ծավալուն աշխատանք է: Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, ուզում ենք փաստել, որ սեփական նախաձեռնությամբ տվյալ ցուցանիշների ստացմանն ու բացահայտմանն ուղղված աշխատանքը նպատակահարմար չէր լինի կատարել ատենախոսության շրջանակներում:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՀՄԳ ոլորտում սպասվող բարեփոխումները և այդ ուղղությամբ արդեն իսկ սկսված գործընթացը, վստահորեն կարող ենք ասել, որ մոտ ապագայում հնարավոր կլինի ամբողջությամբ կիրառել մեր առաջադրած մեթոդաբանությունը: Այս համատեքստում առանցքային նշանակություն ունի «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որի նախագիծը այս պահին գտնվում է Կառավարության քննարկման փուլում: Այս օրենքի ընդունումը հնարավորություն կընձեռի հետագայում հստակեցնելու նախագծերին վերաբերող պահանջները, ներառելու ՀՄԳ նախագծի առաջարկի նախապատրաստման, գործընկերների ընտրության հիմնարար չափորոշիչների հաստատման, ՀՄԳ նախագծի իրականացման անհրաժեշտ ցուցանիշները, ինչն էլ հնարավոր կդարձնի ներկայացված հաշվարկների կատարումը:

Համայնքներում ՀՄԳ ինստիտուցիոնալ ծների արդյունավետ և գրագետ ծնապորումն ու զարգացումը անհրաժեշտ պայմաններ կստեղծի ՀՀ մարզերում տնտեսական աճի և պոտենցիալ ներդրողների ներգրավման համար, ինչը կհանգեցնի տարածաշրջանային և տեղական բյուջեների եկամուտների աճի:

Զարգացնելով և կատարելագործելով ՀՄԳ մեխանիզմները ՀՀ համայնքներում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հնարավորություն կստեղծեն մասնավոր կապիտալ տեսքով լրացուցիչ միջոցներ ներգրավելու առաջնահերթ ենթակառուցվածքային նախագծերում (տրանսպորտ, էլեկտրահաղորդակցության և կապի գծեր, տեղեկատվական համակարգեր և այլն), սոցիալական նշանակության (կրթություն, գիտություն, առողջապահություն, մշակույթ, սպորտ, հասարակական անվտանգություն և այլն), համայնքային տնտեսության (հասարակական տրանսպորտ, կոմունալ տնտեսություն, տեղանքի բարեկարգում և այլն) օբյեկտներում և այլն:

Հանրային-մասնավոր գործընկերության ծնով պետության և գործարար կառույցների փոխգործակցության մեխանիզմների արդյունավետության բարձրացման գործիքներն են.

- *հարուկ գոնութեսական գորիների սրեղծումը և դրանց հետագա զարգացումը.*
- *օրենքով նախարեսված ՀՄԳ պայմանագրերի օգտագործման հսկակ կառուցակարգերի և սկզբունքների մշակումը.*
- *պետական զարգացման հիմնադրամների դերի ամրապնդումը,*
- *ենթակառուցվածքի օբյեկտների սրեղծումը և զարգացումը (կրեխնոպարկեր և արդյունաբերական պարկեր, արդարական քլասսիֆերներ):*

Համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության զարգացման նպատակով մասնավոր գործընկերներին տրամադրվող պետական աջակցության ծներն են.

- 1) *հարկային արդյունությունների դրամադրումը ՀՀ հարկային օրենսգրքի և համայնքների նորմատիվականացման ակտերի համապատասխան,*
- 2) *համայնքի գույքի վարձակալման արդյոնությունների դրամադրում.*
- 3) *վարկի օգտագործման դրույթի մի մասի սուբսիդավորում համայնքի բյուջեի հաշվին,*
- 4) *կանոնադրական կապիտալում ներդրումների ապահովումը.*
- 5) *փեղեկարգվական և խորհրդագրվական աջակցություն:*

ՀՄԳ ձևերի ողջ բազմազանությամբ հանդերձ դրանց հիմնական նպատակը մասնակիցների շահույթն է: Միաժամանակ, ամեն կողմի համար ակնկալվող արդյունքը կարող է գտնվել հակառակ բնեուում և ունենալ ֆինանսական ցուցանիշ-ներին չառնչվող չափանիշներ:

Ինչպես ներկայացվել է հետազոտության առաջին գլխում, մինչ օրս հստակեցված չէ հանրային-մասնավոր գործընկերության կառուցակարգերի ընդհանուր ըմբռնումն ինչպես պետական, այնպես էլ համայնքի մակարդակներում, որը պետք է հիմք ծառայի տարածաշրջանում տնտեսական կառավարման արդյունավետ մոդելի ձևավորման համար: Հետազոտության ընթացքում հանդիպեցինք իրականացված ՀՄԳ նախագծերի մասին տեղեկատվության բացի: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք ստեղծել ՀՄԳ ազգային կենտրոն: Այսօր ՀՀ-ում ՀՄԳ մոդելով նախագծեր իրականացնում են ինչպես ՀՀ կառավարությունը, այնպես էլ ՀՀ նախարարությունները, ՀՀ մարզերը և համայնքները: Այդ նախագծերի վերաբերյալ տեղեկատվությունը շատ անգամ անհասանելի է: Այնինչ ՀՄԳ նախագծերի մեխանիզմների կիրառման և հետագա զարգացման համար արդեն իրականացված նախագծերի արդյունքների վերլուծությունը էական ազդեցություն կարող է ունենալ ինչպես հանրային մարմինների, այնպես էլ մասնավոր գործընկերների համար:

Այդ իսկ պատճառով ՀՀ ՀՄԳ ազգային կենտրոնի ձևավորումը համարում ենք իրատապ:

1. **Նպարակը.** Նպաստել մասնավոր ներդրումների ներգրավմանը, արդյունավետ կառավարչական լուծումների և ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով սատարել պետական ենթակառուցվածքների զարգացմանը՝ բնակչության կենսամակարդակի բարելավման համար:

2. **Խնդիրները.** ՀՀ հանրային-մասնավոր գործընկերային նախագծերի շուկայի կանոնավոր վերլուծություն, իրականացված և նոր գործարկվող ենթակառուցվածքային նախագծերի տեղեկատվության պահպանում:

- ՀՀ հանրային-իրավական կառույցներում հանրային-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառման կարիքների, հնարավորությունների և խոչընդուների վերլուծություն:

- <<և ԵԱՏՄ երկրներում հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի իրականացման և գործարկման օժանդակություն:
- Բարձրացնել Ենթակառուցվածքի շուկայի մասնակիցների իրավասությունները հանրային-մասնավոր գործընկերության ոլորտում և աջակցել <<մարզերում և համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության ոլորտում նախագծային թիմերի ձևավորմանը և պատրաստմանը:
- Հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի և օրենսդրական նախաձեռնությունների խթանման համար իշխանությունների հետ փոխգործակցություն:
- Ենթակառուցվածքային նախագծերում <ՄԳ մեխանիզմների կիրառման արդյունավետության գնահատում և համեմատական առավելության հիմնավորում:
- Ենթակառուցվածքի շուկայում գործող հանրային-իրավաբանական կառուցների և գործընկեր ընկերությունների տվյալների բազայի և վարկանիշի պահպանում:
- Սոցիալ-քաղաքական ռիսկերի կառավարում և <ՄԳ ոլորտում նախագծերի և օրենսդրական նախաձեռնությունների տեղեկատվական աջակցություն:

<< <ՄԳ ազգային կենտրոնը կապահովի պոտենցիալ ներդրողների փոխգործակցությունը համայնքային իշխանությունների և ներդրումային հիմնադրամների հետ: Ներդրումային նախագծերի նախաձեռնուղղներին կաջակցի <ՄԳ փոխգործակցության և համագործակցության ձևերի մասին տեղեկատվությամբ: Կմշակի համայնքներում <ՄԳ կառուցակարգերի և ձևերի զարգացման ծրագրեր և կիրականացնի դրանց իրականացման վերահսկողություն: Կաջակցի համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի համապատասխանեցմանը տարածաշրջանային զարգացման ռազմավարությանը:

### **3.2. Հանրային և մասնավոր գործընկերության**

#### **կատարելագործումը և դերը ՀՀ տեղական**

#### **ինքնակառավարման համակարգի բարեփոխումների գործում**

ՀՀ համայնքները, համայնքային կազմակերպությունների և համայնքապետարանների աշխատակազմերի միջոցով, բնակչությանը տրամադրում են բազմաթիվ ծառայություններ՝ աղբահանություն, սանհտարական մաքրում, համայնքի տարածքի կանաչապատում, համայնքի բարեկարգում, ճանապարհների կառուցում և շահագործում, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ծևակերպում, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների տրամադրում և այլն: Այս բնագավառում անհրաժեշտ է.

- բարելավել համայնքների ենթակառուցվածքները և ավելի շատ միջոցներ հատկացնել համայնքային ծառայությունների մատուցմանը,
- ընդլայնել համայնքի բյուջեի եկամուտների աղբյուրները ՀՄԳ նախագծերի շնորհիվ, ինչը հնարավորություն կտա լուծելու համայնքների կողմից ծառայությունների ամբողջական ծավալով մատուցման խնդիրը,
- համայնքային ծառայությունների բարելավմանը կարող է նպաստել նաև համայնքների խոշորացման գործընթացը, որի արդյունքում ինչպես տնտեսված միջոցները, այնպես էլ խոշորացման արդյունքում միավորված միջոցները հնարավոր կդարձնեն ՀՄԳ կառուցակարգերով նախագծերի իրականացումը և հիմնականում կուղղվեն համայնքների կողմից ծառայությունների մատուցմանը:

Հանրային-մասնավոր գործընկերության ձևը որոշելիս անհրաժեշտ է սահմանել համայնքի առաջնահերթ ոլորտների ընտրության չափորոշիչներ: Առաջնահերթությունները յուրաքանչյուր համայնքի համար կարող են տարբեր լինել. դրանց որոշման մեթոդաբանությունը միայն կարող է նման լինել: Պետք է նաև հաշվի առնել, որ հանրային-մասնավոր գործընկերությունն ուղղակիորեն երկու կողմ ունի, և կողմերից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ իբրև հանրային-մասնավոր գործընկերության նախագծի նախաձեռնող: Բայց եթե համայնքները որոշ չափով ծանոթ են առկա խնդիրներին ու

նպատակներին, ապա գործարար գործընկերների համար նման տեղեկատվությունը հիմնականում անհասանելի է:

Բացի այդ, պետք չէ մոռանալ երրորդ կողմի՝ բնակչության մասին, ում անունից և որի օգտին պետք է գործեն տեղական իշխանությունները: Հակառակ դեպքում կարող է պարզվել, որ գործընկերային նախագիծը, որը շահավետ է գործընկերության անմիջական կողմերի համար, ընդհանրապես չի բավարարում հանրության պահանջները: Հարկատուների՝ իրականացվող նախագծից դժգոհությունը կարող է հանգեցնել ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձանց հեղինակության անկման, այլև գործարարության ֆինանսատնտեսական շոշափելի կորուստների:

Վերջապես՝ հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի հիմնավորման համար անհրաժեշտ են նախնական պայմաններ, որոնք կշահադրեն նախագծի նախաձեռնողներին: Այդպիսի պայմաններ են նախագծի հանրային նշանակությունը և դրա ճանաչման երաշխիքները, ոեսուրսների տրամադրումը, այդ թվում՝ ֆինանսական: Նախնական պայմանները կարող են որոշվել ըստ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև տնտեսության առանձին ճյուղերի զարգացման նպատակային ծրագրերի:

Տարածաշրջանային և համայնքային բյուջեների սեփական եկամուտների սղության պատճառով մարգերում և համայնքներում ներդրումային հնարավորությունները խիստ սահմանափակ են: Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը թույլ է տալիս բացահայտել ներդրումների հեռանկարային բնագավառները: Սակայն Հայաստանի ՏԻ համակարգում երկարաժամկետ ծրագրավորումը դեռևս լայնորեն չի կիրառվում, 2017 թ-ին վիճակն առանձնապես չի փոխվել, ինչը պայմանավորված է համայնքների ֆինանսական ոեսուրսների խիստ սահմանափակությամբ, համայնքներում որակյալ կադրերի բացակայությամբ, անտեղյակությամբ, ՏԻ ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքով և այլ պատճառներով: 2017 թ. նոյեմբերի 9-ի Կառավարության նիստում հավանության արժանացավ 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագիրը, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված էր ՀՀ կառավարության 2016 թ. հովիսի 29-ի նիստի N 29 արձանագրային որոշմամբ «ՀՀ 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ սահմանված ռազմավարական նպատակների համար չափորոշիչների ապահովմամբ: Այն ընդգրկում է համա-

ձայնեցված և առաջնահերթություն հանդիսացող << տարածքային զարգացումը, սահմանում է կայուն տնտեսական զարգացման մոտեցումներ՝ հիմնված բոլոր մարզերի (վարչատարածքային միավորներից) տարածքային զարգացման ռազմավարությունների և գործողությունների պլանների վրա: Տարածքային զարգացման ռազմավարությունն ուղղված է << տարածքների միջև զարգացման անհամաշափությունների հարթեցմանը և ազգային, մարզային ու տեղական իշխանությունների համար տեղերում կարողությունների ստեղծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Ի տարբերություն երկարաժամկետ պլանավորման՝ միջնաժամկետ զարգացման ծրագրեր կազմվում են բոլոր համայնքներում: <ամայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (<<ԶԾ) միջնաժամկետ պլանավորման ձևերից է, որի հիմնախնդիրները որոշակացվում և ապագա գործողությունների պլաններ են դառնում բյուջետային գործընթացում, որտեղ որոշվում են տարեկան առաջնահերթությունները և տեղ են գտնում տվյալ տարվա բյուջեում: <<ԶԾ-ն դեռևս քիչ թվով համայնքների համար է տարեկան բյուջեների կազմման և ծրագրային բյուջետավարման հիմք դառնում:

<ամայնքների մեծ մասում դեռևս հնգամյա զարգացման ծրագրերի պատշաճ մակարդակով կազմմանը լուրջ ուշադրություն չի դարձվում, և դրանք առայժմ ձևական բնույթ են կրում: Չնայած այդ ուղղությամբ կատարված որոշ աշխատանքների (<<ԶԾ-երի, այդ թվում բազմաբնակավայր համայնքների, մշակման և կառավարման մեթոդաբանություն, մեթոդական ցուցումներ, համայնքի <<ԶԾ-ի օրինակելի ձև, բազմաթիվ սեմինարների կազմակերպում, աշխատակիցների վերապատրաստում և այլն)' համայնքների մեծ մասի համար հնգամյա զարգացման ծրագրերը առայժմ մնում են որպես ձևական փաստաթղթեր, որոնք էական դերակատարում չունեն համայնքների բյուջեների կազմման և կառավարման ժամանակ:

Շատ համայնքներում բյուջետային միջոցները բավարարում են միայն համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերին: Սովորաբար, այդ համայնքներում չկան համապատասխան մասնագետներ, իսկ բյուջեները կազմվում են որպես եկամուտների և ծախսերի նախահաշիվ՝ առանց լուրջ վերլուծությունների և զարգացման ծրագրային հենքի: Իհարկե, համայնքների խոշորացման արդյունքում համայնքային ծառայողների թվաքանիքը կրճատվել է և, որպես հետևանք, համայնքային բյուջեից խնայվել են որոշակի միջոցներ, սակայն դրանք էական չեն և չեն կարող համայնքի որևէ կենսական հարց լուծել:

Աղյուսակ 13

**ՀՀ համայնքների 2016-2017 թթ. տարեկան եկամուտների հավաքագրման ցուցանիշները<sup>109</sup>**

հազ. դրամ

N	ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ							Փաստ. աճի %-ը 2016 թ-ի նկատմամբ	Փաստ. աճը 2016 թ. համեմատ		
		2016 թ. տարեկան			2017 թ. տարեկան							
		ծրագիր տարեկան	փաստ. տարեկան	կատ. %-ը	ծրագիր տարեկան	փաստ. տարեկան	կատ. %-ը					
1	ԵՐԵՎԱՆ	75 704 536,3	77 331 108,2	102,1	72 289 608,7	72 479 070,0	100,3	-6,3	-4 852 038,2			
2	ԱՐԱԳԱՇՈՏՆ	3 596 130,1	3 587 806,9	99,8	3 740 865,8	3 708 229,6	99,1	3,4	120 422,8			
3	ԱՐԱՐԱՏ	6 552 424,5	6 549 960,3	100,0	6 834 714,3	6 907 764,1	101,1	5,5	357 803,8			
4	ԱՐՄԱՎԻՐ	6 848 095,8	6 690 624,5	97,7	7 134 367,2	7 143 948,4	100,1	6,8	453 324,0			
5	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	5 698 875,3	5 666 471,0	99,4	5 919 961,1	5 886 256,9	99,4	3,9	219 785,9			
6	ԼՈՌԻ	6 484 536,5	6 301 651,2	97,2	6 749 278,7	6 502 698,2	96,3	3,2	201 046,9			
7	ԿՈՏԱՅՔ	6 981 390,1	6 804 166,9	97,5	7 672 943,3	7 477 911,3	97,5	9,9	673 744,4			
8	ՇԻՐԱԿ	6 627 636,6	6 424 020,6	96,9	6 828 557,8	6 708 591,1	98,2	4,4	284 570,5			
9	ՍՅՈՒՆԻՔ	4 434 800,3	4 395 897,6	99,1	4 784 689,9	4 802 638,4	100,4	9,3	406 740,7			
10	ՎԱՅՈՑ ՁՈՐ	1 639 904,1	1 642 194,6	100,1	1 817 920,0	1 836 393,0	101,0	11,8	194 198,5			
11	ՏԱՎՈՒՆ	3 285 901,1	3 229 719,0	98,3	3 522 862,2	3 449 482,1	97,9	6,8	219 763,1			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>127 854 231</b>	<b>128 623 621</b>	<b>100,6</b>	<b>127 295 769</b>	<b>126 902 983</b>	<b>99,7</b>	<b>-1,3</b>	<b>-1 720 637,6</b>			
	<i>Ընդամենը առանց Երևան</i>	52 149 694	51 292 512	98,4	55 006 160	54 423 913	98,9	6,1	3 131 400,6			

<sup>109</sup> Աղյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքէջ՝ <http://mtad.am/hy/>

2017 թ-ին << համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտները կազմել են 126902.983 մլն դրամ (2016 թ.՝ 128623.6 մլն դրամ), ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 1 720.637 մլն դրամով, կամ 1,3%-ով, որը վերջին տարիների ամենացածր ցուցանիշն է (աղյուսակ 13):

Սա մտահոգիչ է հատկապես հաշվի առնելով համայնքների նախկին տարիների տնտեսական ցածր ցուցանիշները, ՏԻՄ-երի գործունեությանը բնակչության պասսիվ ներգրավվածությունը, այդ գործունեության մասին բնակչության անտեղյակությունը, ինչպես նաև ՏԻՄ-երի կողմից իրենց վերապահված լիազորություններն ու ծառայություններն արդյունավետ իրականացումը: Այս պարագայում համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության կառուցակարգերի զարգացումը իրավիճակի շտկման լավագույն տարբերակը կարող է հանդիսանալ:

<ամայնքների բյուջեների սեփական եկամուտները 2017 թ-ին կազմել են 38545.076 մլն դրամ (2016 թ.՝ 34627.0 մլն դրամ) կամ ընդհանուր եկամուտների 30.4%-ը (2016 թ.՝ 26.9%): Ընդ որում, 2017 թ. համայնքների բյուջեների սեփական եկամուտներն աճել են 4098.846 մլն դրամով կամ 23,9%-ով (աղյուսակ 14): Չնայած այս-տեղ նկատվում է սեփական եկամուտների հավաքագրման աճի միտում, սակայն բազմաթիվ համայնքներում եկամուտների հավաքագրման մակարդակը դեռ ցածր է, առկա են նախորդ տարիներից կուտակված ապառքներ:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ համայնքների առանց այդ էլ սուր ֆինանսական միջոցները, չունենալով հավաքագրման բավարար մակարդակ, չեն կարող հնարավորություն ընծեռել տեղական ինքնակառավարման մարմիններին իրականացնելու նույնիսկ պարտադիր լիազորությունները: Դա է վկայում նաև << մարզերում դպրոցաշինության, բնակարանաշինության, ճանապարհաշինության, ջրամատակարարման, ռողոգման և այլ ոլորտներում կապիտալ և սոցիալական բնույթի ծրագրերի իրականացման նպատակով << կառավարության պահուստային ֆոնդից << մարզերում շուրջ 290 ծրագրերի իրականացման նպատակով հատկացված շուրջ 4,652.0 հազ. դրամը<sup>110</sup>:

<sup>110</sup> 2016-2017 թվականների ընթացքում կատարված իիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվություն, Եր., 2017, էջ 9:

Աղյուսակ 14

**ՀՀ համայնքների 2016-2017 թթ. տարեկան սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները<sup>111</sup>**

հազ. դրամ

N	ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Սեփական եկամուտներ						
		2016 թ. տարեկան			2017 թ. տարեկան			Փաստ. աճի %-ը 2016թ-ի փաստ. նկատմամբ
		ծրագիր տարեկան	փաստ. տարեկան	կատ. %-ը	ծրագիր տարեկան	փաստ. տարեկան	կատ. %-ը	
1	ԵՐԵՎԱՆ	19 651 022,1	19 727 710,1	100,4	20 133 170,5	<b>20 314 176,6</b>	<b>100,9</b>	<b>3,0</b>
2	ԱՐԱԳԱՇՈՏՆ	1 019 183,1	1 018 861,3	100,0	1 261 771,8	<b>1 237 073,2</b>	<b>98,0</b>	<b>21,4</b>
3	ԱՐԱՐԱՏ	1 835 086,9	1 830 230,7	99,7	2 227 789,0	<b>2 365 796,0</b>	<b>106,2</b>	<b>29,3</b>
4	ԱՐՄԱՎԻՐ	2 184 860,7	2 046 374,6	93,7	2 614 509,9	<b>2 628 683,4</b>	<b>100,5</b>	<b>28,5</b>
5	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	1 303 892,0	1 269 686,9	97,4	1 493 221,8	<b>1 519 263,4</b>	<b>101,7</b>	<b>19,7</b>
6	ԼՈՌԻ	1 745 695,6	1 667 753,6	95,5	1 867 661,3	<b>1 852 849,9</b>	<b>99,2</b>	<b>11,1</b>
7	ԿՈՏԱՅՔ	2 574 874,8	2 421 986,7	94,1	3 357 657,8	<b>3 164 764,9</b>	<b>94,3</b>	<b>30,7</b>
8	ՇԻՐԱԿ	1 976 208,3	1 774 319,7	89,8	2 258 630,3	<b>2 163 009,9</b>	<b>95,8</b>	<b>21,9</b>
9	ՍՅՈՒՆԻՔ	1 374 807,8	1 391 292,9	101,2	1 646 130,7	<b>1 685 712,9</b>	<b>102,4</b>	<b>21,2</b>
10	ՎԱՅՈՑ ՁՈՐ	576 681,5	579 688,3	100,5	720 123,0	<b>726 650,3</b>	<b>100,9</b>	<b>25,4</b>
11	ՏԱՎՈՒՆ	769 914,2	718 324,5	93,3	938 324,7	<b>887 095,3</b>	<b>94,5</b>	<b>23,5</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>35 012 226,9</b>	<b>34 446 229,4</b>	<b>98,4</b>	<b>38 518 990,6</b>	<b>38 545 075,9</b>	<b>100,1</b>	<b>11,9</b>
	<i>Ընդամենը առանց Երևան</i>	15 361 204,8	14 718 519,3	95,8	18 385 820,1	<b>18 230 899,3</b>	<b>99,2</b>	<b>23,9</b>
								<b>3 512 380,0</b>

<sup>111</sup> Աղյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքէջ. <http://mtad.am/hy>

ՀՀ համայնքների (ըստ մարզերի) բյուջեների ծախսերը (2017 թ. տարեկան)<sup>112</sup>

հազ. դրամ

Հ/Հ	Անվանումը	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ					
		ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		Վարչական մաս		ֆոնդային մաս	
		տարեկան ճշտված պյան	փաստ	տարեկան ճշտված պյան	փաստ	տարեկան ճշտված պյան	փաստ
1	ԵՐԵՎԱՆ	73 199 819,0	70 990 187,0	72 276 808,7	70 490 782,7	1 431 992,3	881 404,3
2	ԱՐԱԳԱՇՈՏՆ	4 511 533,1	3 752 720,5	3 762 540,7	3 387 664,7	976 154,6	477 702,9
3	ԱՐԱՐԱՏ	7 774 338,6	6 610 939,0	6 832 613,7	6 241 089,9	1 198 104,3	524 353,1
4	ԱՐՄԱՎԻՐ	7 790 381,5	6 953 767,5	7 110 177,4	6 615 898,9	840 872,0	489 799,0
5	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	6 785 639,8	5 830 231,0	5 942 506,8	5 276 848,6	1 322 518,2	918 848,5
6	ԼՈՌՈՒ	7 333 263,4	6 566 827,2	6 680 383,8	6 156 989,6	797 542,1	515 774,6
7	ԿՈՏԱՅՔ	8 294 528,2	7 189 911,0	7 703 212,5	7 072 072,4	645 798,6	153 271,9
8	ՇԻՐԱԿ	7 354 657,3	6 706 725,7	6 827 495,1	6 337 968,6	740 339,2	548 755,1
9	ՍՅՈՒՆԻՔ	5 299 758,1	4 848 297,3	4 665 510,5	4 417 387,0	662 078,6	453 639,0
10	ՎԱՅՈՑ ՁՈՐ	2 401 176,7	1 890 869,4	1 836 528,0	1 721 973,5	570 942,8	175 190,0
11	ՏԱՎՈՒՆ	3 759 066,1	3 393 490,2	3 397 084,1	3 208 296,7	361 982,0	185 193,5
	ԸՆԴԱՄԵՆԸ	134 504 161,7	124 733 965,8	127 034 861,4	120 926 972,6	9 548 324,6	5 323 932,0

Աղյուսակ 12-ի շարունակությունը՝ ՀՀ համայնքների բյուջեի ծախսերն ըստ ոլորդների, դրե՛ս հավելված 7-ում:

<sup>112</sup> Աղյուսակ՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կայքէջ. <http://mtad.am/hy/>

Վերոգրյալ ծրագրերի մրցութեների արդյունքում տնտեսված է շուրջ 843 մլն դրամը և << կառավարության պահուստային ֆոնդից շուրջ 348 մլն դրամ հատկացվել են << Վայոց ձորի մարզի Զերմուկի համայնքում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար<sup>113</sup>:

<< համայնքների բյուջեների հանրագումարի մեջ դեռևս զգալի է մնում Երևան համայնքի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը, չնայած 2016 թ-ի համեմատ գրանցվել է նվազման միտում 2017 թ. կազմելով 57.1% (2016 թ.' 60.1%):

2017 թ-ին համայնքների բյուջեների եկամուտների կառուցվածքը էական փոփոխությունների չի ենթարկվել: Ինչպես նախորդ տարիներին, 2017 թ-ին ևս պետական բյուջեին ամրագրվող եկամտահարկից, շահութահարկից և բնապահպանական վճարներից համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

Ներկայում << կառավարությունը քննարկում է պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման նոր կարգ, որի համաձայն համայնքները պետական բյուջեի միջոցներից կարող են կրկնապատկել համայնքի բյուջեի ֆոնդային մասից կապիտալ ծախսերին ուղղվող միջոցները՝ ստեղծվող ներկայացուցչական հանձնաժողովին ծրագրային հիմնավոր առաջարկներ ներկայացնելու միջոցով: Այս կարգով կառավարությունը խրախուսում է համայնքներին՝ ավելի մեծ միջոցներ նախատեսել կապիտալ բնույթի ծախսերի համար և բարձրացնել տեղական բյուջեների կառավարման արդյունավետությունը:

2017 թ-ին համայնքների բյուջեների ընդամենը հավելուրդը կազմել է -2160.226 մլն. դրամ, որից վարչական բյուջեի հավելուրդը կազմել է 5461.897 մլն. դրամ, իսկ ֆոնդային բյուջեի պակասուրդը՝ -3301.671 մլն. դրամ: Այդ պակասուրդը ֆինանսավորվել է հիմնականում ի հաշիվ համայնքների բյուջեների տարեսկզբի ազատ մնացորդների (աղյուսակ 16):

<< համայնքներում հանրային-մասնավոր համագործակցության արդյունավետ կազմակերպչական և իրավական մեխանիզմների ձևավորումը կթեթևացնի ենթակառուցվածքների զարգացմանն ու ծառայությունների ոլորտին ուղղված բյուջետային բեռը:

<sup>113</sup> Նոյն տեղում:

## **2017-2018 թթ. համայնքային բյուջեների հավելուրդի կամ պակասուրդի կատարումը<sup>114</sup>**

ԸՆԴՀԱՄԵԼԸ ՀԱՎԿԱՌՈՒՅՆ ՊՐԻՎԱՏ ՔԱՂԱՔ	ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԼԱՆ			ՏԱՐԵԿԱՆ ՃԵՏՎԱԾ ՊԼԱՆ			ՓԱՍՏԱՑԻ		
	Ընդհամելու պարզական բյուջե	այդ թվում		Ընդհամելու պարզական բյուջե	այդ թվում		Ընդհամելու պարզական բյուջե	այդ թվում	
		Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե		Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե		Վարչա- կան բյուջե	Ֆոնդային բյուջե
-5 163 570,5	-199 088,0	-4 964 482,5	-7 194 311,9	-231 014,1	-6 963 297,7	2 160 226,2	5 461 897,5	-3 301 671,3	

ՀՀ Տարածքային զարգացման 2017-2025 թթ. ռազմավարության մեջ կառավարությունը վերանայել է տարածքների համաչափ զարգացման համար միջոցների հատկացման տրամաբանությունը: Դրանք այսուհետև հատկացվելու են մրցութային հիմունքներով: Ընդհանուր միջոցների առնվազն 70%-ը պետք է ուղղվի տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը: Անցյալ երկու ամիսների ընթացքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ է ուղղվել 32 հայտ Շիրակի մարզից, հիմա ընթացքի մեջ է ևս 25 հայտերի մշակումը Սյունիքից, Տավուշից և Արագածոտնից: Շիրակի մարզի հայտերից չորսը՝ Արփի, Ամասիա, Սարապատ և Աշոցք համայնքներից անցել են նախնական ընտրության փուլը և ուղղորդվել են ֆինանսավորման: Այս ծրագրերով կառուցվելու են ոռոգման ջրագծեր, հացահատիկի սերմնազտման և ախտահանման կայաններ:

«մարզերում և համայնքներում ձևավորված ներդրումային ծրագրերի մշակման և ներկայացման գործընթացների արդյունքներով 2017 թ. 8 ամիսների ընթացքում «մարզերի, այլ գերատեսչությունների և մասնավոր ներդրողների կողմից նախարարություն են ներկայացվել թվով 175 ներդրումային/գործառնական ծրագիր՝ տարբեր ոլորտներում ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով: Մասնավորապես՝ թեթև արդյունաբերության զարգացման, գյուղատնտեսական մթերքի վերամշակման, զբոսաշրջության զարգացման, հանքարդյունաբերության, վերականգնվող էներգիայի արտադրության, անասնապահության, մետաղագործության, մեքենատրակտորային կայանների ստեղծման ոլորտներին առնչվող ծրագրային հայտեր<sup>115</sup>:

<sup>114</sup> [http://www.mfin.am/hy/page/hamaynqayin\\_byujeneri\\_ampop\\_hashvetvutyun\\_2017\\_t\\_tarekan\\_](http://www.mfin.am/hy/page/hamaynqayin_byujeneri_ampop_hashvetvutyun_2017_t_tarekan_)

<sup>115</sup> 2016-2017 թվականների ընթացքում կատարված հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվություն, Եր., 2017, էջ 9:

Ծրագրերը նախատեսվում է իրականացնել պետության և նախարարությունների մակարդակում, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ << տեղական ինքնակառավարման համակարգը անկատար է, համայնքների խոշորացումը չի տվել սպասվելիք արդյունքները ինքնուրույնության, մասնագետների վերապատրաստման և ֆինանսական առումներով: Ուստի շատ կարևոր է <ՄԳ նախագծերի իրականացման ընթացակարգի ճիշտ մշակումը հենց տեղական ինքնակառավարման համակարգի շրջանակներում:

Մասնագետների վերաբերմունքը համայնքների խոշորացման գործընթացի հանդեպ միանշանակ չէ: Առավել համակարգային պատկերացնելու համար դիտարկենք այն երկու տեսանկյունից՝ խոշորացման վարչատնտեսական արդյունքների և ՏԻՄ-երի՝ բնակիչներին առավել հասանելի լինելու: Կարևոր է դիտարկել համայնքների խոշորացման գործընթացի հիմքում դրված սկզբունքային գաղափարները և դրանց փաստացի իրականացումը: Իհարկե, անհերքելի է, որ որքան մոտ են համայնքային իշխանությունները բնակիչներին, այնքան վառ են արտահայտվում տեղերում ինքնակառավարման ընդհանուր գաղափարն ու սկզբունքները՝ դրանից բխող ժողովրդավարության բոլոր դրսնորումներով: Սակայն հանրային կառավարման համակարգը դիտարկելիս չի կարելի անտեսել տվյալ իշխանությունների կարողությունների, մասնավորապես՝ ֆինանսական միջոցներով ապահովված լինելու հանգամանքը: Պարզ է, որ ֆինանսապես թույլ ապահովված իշխանությունը պարզապես ի զորու չէ հայթահարել իր առջև դրված խնդիրները և իրականացնել օրենքով սահմանված լիազորությունները: Այս դեպքում նման կարգավիճակով իշխանության հետագա գոյությունը կորցնում է իր իմաստը: Պետք է հստակ պատկերացում կազմել և ընտրել՝ թույլ, անկարող իշխանություն, սակայն «մոտ» ժողովրդավարությանը, թե ֆինանսապես առավել հզոր և ունակ, սակայն բնակիչներից փոքր-ինչ հեռացած կառավարման համակարգ: <<-ում տեղի ունեցող վարչատարածքային բարեփոխումները միտված են դեպի երկրորդ տարբերակը<sup>116</sup>:

Մինչ այժմ գոյություն ունեցող << վարչատարածքային բաժանման համակարգը կենսունակ չէ: Համայնքների խիստ մասնատվածությունը թողեց իր բացասական հետքը տեղական ինքնակառավարման ողջ համակարգի վրա: Սակայն տեղական ինքնա-

<sup>116</sup> Տեղական ինքնակառավարումը Հայաստանում: Գիրք 9, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, Եր., 2016, էջ 28:

կառավարման համակարգում առկա խնդիրները հնարավոր չեն լուծել միայն վարչատարածքային բաժանմամբ: Վարչատարածքային անարդյունավետ բաժանման խոչընդուռը վերացնելով, ժամանակի ու ջանքերի անհմաստ կորուստը և ֆինանսական միջոցների անտեղի փոշիացումը հաղթահարելով կարելի է կիրառել համայնքների խնդիրները հաղթահարելու նոր մոտեցումներ: Պետք է նշել, որ կարևոր է տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող ծախսերի ավելացումը համախմբված ծախսերում, որը պետական քաղաքականության արդյունք պետք է լինի: Սակայն այդ միջոցառումը համակարգային լուրջ արդյունք ապահովել չի կարող. համայնքները շատ են, իսկ ավելացված գումարից ստացված արդյունքը՝ աննշան: Հենց այստեղ է, որ կարելի է տեսնել համայնքների խոշորացման դրական կողմերից ամենակարևորը՝ ֆինանսական ռեսուրսների կենտրոնացում՝ խոշոր ծավալի խնդիրներ լուծելու համար: Խոշորացված համայնքների համախմբված բյուջեն հնարավորություն կստեղծի տվյալ համայնքում իրականացնել որևէ խոշոր խնդրի լուծում, ինչը նախկին համայնքները առանձին-առանձին իրականացնել պարզապես չեն կարող, իսկ այդ խնդիրները համայնքներում բազմաթիվ են (աղյուսակ 17): Սակայն խոշորացման գործընթացի իրական արդյունքները տեսանելի կլինեն դրա մեկնարկից առնվազն 4-5 տարի անց: Դրանց լուծումը պահանջում է հավելյալ ֆինանսական ներդրումներ և կազմակերպչական հմտություններ, որոնց իրականացման լավագույն տարբերակ, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, կարող է հանդիսանալ հանրային-մասնավոր գործընկերության արդյունավետ մեթոդների և ձևերի կիրառումը:

«Համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2012-2016 թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով բացարձակ արժեքով տարեցտարի աճել է՝ 2012 թ. 31,556 «ՀՀ դրամից (մոտ 78.5 ԱՄՆ դոլարից) 2016 թ-ին հասնելով 43,074 դրամի (մոտ 89.6 դոլարի): Համապատասխանաբար, «ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2012-2016 թթ. Բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2012 թ. 32,196 դրամից (մոտ 80.1 դոլարից) 2016 թ-ին հասել է 43,589 դրամի (մոտ 90.6 դոլարի)<sup>117</sup>:

<sup>117</sup> Տեղական ինքնակառավարումը Հայաստանում: Գիրք 9, Վ. Շահբազյանի խմբագրությամբ, Եր., 2016, էջ 60:

## ՀՀ համայնքների ներուժը և խնդիրները<sup>118</sup>

<b>ՆԵՐՈՒԺԸ (ՌԻԺԵԴ ԿՈՂՄԵՐ)</b>	<b>ԽՆԴԻՐՆԵՐ (ՇՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)</b>
<b>Բնական պայմաններ, ժողովրդագրություն և քաղաքային զարգացում</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Կրթված և աշխատունակ բնակչության մեծ տեսակարար կշիռ</li> <li>- Զարգացող գյուղատնտեսություն</li> <li>- Զարգացող գրոսաշրջություն</li> <li>- Զրային ռեսուրսների մեծ պաշարների առկայություն (հանքային և քաղցրահամ),</li> <li>- Լեռնարդյունաբերությունը՝ մարզերում որպես աճի բևեռ</li> <li>- Քաղաքներում զարգացող SS ոլորտ</li> <li>- Գյուղատնտեսական հողերի մեծ ծավալներ</li> <li>- Ուրբանիզացիայի բարձր մակարդակ</li> <li>- Օգտակար հանածոների արդյունահանման մեծ փորձ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Բնակչության մեծածավալ արտագաղթ, հիմնականում՝ մարզային քաղաքներից</li> <li>- Մրցունակ մասնագիտական գիտելիք ունեցողների արտագաղթ</li> <li>- Բնակչության ծերացում</li> <li>- Բնական ռեսուրսների կառավարման անբավարար մակարդակ</li> <li>- Զօտագործվող, քայլայված նախկին արդյունաբերական տարածքների առկայություն</li> <li>- Քաղաքներում կանաչապատ տարածքների (անտառապատ տարածքներ, պուրակներ, այգիներ) սակավություն կամ բացակայություն</li> <li>- Քազմաբնակարան շենքերի պահպանման ֆինանսական ռեսուրսների անբավարություն</li> <li>- Բնակչության ոչ համաչափ բաշխում</li> <li>- Հայաստանի գրոսաշրջության պոտենցիալի օգտագործման ոչ բավարար մակարդակ</li> <li>- Կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանների վատ վիճակ, բացակայություն</li> <li>- Անտառային պաշարների գերօգտագործում վառելիքի համար</li> </ul>
<b>Տրանսպորտ, կապ և լրեղեկարգվական գելխնողիաներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Ֆիբսված և բջջային հեռախոսակապի, ինտերնետ ծածկույթի բավարար ապահովվածություն</li> <li>- Հանրապետական և մարզային հեռուստատեսության հասանելիություն ողջ հանրապետության տարածքում</li> <li>- Ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Տրանսպորտային միջոցների մաշվածություն</li> <li>- Հեռավոր բնակավայրերի տրամանպորտային հասանելիության ոչ բավարար մակարդակ</li> <li>- Ուղևորների և բեռնափոխադրումների կախվածությունը հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտից</li> <li>- Ոչ բավարար զարգացած հանրային տրանսպորտային ծառայություններ</li> <li>- Երկաթուղային տրանսպորտայի օգտագործման ժամանակ լաստանավերի օգտագործման անհրաժեշտություն</li> <li>- Իրանով անցնող բեռների համար ավտոմոբիլային տրանսպորտի այլնտրանքի բացակայություն</li> </ul>
<b>Հանրային ենթակառուցվածքներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Գազաֆիկացված համայնքների մեծ թիվ</li> <li>- Զրամատակարարման որակի բարելավում, ցանցի շարունակական թարմացում</li> <li>- Էլեկտրաէներգիայի սննդման ծածկույթի առկայություն</li> </ul> <p>Միջավայրական ճանապարհների բավարար վիճակը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճանը</li> <li>- Զրահեռացման համակարգերի մաշվածության բարձր աստիճան</li> <li>- Կոչտ կենցաղային թափոնների կառավարման անբավարար մակարդակ</li> </ul>

<sup>118</sup> Հայաստանի Հանրապետության 2018-2020 թվականների տարածքային զարգացման գործառնական ծրագրին հավանություն տալու մասին, հավելված 6 (6-րդ մաս): Քաղվածք ՀՀ կառավարության 9 նոյեմբերի 2017 թվականի N 47 նիստի արձանագրությունից:

ՆԵՐՈՒԺԸ (ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ)	ԽՆԴԻՐՆԵՐ (ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)
<i>Հանրային ենթակառուցվածքներ</i>	
<ul style="list-style-type: none"> <li>- Զարգացած ավտոճանապարհային ցանց</li> <li>- Ոռոգման ջրի հասանելիության բարձր աստիճանը,</li> <li>- Քաղաքային ենթակառուցվածքների առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Հատուկ կարիքներով և սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարդկանց համար հարմարեցված ենթակառուցվածքների բացակայություն</li> <li>- Ոռոգման ջրի ջրագծերի մաշվածության բարձր աստիճան</li> <li>- Փողոցային լուսավորության ոչ բավարար մակարդակ</li> <li>- Մարզային և համայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակ</li> <li>- Կոյուղաջրերի մաքրման կայանների կամ բացակայություն, կամ առկա կայանների թերի շահագործում</li> <li>- Աղբավայրերի ոչ ճիշտ տեղակայում և շահագործում</li> <li>- Բնակչունդի մաշվածություն, 4-րդ կարգի վնասվածություն ունեցող շենքերի մեծ քանակ,</li> <li>- Տուրիստական ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակ, այդ թվում հյուրատների, հյուրանցների, բարձրորակ սպասարկման ծառայությունների ոչ բավարար քանակություն</li> <li>- Միջավայրական ճանապարհների ցածր տարողունակություն և ծմուանը դժվար անցանելիություն</li> <li>- Ոռոգման ներտնտեսային ցանցերի անբավարար վիճակ</li> <li>- Ենթակառուցվածքներում ներդրումների համար ֆինանսական միջոցների անբավարություն</li> </ul>
<i>Ներքին արդադրանք և եկամուտներ</i>	
<ul style="list-style-type: none"> <li>- Հայաստանում արտադրված և վերամշակված գյուղմթերքների ճանաչման բարձր աստիճան</li> <li>- Մշակող արդյունաբերության արտադրանքի կտրուկ աճ, որի արդյունքում ավելացել է ոչ հանքանյութային արտահանման ծավալները</li> <li>- Ինտենսիվ գյուղատնտեսության ծավալների աճ</li> <li>- Զարգացած հանքարդյունաբերություն</li> <li>- Զարգացած հներգետիկա</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Մարզերի ՀՆԱ կախվածության բարձր աստիճան գյուղատնտեսությունից</li> <li>- Գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեք ցածր արդյունավետության պատճառով</li> <li>- Վերամշակող արտադրության մրցունակության ցածր մակարդակ՝ պայմանավորված հարաբերականորեն բարձր ինքնարժեքով (այդ թվում գյուղ մեթրքների բարձր ինքնարժեքով)</li> <li>- Գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման անբավարար մակարդակ</li> <li>- Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովածության ցածր մակարդակ,</li> <li>- Առկա տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածություն,</li> <li>- Տրանսֆերտներից կախվածության բարձր աստիճան</li> <li>- Ներքին և արտաքին սպասման շուկայի նվազում</li> <li>- Գյուղատնտեսության վարում հիմնականում ավանդական եղանակով</li> </ul>

Աղյուսակ 17-ի շարունակությունը

ՆԵՐՈՒԺԸ (ՌԻԺԵԴ ԿՈՂՄԵՐ)	ԽՆԴԻՐՆԵՐ (ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)
<b>Հքաղվածություն</b>	
	<ul style="list-style-type: none"> <li>- Զբոսաշրջության ներուժի թերի օգտագործում</li> <li>- Մարզերի և Երևան քաղաքի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ների կտրուկ տարբերություն</li> <li>- ՀՆԱ զգայի կախվածություն լեռնահանքային արդյունաբերությունից</li> <li>- Գյուղատնտեսական հողերի թերի օգտագործում</li> <li>- Գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածություն</li> <li>- Շուկայի պահանջարկի կանխատեսման համակարգի բացակայություն</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>- Զարգացող զբոսաշրջություն, որը ստեղծում է սեզոնային բազմաթիվ աշխատատեղեր</li> <li>- Աշխատաշուկայում բարձրագույն կրթություն ունեցող անձանց մեծ թիվ,</li> <li>- SS ոլորտի աճ, SS ոլորտում բարձր վարձատրվող աշխատութիւն աշխատութիւն առկայություն, որը ապահովում է զբաղվածության բարձր մակարդակ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Գործազրկության բարձր մակարդակ, մասնավորապես՝ քաղաքային բնակչության շրջանում</li> <li>- Ցածր վարձատրվող գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածների մեծ թիվ</li> <li>- Ոչ գյուղատնտեսական կամ հանքարդյունաբերական աշխատատեղերի անհրաժեշտություն</li> <li>- Սահմանափակ կարողություններ ունեցող անձանց գործազրկության ավելի բարձր հավանականություն</li> <li>- Արտադրական փորձ ունեցող մասնագետների մեծ տարիք</li> <li>- Գործազրկության մակարդակի անհավասարաչափ բաշխվածություն մարզերում</li> <li>- Արդի գյուղատնտեսության մասնագետների պակաս</li> </ul>
<b>Տարածաշրջանային գննութեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- ՀԱԷԿ-ի առկայությունը՝ Ելեկտրաէներգիայի արտադրման մեծ քանակության տեսանկյունից</li> <li>- Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացում</li> <li>- Գյուղատնտեսության զարգացման կայուն միտումներ</li> <li>- Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճ</li> <li>- Զարգացած հանքարդյունաբերություն</li> <li>- Գյուղմթերքների վերամշակման կազմակերպությունների բավարար քանակություն,</li> <li>- Տնտեսության մեջ արտահանող ճյուղերի զարգացում</li> <li>- Տուրիստական կլաստերների ձևավորում /Տաթև, Ծաղկածոր, Ջերմուկ, Սևան և այլն/</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Ավանդական / ոչ արդյունավետ գյուղատնտեսության դեռևս դոմինանտ լինելը, գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեք</li> <li>- Գյուղ նշանակության հողերի մասնատվածությունը, մեքենայացման, արտադրողականության ցածր մակարդակ</li> <li>- Մարզերի չփիվերսիֆիկացված տնտեսական կառուցվածքը</li> <li>- Արտահանման պոտենցիալի թերի օգտագործում</li> <li>- Գյուղատնտեսական մեքենատրանսպորտային պարկերի բացակայությունը, գյուղտեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճան</li> <li>- Գյուղատնտեսության վարման արդիական եղանակների հետ ծանոթության ցածր մակարդակ</li> <li>- Թեթև արդյունաբերության ոլորտների ոչ բավարար զարգացված լինելը,</li> <li>- Ոչ դիվերսիֆիկացված տնտեսության զարգացում</li> <li>- Գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմի բացակայություն,</li> <li>- Տնտեսության աճի դանդաղ տեմպեր</li> </ul>

**Աղյուսակ 17-ի շարունակությունը**

<b>ՆԵՐՈՒԺԸ (ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ)</b>	<b>ԽՆԴԻՐՆԵՐ (ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)</b>
<b>Կրթություն, հետազոտում, մարդկային կապիվալ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Կրթության մատչելիություն՝ դպրոցական, նախադարձացական հաստատությունների, նախակրթարանների առկայություն,</li> <li>- Բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետների մեծ տեսակարար կշիռ,</li> <li>- Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն</li> <li>- Երիտասարդ, կրթություն ունեցող անձանց մեծ թիվ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Մարզից դուրս բարձրագույն կրթություն ստացածների՝ մարզ Վերաբառնալոր ցածր աստիճան</li> <li>- Կրթություն ստացած երիտասարդների գործնական հմտությունների և կարողությունների ցածր մակարդակ</li> <li>- Մասնագիտական կրթության անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին,</li> <li>- Սահմանամերձ, բարձր լեռնային դպրոցներում մանկավարժների պակաս</li> </ul>
<b>Սոցիալական ոլորտ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Բնակարանային ապահովածության բարձր մակարդակ</li> <li>- Բժշկական կազմակերպությունների հասանելիություն</li> <li>- Մարզամշակութային հաստատությունների հասանելիություն մարզերի քաղաքներում</li> <li>- Բնակարանների գազաֆիկացման բարձր մակարդակ</li> <li>- Երաժշտական և արվեստի դպրոցների, այլ մշակութային օջախների ու սպորտային կազմակերպությունների առկայություն,</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Ծայրահետ աղքատության բարձր մակարդակ</li> <li>- Գյուղական ամբողատորիաների ոչ բավարար պայմաններ</li> <li>- Գյուղական բնակավայրերում մարզամշակութային և ժամանցի վայրերի բացակայություն</li> <li>- Մարզերում բժիշկների անբավարար թվաքանակ և պատրաստվածության ցածր մակարդակ</li> <li>- Տարեց մարդկանց առողջապահության մասնագետների պակաս</li> <li>- Մայրաքաղաքի բժշկական ծառայությունների սահմանափակ հասանելիություն հեռավորության և արժեքի պատճառով</li> </ul>
<b>Բնապահանական հարցեր, Էներգետիկ արդյունավելություն, կլիմայի փոփոխություն</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Օդային ավազան արտանետումների ցածր մակարդակ</li> <li>- Անտառների, բնության հատուկ պահպանվող տարածքների առկայություն:</li> <li>- Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էլեկտրաէներգիայի արտադրություն</li> <li>- Կոշտ թափոնների, կեղտաջրերի կառավարման հանրային ենթակառուցվածքի բարեկավում</li> <li>- Հարուստ բուսական և կենդանական աշխարհ</li> <li>- Էներգախնայողության դրական փորձ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Մարզերում աղբի կառավարման համակարգերի թերի աշխատանք</li> <li>- Կոչտ թափ. Վերամշ. անբավարար աստիճան</li> <li>- Կոյուղու կեղտաջրերի մաքրման կայանի բացակայության/ վատ վիճակի պատճառով շրջակա միջավայրի աղտոտվածություն</li> <li>- Բնակչության իրագեկվածության ցածր մակարդակ բնապահ. խնդիրների հետ կապված</li> <li>- Էներգախնայողության և էներգաարդյունավետության ցածր մակարդակ</li> <li>- Արևային և հողմային էներգիայի օգտագործման ցածր մակարդակ</li> <li>- Լքված, դադարեցված հանքավայրերի և դրանց տարածքներում խախտված հողատարածքների առկայություն</li> <li>- Գետային համակարգերի աղտոտվածություն՝ կապված գյուղատնտեսական գործունեության և լեռնահանքային արդյունաբերության հետ</li> <li>- Ընդերթօգտագործման թափոնների մեծ տեսակարար կշիռ, վերամշակման բացակայություն</li> </ul>
<b>Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Մարզային վարչակազմում բարձրագույն կրթության ունեցողների մեծ տեսակարար կշիռ,</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Տեղական մակարդակում ֆինանսական ռեսուրսների սահմանափակություն՝ հատկապես ներդրումների համար</li> <li>- Համայնքների կարողությունների միջև առկա խիստ տարբերություն</li> </ul>



Աղյուսակ 17-ի շարունակությունը

ՆԵՐՈՒԺԸ (ՌԻԺԵԴ ԿՈՂՄԵՐ)	ԽՆԴԻՐՆԵՐ (ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ)
<i>Տարածաշրջանային և տեղական զարգացման կարողություններ</i>	
<ul style="list-style-type: none"> <li>– Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում մարզային և տեղական կառավարման գործընթացներում</li> <li>– Վարչակազմի վերապատրաստումների պարբերաբար կազմակերպում և անցկացում</li> <li>– Խոշորացման գործընթացի առաջընթաց</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>– ՏԻՄ-երում բարձրագույն կրթություն ունեցողների ցածր մակարդակ</li> <li>– Տեղական հարկերի ու վճարների հավաքագրման դժվարություններ</li> <li>– Հասարակական կազմակերպությունների ցածր մասնակցություն</li> </ul>
<b>Այլ հարցեր</b>	
<ul style="list-style-type: none"> <li>– Բազմաթիվ հուշակոթողների առկայություն</li> <li>– Հարուստ սպորտային ավանդույթներ</li> <li>– Հյուրանոցային տնտեսություններում ներդրումների իրականացում</li> <li>– Հարկային արտոնություններ սահմանամերձ համայնքներին</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>– Ներմարզային զարգացման անհամաշափություն</li> <li>– Զբոսաշրջության կենտրոնացում միջպետական ճանապարհների երկայնքով</li> <li>– Հեռավոր և սահմանամերձ համայնքների թերի զարգացվածություն, այլ տարածքների հետ անհամաշափություններ</li> <li>– Աղբբեջանի հետ սահմանի հետ անկայուն վիճակ</li> <li>– Բարձր լեռնային համայնքներում հիմնական ենթակառուցվածքների բացակայություն</li> <li>– 3-րդ և 4-րդ կարգի վթարայնություն ունեցող, անվարտ մնացած, տարբեր աստիճանի պատրաստվածության և վերանորոգման ենթակա բնակելի շենքների առկայություն</li> </ul>

2016 թ-ին համայնքների կողմից մատուցվող ծառայությունների վրա կատարվող ծախսերը, 2015 թ-ի հետ համեմատությամբ, նվազել են մոտ 5.02 մլրդ. դրամով, որը 2015 թ-ի նույն ցուցանիշից պակաս է 4.0%-ով<sup>119</sup>: Կարելի է փաստել, որ 2016 թ-ի ընթացքում << համայնքների բնակիչները 5.02 մլրդ դրամով կամ 4.0%-ով պակաս համայնքային ծառայություններ են ստացել, քան 2015 թ-ին: Ուստի անհրաժեշտություն կա համայնքներում ենթակառուցվածքների և ծառայությունների ոլորտում լրացուցիչ միջոցների և գործիքների ներգրավման, քանի որ, առանց այդ էլ, նախորդ տարիների բյուջեի միջոցները չեն բավարարում այս ոլորտներում առկա խնդիրները լուծելու համար, իսկ բյուջեի նվազող ցուցանիշներն առավել քան մտահոգիչ են:

2017 թ-ին համայնքներում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 29 339, 531 մլն դրամ, ինչը համայնքների կողմից մատուցվող համայնքային ծառայությունների վրա կատարվող ծախսերի 23.5%-ն է, 2016 թ-ին այդ ցուցանիշը նույնն է եղել, մինչդեռ 2015 թ-ին այդ ցուցանիշը կազմել է 22.7%, այսինքն՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ աճել է 0.8 տոկոսային կետով:

<sup>119</sup> «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2015 թ.): Գիրք 8, Զեկույց, ՀՖՄ ՀԿ, Եր., 2016:



**Գծապատկեր 8. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2016-2017 թթ. բյուջեների փաստացի ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում (ըստ գործառական դասակարգման)**

2017 թ-ին համայնքների կողմից մատուցվող ծառայությունների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը (2016 թ.' 31%) շարունակում է մնալ համայնքների կողմից մատուցվող կրթական ծառայությունները (42.491,120 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 34%-ը), որը պայմանավորված է Երևանում հիմնական և միջնակարգ կրթության համայնքի համար պետության կողմից պատվիրակված լիազորություն լինելու հանգամանքով և ներառված է որպես կրթական ծախսեր քաղաքի բյուջեում: Համայնքի կողմից մատուց-

վող համայնքային ծառայությունների մեջ մեծությամբ երկրորդը ընդհանուր բնույթի հանրային ծառայություններն են (29.339,531 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 23,5%-ը): Երրորդ տեղում շրջակա միջավայրի պաշտպանությունն է 12.207,255 մլն դրամ ցուցանիշով, որը ընդհանուր ծախսերի 9,8%-ն է: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների վրա կատարվող ծախսերը 2017 թ-ին կազմել են 8.839,051 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 7%-ը:


ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2016-2017 թթ. բյուջեների փաստացի ծախսերի տեսակարար կշիռների համեմատությունից ընդհանուր ծախսերում (ըստ գործուական դասակարգման) պարզ է դառնում, որ համայնքների խոշորացման գործընթացը էական փոփոխություն չի գրանցել ո՛չ համայնքների բյուջեների եկամուտների, ո՛չ էլ ծախսերի վրա: ՀՀ-ում իրականացվող ՏԻ վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների մեծ մասի մասնագիտական կարողությունները բավարար չեն հանրային ծառայությունները ողջ ծավալով և բավարար որակով մատուցելու համար, իսկ բյուջետային միջոցներն այնքան սուլ են, որ հիմնականում բավարարում են միայն համայնքի աշխատակազմը պահպանելու համար, և միջոցների այսպիսի սղությունը հանգեցնում է մի շարք խորքային խնդիրների: Այդ ամենով պայմանավորված՝ տեղական ինքնակառավարման մարմինները լիարժեքորեն չեն կատարում իրենց կարևոր դերը հանրային կառավարման համակարգում: Համայնքների կառավարման վարչական կառուցվածքների բարեփոխման և որակյալ մարդկային ռեսուրսներով ապահովման խնդիրները համապատասխան լրիցում են պահանջում՝ հիմնված համակարգային ու համալիր մոտեցումների վրա: Հանրային կառավարման համակարգում ՀՄԳ կառուցակարգերի կիրառումը և կատարելագործումը հնարավորություն կտա լրիցելու համայնքներում առաջնահերթ խնդիրները: Համայնքներում պատվիրակման ենթակա ծառայությունները և ՀՄԳ կիրառելի տարբերակները ներկայացված են աղյուսակ 18-ում:

**Համայնքներում պատվիրակման ենթակա ծառայություններ և  
ՀՄԳ կիրառելի տարբերակներ<sup>120</sup>**

<b>Ծառայություն</b>	<b>Կառավարման պայմանագիր</b>	<b>Վարձակալության պայմանագիր (ինչնազ)</b>	<b>Կոնցեսիոն պայմանագիր</b>	<b>Ներդրումային պայմանագիր</b>
Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմանների մշակում	X			
Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գունվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստում	X			
Համայնքի տարածքում աղբահանության կազմակերպում	X	X	X	
Համայնքի տարածքում սանհիտարական մաքրման կազմակերպում	X	X	X	
Համայնքի իրավաբանական անձանց կամ անհատ ծեռնարկատերերի շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքում և փոխստորում	X	X	X	
Համայնքում աղբավայրի շահագործում (կառուցում*)	X	X	X	X
Համայնքում կենտրոնացված ջեռուցման մատակարարում	X	X	X	X
Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի ապահովում	X	X		
Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների կառավարում	X	X	X	
Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղի կառավարում կամ կազմակերպում	X	X	X	
Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում	X	X	X	X
Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում	X	X	X	X
Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում	X	X	X	X
Համայնքում բնակարանային շինարարության խթանում				X
Համայնքի բնակավայրերի կառուցապատում և բարեկարգում	X	X		
Համայնքի բնակավայրերի կանաչապատում	X	X	X	X
Համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում	X			
Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում	X	X	X	X
Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում	X	X	X	
Համայնքներում գրոսաշրջության զարգացման խթանում	X	X	X	X
Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ սահմանված հանրային հանգստի վայրերի կառավարում	X	X	X	X

<sup>120</sup> Համայնքների կողմից մատուցվող ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրակման մեթոդական ցուցումներ, Եր., 63 էջ:

Համայնքներում պատվիրակման ենթակա ծառայությունների և ՀՄԳ կիրառելի տարրերակների փոխկապակցվածությունը կարելի է տեսնել գծապատկերում:



Գծապատկեր 9. Համայնքներում պատվիրակման ենթակա ծառայություններ և ՀՄԳ կիրառելի տարրերակներ<sup>121</sup>

Սակայն համայնքներում առկա խնդիրները խոչընդոտ են նաև ՀՄԳ արդյունավետ նախագծեր կազմելու, ներկայացնելու, մրցույթ անցկացնելու և իրականացնելու համար:

Համայնքային մակարդակում ՀՄԳ ինստիտուցիոնալ ձևերի և մեխանիզմների կիրառման հիմնական խոչընդոտներն են.

- մարզային և համայնքային մակարդակներում պետական ենթակառուցվածքի գարգացման ռազմավարության համակարգային և նպարակային մոդելերի բացակայությունը: Նախագիծը պետք է համապատասխանի <<Տարածքային գարգացման գործառնական ծրագրին, որը նախատեսում է տարածքային և տեղական մակարդակի ներդրումների և գարգացման ծրագրերում ներգրավելու ակտիվացնել տեղական դերակատարներին, առաջին հերթին՝ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ որպես ծրագրի առաջարկողներ և իրականացնողներ՝ ծրագրերի մրցունակ հայտադիմումների ներքո<sup>122</sup>: Այսինքն՝ հա-

<sup>121</sup> Կազմել է հեղինակն ըստ՝ Համայնքների կողմից մատուցվող ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրակման մեթոդական ցուցումների, Եր., 63 էջ:

<sup>122</sup> Հայաստանի Հանրապետության 2018-2020 թթ. տարածքային գարգացման գործառնական ծրագրի, Եր., 2017, էջ 9:

մայնքների զարգացման ծրագրերը պետք է համապատասխանեն << տարածքային զարգացման գերակայություններին:

- **ՀՄԳ ոլորսի կարգավորող նորմատիվական և մեթոդաբանական դաշտի անկապարությունը:** Հայաստանի Հանրապետությունը դեռ չի ընդունել ՀՄԳ օրենք: Մեր կարծիքով դրա ընդունումը իրավական պայմաններ կստեղծի ՀՀ տնտեսությունում ներդրումների ներգրավման համար և կրարելավի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների որակը, որոնցով սպառողներին ապահովելու կազմակերպումը պետական իշխանության և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների հոգածության ոլորտում է: Այն կսահմանի ՀՄԳ նախագծի նախապատրաստման ընթացքում ծագող իրավական հարաբերությունների կարգավորման հիմքերը՝ համաձայնագրերի եզրակացության, իրականացման և դադարեցման ընթացակարգը, այդ թվում՝ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան լիազորությունները, երաշխավորում է ՀՄԳ նախագծի կողմերի իրավունքները և օրինական շահերը:
  - **Պետրական և տեղական մակարդակներում ՀՄԳ ոլորսի կառավարման միասնական մոդելի բացակայությունը:** ՀՄԳ նախագծերի արդյունավետ իրականացման համար համայնքներում նորմատիվական դաշտի բարելավման համար պետք է մշակել այնպիսի ընթացակարգ, որը կհամակարգի տարբեր գերատեսչությունների և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը ՀՄԳ նախագծերի նախաձեռնման, ներդաշնակեցման, զարգացման փուլերում: Անհրաժեշտ է նաև ՀՄԳ նախագծերի շրջանակներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ պարտավորությունների կատարման համար մշակել ՀՀ բյուջեից համայնքներին տրամադրվող սուբսիդիաների գնահատման մեթոդաբանություն:
  - **Համայնքներում ՀՄԳ մասնագետների բացակայությունը:** Ներկայում համայնքները չունեն բարձրորակ մասնագետներ ինչպես ՀՀ տարածքային զարգացման գործառնական ծրագրին համապատասխան համայնքային զարգացման ծրագրեր կազմելու, այնպես էլ ներդրումներ պահանջող առաջնային ոլորտներում ՀՄԳ նախագծեր մշակելու համար: ՀՀ մարզային և տեղական կարողություններում ՀՄԳ նախագծեր մշակելու համար:

թյունների զարգացվածության աստիճանը ծայրահեղ տարբեր է համայնքից համայնք: Որպես կանոն, դրանք համեմատաբար բարձր են խոշոր համայնքներում, որը սակայն քիչ է հանդիպում փոքր համայնքներում: Համայնքներում բարձրագույն կրթություն ունեցող աշխատակիցների միջին թիվը կազմում է շուրջ 50%<sup>123</sup>: Բացի այդ փոքր համայնքների վարչական բյուջեների գերակշռող մասը օգտագործվում է աշխատակազմի աշխատավարձի վճարման վրա, որի արդյունքում համայնքների դրված պարտադիր լիազորությունների լիարժեք իրականացման ռիսկեր են առաջանում, իսկ ՀՄԳ նախագծերի մշակումը լրացնուի ծախսեր է պահանջում: Համայնքային ՀՄԳ ինստիտուտի կառուցակարգերի զարգացման նպատակով անհրաժեշտ է համայնքներում ստեղծել և զարգացնել հանրային-մասնավոր գործընկերության ոլորտում «նախագծային» թիմեր և իրականացնել մասնագիտական վերապատրաստման ծրագրեր: Այդ ծրագրերը պետք է ուղղված լինեն մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հանրային-մասնավոր գործընկերության համաձայնագրերի նախապատրաստման և իրականացման մասնագետների մակարդակի բարձրացմանը:

- **ՀՄԳ նախագծերի արդյունավետ իրականացման համար բյուջեվային և ֆինանսական մեխանիզմների անկարարությունը:** Տեղական մակարդակում ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը՝ հատկապես ներդրումների համար լուց խոչընդուռ է համայնքներում առակ խնդիրները լուծելու համար: Այդ իսկ պատճառով համայնքային ՀՄԳ նախագծերում պետք է նախատեսել ֆինանսական միջոցների ներգրավման հնարավոր բոլոր գործիքները: Դրանք են. վարկ (վարկային գիծ), երաշխիք, լիգինգ, արտահանման-ներմուծման ֆինանսավորում, պարտատոմսեր, կապիտալի ֆինանսավորում (ներառյալ մասնավոր, առաջնային և երկրորդային տեղաբաշխում), սուբսիդավորում, դուտացիա:

Գործնականում նշված ֆինանսական ռեսուրսների ներգրավումն անհնար կլինի առանց մասնավոր գործընկեր - արտաքին միջավայր արդյունավետ փոխգործակցության: Այս դեպքում հավանական վարկատուները (վարկային

<sup>123</sup> <http://www.armstat.am>

կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և այլ ինստիտուցիոնալ ներդրողներ) հիմնականում գործում են որպես արտաքին միջավայրի տարրեր: Համայնքային ՀՄԳ նախագծի շրջանակներում նման փոխգործակցությունը պետք է անցնի մի քանի փուլ.


Նախագծման և շինարարության փուլերում ՀՄԳ նախագծային աշխատանքային խումբը իր տնտեսական ներուժն է ծևավորում, որպես կանոն, չունի վարկային պատմություն, ուստի դժվար է ներգրավել պոտենցիալ ֆինանսական ռեսուրսներ, դրանք ունեն ավելի բարձր արժեք, և պահանջվում է պետության կամ մասնավոր կողմի երաշխավորությունը:

Շինարարության ավարտի և շահագործման փուլերում ՀՄԳ նախագծային աշխատանքային խումբն արդեն ունի որոշակի տնտեսական ներուժ, ինչը մեծապես նպաստում է պոտենցիալ ֆինանսական ռեսուրսների ստացմանը և նվազեցնում դրանց արժեքը:


- *Մասնավոր գործարարության կողմից մրցակցության ցածր մակարդակը առկա իրավական, հարկային սահմանափակումների և այլ խոչընդուների հետ կապված:*

Մեթոդաբանական տեսանկյունից ՀՄԳ կառուցակարգերի զարգացվածության մակարդակի գնահատումը << համայնքներում, ինչպես նաև պետական կառավարման որակը պետք է հիմնված լինեն.

- համայնքներում ներդրումային գրավչությունը բարձրացնող, ներդրումների ներգրավման գործող մեխանիզմները կարգավորող քաղաքականության վրա:
- համայնքների ՀՄԳ ինստիտուցիոնալ միջավայրի ժամանակակից պահանջներին և չափանիշներին համապատասխանության վրա,
- ՀՄԳ մեխանիզմների և տարբեր ծերի կիրառմամբ ներդրումային նախագծերի իրականացման տեղական ինքնակառավարման մարմինների առկա փորձի հիման վրա:



## ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Գծապատկեր 10. ՀՀ համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության զարգացման խոչընդոտների վերացման տեսլական<sup>124</sup>

ՀՀ համայնքների մակարդակում հանրային-մասնավոր գործընկերության կառուցակարգերի կատարելագործումը որպես պետության ու գործարարության արդյունավետ փոխգործակցության ձև, մեր կարծիքով, պետք է զարգանա հետևյալ ռազմավարական ուղղություններով.

1. Տարածաշրջանային և տեղական մակարդակներում հանրային ենթակառուցվածքների զարգացման կանխատեսման և պլանավորման արդյունավետության բարձրացում: Այդ նպատակով ապահովել հետևյալ հիմնական սկզբունքների իրականացումը:

- Պետական և տարածաշրջանային մակարդակներում գործող ռազմավարական պլանավորման համակարգի կատարելագործում, նպատակային փաստաթղթերում և ծրագրավորման բաժիններում ենթակառուցվածքների վերաբերյալ լրացնության պահանջների սահմանում:
- Ռազմավարական պլանավորման փաստաթղթերում հաշվի առնել ՀՄԳ ձևերը և գործիքները: Պետական, տարածաշրջանային և տեղական մակարդակներում գործող գործիքների համապատասխան պահանջների սահմանում:

<sup>124</sup> Կազմել է հեղինակը:

րում պլանավորման փաստաթղթերում ՀՄԳ ներառումը որպես տնտեսական ինստիտուտ:

2. ՀՄԳ կառուցակարգերի կատարելագործման հաջորդ ռազմավարական ուղղությունը գործընկերության նորմատիվահրավական և մեթոդաբանական հիմքերի զարգացումն է: Այստեղ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական սկզբունքները.

- «Հանրային-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի ընդունում, ինչը հնարավորություն կտա հստակեցնելու հանրային-մասնավոր գործընկերության կողմերի հարաբերությունները և նախագծերի իրականացման կառուցակարգերը:
- ՀՄԳ նախագծերի գնահատման միասնական մեթոդաբանության և մրցակցային ընտրության մշակում:

3. Պետք է նաև առանձնացնել և մշակել իշխանության և գործարարության միջև փոխգործակցության կատարելագործման ռազմավարական ուղղություններ պետական, տարածաշրջանային և համայնքային մակարդակներում հանրային-մասնավոր գործընկերության կառավարման համակարգի զարգացման համար:

Այստեղ զարգացման սկզբունքային ուղղություններ կարող են լինել.

- կառավարման կազմակերպական կառուցվածքի ձևավորում: Բոլոր մակարդակներում լիազոր մարմինների ստեղծում, ՀՄԳ զարգացման և կառավարման այլ հաստատությունների ձևավորում:
- ՀՀ մարզերում և համայնքներում ՀՄԳ կառավարման անձնակազմի լայնածավալ վերապատրաստման ծրագրերի և մեթոդական աջակցության իրականացում:
- ՀՄԳ ոլորտում իրականացված նախագծերի հաշվետվությունների պահպանման և նոր նախագծերի մրցույթների մասին տեղեկատվության իրապարակման համար կայքի ստեղծում և գործարկում:
- ՀՄԳ նախագծի իրականացման ընթացքում ծառայությունների որակի հսկողության արդյունավետ համակարգի ներդրում: Միջգերատեսչական փոխգործակցության կարգի համապատասխան մեթոդաբանության մշակում:


4. Ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր գործընկերոց համար ՀՄԳ նախագծերի քանակի և ֆինանսական արդյունավետության խթանման ամենակարևոր բա-

ղադրիչներից մեկը նախագծերի ֆինանսավորման մեխանիզմների ընդլայնում ու զարգացումն է:

- Պետական և մարզային բյուջեներից ՀՄԳ համայնքային նախագծերի սուբսիդավորման մեխանիզմների կատարելագործումը: Մշակել մարզերում և համայնքներում ՀՄԳ կառուցակարգերի կիրառումը խթանող մեխանիզմներ ենթակառուցվածքային օբյեկտների ստեղծման համար:
- ՀՄԳ նախագծերի ֆինանսավորման արտաբյուջետային միջոցների դերի ամրապնդում:
- ՀՄԳ նախագծերում ներդրումների պետական երաշխիքների տրամադրման կառուցակարգերի մշակում և առկա կառուցակարգերի կատարելագործում:
- Ռիսկերի կառավարման նպատակով՝ ապահովագրական ընկերությունների ներգրավումը հանրային-մասնավոր գործընկերության կառուցակարգում: Ապահովագրական ընկերությունները կարող են պլանավորել և մշակել ռիսկերի նվազեցման ռազմավարություններ և դիտարկվող ՀՄԳ նախագծի համար վերջնական ռիսկի գնահատում: Ապահովագրական ընկերությունների ներգրավման առավելությունը հնարավոր կորուստների փոխհատուցման պատասխանատվության որոշակի մասնաբաժնի փոխհատուցումն է:

5. Պակաս կարևոր չէ մրցակցության զարգացումը և հանրային-մասնավոր գործընկերության ոլորտում մասնավոր օպերատորների շուկայի խթանումը: Նշված ոլորտների զարգացման համար առաջարկում ենք.

- ՀՄԳ սկզբունքների վրա հիմնված երկարաժամկետ ենթակառուցվածքային նախագծերի բացասաբար ազդող հարկային և այլ օրենսդրությունների փոփոխությունների չկիրառում:
- Պետական, տարածաշրջանային և տեղական մակարդակներում ՀՄԳ ոլորտում հարկային համակարգի խթանման ձևավորում:
- Պետական ընկերությունների և ձեռնարկությունների խրախուսումը մասնավոր ընկերություններ ներգրավելու ՀՄԳ սկզբունքներով ծառայությունների մատուցման համար:



- Սակագների կարգավորման համակարգի և մեկ շնչի հաշվով ֆինանսավորման համակարգի կատարելագործումը հանրային ենթակառուցվածքների առանցքային հատվածներում մասնավոր գործընկերների համար այդ ոլորտների տնտեսական գրավչությունը բարձրացնելու համար:
- Հանրային ենթակառուցվածքների առաջնային ոլորտներում ՀՄԳ մեխանիզմների կիրառման ոլորտային սահմանափակումների վերացում:

Տարածաշրջանի տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման կայունության բարձրացման նպատակով հանրային-մասնավոր գործընկերության կառուցակարգերի զարգացման մոդելը ներկայացված է գծապատկեր 11-ում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ մասնավոր հատվածի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև գործընկերությունն անհրաժեշտ է, առաջին հերթին, տարածաշրջանում պլանավորված ներդրումային նախագծեր իրականացնելու նպատակով ռեսուրսների և միջոցների միավորման համար: Հանրային-մասնավոր գործընկերությունը դրականորեն կազմի << ողջ տնտեսության վրա, քանի որ մասնավոր ռեսուրսների օգտագործումը զուգորդված պետական կառավարման ներուժի հետ կապահովի ոչ միայն պարզ և ընդլայնված վերարտադրություն ՀՄԳ օբյեկտներում, այլև կնպաստի պետության ներդրումային գրավչության խնդիրների հաղթահարմանը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ասենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ամփոփվել և ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները և առաջարկությունները, որոնք արտացոլում են հետազոտության առանցքային դրույթները:

1. «Հանրային-մասնավոր գործընկերություն» եզրույթն անգլերեն «public-private partnership» արտահայտության թարգմանությունն է, սակայն ՀՀ աղբյուրներում public՝ թարգմանվում է որպես պետություն, այսինքն՝ «պետական-մասնավոր գործընկերություն», որն ամբողջությամբ չի արտահայտում այդ հասկացության էությունը: «Public» ենթադրվում է տեղական ինստիտուտների ամբողջություն, որն ունի կառավարման լիազորություններ, ինչպես նաև հաճախ իրականացնում է ոչ ֆորմալ, բայց հասարակական գործընթացների զարգացմանն ուղղված կարևոր գործառույթներ: Ներառում է նաև մշակութային, կրթական, գիտական և հանրային հատվածի այլ հաստատություններ:
2. Գիտական գրականության և պաշտոնական փաստաթղթերում հանրային-մասնավոր գործընկերության ձևակերպումների մոտեցումների բազմազանությունը, որպես հետևանք, սույն հայեցակարգի բովանդակության զգալի անորոշությունը, հիմնականում արդյունք են միջազգային փաստաթղթերում այս հայեցակարգի միասնական մոտեցման բացակայության: Դրանք հիմնականում արտահայտում են «հանրային-մասնավոր գործընկերություն» հասկացության ընդհանուր ըմբռնումը և առավել արտահայտիչ հատկանիշները, որոնց առկայության դեպքում մասնավոր հատվածի և հանրային մարմինների փոխազդեցության տարբեր ձևեր կարենի է որակվել որպես ՀՄԳ:  
Ընդհանուր առմամբ ՀՄԳ-ն բնութագրվում է.
  - ա) որոշակի նախագծի իրականացման նպատակով հանրային մարմինների և տնտեսավարող սուբյեկտի միջև երկարաժամկետ պայմանագրի առկայությունը,
  - բ) պետական կամ համայնքային իշխանությունների առջև դրված գործառույթների և խնդիրների մի մասի փոխանցումը մասնավոր հատվածին,

- գ) մասնավոր կապիտալի ներգրավումը նախագծի ֆինանսավորմանը,
- դ) նախագծի ռիսկերի կիսումը պետական և մասնավոր գործընկերների միջև:
3. Հետազոտությունը ցուց տվեց, որ հանրային-մասնավոր արդյունավետ գործընկերությունը հնարավոր է, եթե առկա են հետևյալ պայմանները. նախ՝ ինչպես և ցանկացած ընկերակցության դեպքում, այս պարագայում ևս գործընկերների շահերը պետք է համընկնեն: Սա առանցքային պայման է ՀՄԳ արդյունավետության համար ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր գործընկերոց տեսանկյունից: Երկրորդ՝ համաշխարհային փորձը ցուց է տվել, որ ՀՄԳ կառուցակարգերի արդյունավետության համար կարևոր է դրանց մոդելների ոլորտային մասնագիտացումը: Երրորդ՝ ՀՄԳ ներդրումների համար ընտրված ոլորտի առաջնահերթությունը պայմանավորված է երկրի, տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով: Չորրորդ՝ հաշվի առնելով մարզերում ենթակառուցվածքների ցանցի բարդ վիճակը, արտաբրյուջետային միջոցների, կապիտալ վերանորոգման տարածաշրջանային ֆոնդերի հատկացումները, շուկայում ՀՄԳ նախագծերի զարգացման անհրաժեշտությունը հրատապ է:

Սակայն պետք է նաև փաստել ՀՄԳ նախագծերում հանրային կողմը և մասնավոր ընկերությունը երբեք համահավասար չեն լինի, քանի որ այդ նախագծերում հիմնարար գույքային հարաբերությունները չեն փոխվում, որքան էլ մեծ լինի մասնավոր հատվածի՝ որպես ներդրողի, մենեջերի կամ օպերատորի դերը:

4. « տարածաշրջանային տնտեսության ներդրումային գրավչության բարձրացման համար ներկայացված համայնքների մակարդակում հանրային-մասնավոր գործընկերության զարգացման մոդելը իրենից ներկայացնում է տնտեսակազմակերպական մեթոդների և գործիքների կիրառմամբ զարգացման ռազմավարական ուղղությունների հանրագումար, ուղղված հանրային ենթակառուցվածքների զարգացման կանխատեսման և պլանավորման արդյունավետության բարձրացմանը, ՀՄԳ նախագծերի ֆինանսավորման աղբյուրների ընդլայնմանը, մասնավոր օպերատորների շուկայի խթանմանը և հանրային-մասնավոր գործընկերության ոլորտում մրցակցության զարգացմանը:

5. << հանրային-մասնավոր գործընկերության ազգային գործակալության ձևավորման անհրաժեշտությունը ներկա պայմաններում հրատապ է, քանի որ այսօր <<-ում <ՄԳ մոդելով նախագծեր իրականացնում են ինչպես << կառավարությունը, այնպես էլ << նախարարությունները, << մարզերը և համայնքները: Այդ նախագծերի վերաբերյալ տեղեկատվությունը շատ անգամ անհասանելի է: Այնինչ <ՄԳ նախագծերի կառուցակարգերի կիրառման և հետագա զարգացման համար արդեն իրականացված նախագծերի առյունքների վերլուծությունը էական ազդեցություն կարող է ունենալ ինչպես հանրային մարմինների, այնպես էլ մասնավոր գործընկերների համար: Այդ կենտրոնի հիմնական նպատակը պետական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված մասնավոր ներդրումների արդյունավետ կառավարման լուծումների և ժամանակակից տեխնոլոգիաների խթանումն է:
6. Ներդրումային նախագծերի բյուջետային, հանրային, ֆինանսական արդյունավետության գնահատումը դրանց վերլուծության կարևոր բաղադրիչներից է, որի հիման վրա որոշվում են նախագծերի իրականացման հնարավորությունն ու նպատակահարմարությունը: Սակայն, ինչպես ցոյց է տալիս ներկայիս իրավիճակը <<-ում, նմանատիպ նախագծերը ներկայացվում են ոչ լիարժեք, սահմանափակ ցուցանիշներով, ինչի արդյունքում լրացուցիչ հաշվարկների և ճշգրտումների անհրաժեշտություն է առաջանում: Իսկ դա արդեն լրացուցիչ խոչընդոտ է ներդրողների համար: Ուստի մեր կողմից ուսունասիրվել է տվյալ բնագավառի համաշխարհային փորձը և առաջարկվել հանրային-մասնավոր գործընկերության նախագծերի գնահատման մեթոդաբանություն <<-ում իրականացվող <ՄԳ նախագծերի համար: Նախագծերի գնահատման կարևոր բաղադրիչներից է հանրային (սոցիալական) արդյունավետությունը, որի գնահատումը պետք է տա քաղաքացիական հասարակությունը: Այն հավասարապես կարևոր է, իսկ որոշ դեպքերում դառնում է վճռորոշ նախագծի հաջողության համար: Առավելապես դա առաջնային է համայնքների համար, քանի որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը միշտ հանրության ուշադրության կենտրոնում է:

7. Հանրային-մասնավոր գործընկերության ձևով պետության և գործարար կառուցների փոխգործակցության մեխանիզմների արդյունավետության բարձրացման գործիքներն են.

- հատուկ տնտեսական գոտիների ստեղծումը և դրանց հետագա զարգացումը,
- օրենքով նախատեսված ՀՄԳ պայմանագրերի օգտագործման հստակ մեխանիզմների և սկզբունքների մշակումը,
- պետական զարգացման հիմնադրամների առավել ներգրավումը,
- Ենթակառուցվածքի օբյեկտների ստեղծումը և զարգացումը (տեխնոպարկեր և արդյունաբերական պարկեր, արտադրական քլաստերներ):

8. Համայնքներում հանրային-մասնավոր գործընկերության զարգացման նպատակով մասնավոր գործընկերները պետք է ունենան պետական աջակցություն: Դրանք են.

- հարկային արտոնությունների տրամադրումը << հարկային օրենսգրքի և համայնքների նորմատիվահրավական ակտերի համապատասխանեցման միջոցով,
- համայնքի գույքի վարձակալման արտոնությունների տրամադրում.
- վարկի օգտագործման տոկոսադրույքի մի մասի սուբսիդավորում համայնքի բյուջեի հաշվին,
- կանոնադրական կապիտալում ներդրումների ապահովումը.
- տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:

Ընդհանուր առմամբ, այսօր հանրային-մասնավոր գործընկերության զարգացումը համայնքներում ծառայությունների կառավարման առավել գրավիչ ձև է: Հաշվի առնելով հանրային-մասնավոր գործընկերության կառուցակարգերով նախագծերի հանդեպ աճող հետաքրքրությունն ինչպես Հայաստանում, այնպես էլ ողջ աշխարհում, հարկ է նշել այս թեմայի արդիականությունը հետագա հետազոտությունների համար: Սա հատկապես վերաբերում է << համայնքներում ՀՄԳ նախագծերի իրականացմանը, քանի որ մինչ օրս լուծված չէ համայնքային հատվածի հիմնական խնդիրը՝ արտաքրության ֆինանսավորման ներգրավումը համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների ոլորտներ:

## **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

### **Օրենքներ և նորմատիվ ակտեր**

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, 2015:
2. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, <https://www.e-draft.am/projects/193>
3. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 1997:
4. «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների» մասին, «ՀԿառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313-Ն որոշում»:
5. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման նախագիծ, Եր, 2017, <https://www.e-draft.am/projects/193/justification>
6. «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման» կարգ, «ՀԿառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N1241-Ն որոշում»:
7. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-237-Ն որոշում»:
8. «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա, հոդված 3, Ստրաբուրգ, 1985. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20822>
9. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, 1998:
10. «Դիլիջանի միջազգային դպրոց» ծրագիր, «ՀԿառավարության 2013 թ. հոկտեմբերի 23-ի N1177-Ն որոշման, հավելված N 1.  
<http://www.am.uwc.org/news/?pid=544&nid=8&storyid=30>
11. «ՀԿառավարության որոշում N 1059-Ն, 13.10.2016 թ., «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2016 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» (2016 թ. հուլիսի 1-ի դրությամբ):

12. О государственно-частном партнерстве: Закон Респ. Казахстан от 31.10.2015, № 379-V ЗРК, в ред. от 08.04.2016 г., №489-V ЗРК. БД Законодательство стран СНГ, ООО СоюзПравоИнформ. Режим доступа:  
[http://base.spinform.ru/show\\_doc.fwx?rgn=80451](http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=80451).
13. О государственно-частном партнерстве: Закон Респ. Беларусь, 30.12.2015 №345-З, Консультант Плюс. Беларусь, ООО «ЮрСпектр», Минск, 2016.
14. О государственно-частном партнерстве в Кыргызской Республике: Закон Кыргызской Республики № 7 от 22.02.2012, в ред. от 22.06.2016 г., №88. БД Законодательство стран СНГ, ООО СоюзПравоИнформ. Режим доступа:  
[http://base.spinform.ru/show\\_doc.fwx?rgn=50238](http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=50238).
15. О государственно-частном партнерстве, муниципально-частном партнерстве в Российской Федерации и внесении изменений в отдельные законодательные акты Российской Федерации: Федеральный закон России от 13.07.2015, № 224-ФЗ. КонсультантПлюс. Россия, ЗАО «Консультант Плюс», М., 2017.
16. О модельном законе «О публично-частном партнерстве»: постановление Межпарламентской Ассамблеи государств – участников СНГ, № 41-9, 28.11.2014.
17. Об основных ориентирах макроэкономической политики государств–членов Таможенного союза и Единого экономического пространства на 2014–2015 годы: решение Высшего Евразийского экономического совета, №70, 29.05.2014.

#### **Վիճակագրական դեղեկագրեր, ժողովածուներ, գեկույցներ**

18. Բարեփոխումների Երկար ճանապարհին, << տեղական ինքնակառավարման համակարգը քաղաքացիների աշքերով, գեկույց, Եր., 2016, 80 էջ:
19. Համայնքների կողմից տրամադրվող ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրակման մեթոդական ցուցումներ, Եր., 2017,  
[www.mtad.am/files/docs/1602.pdf](http://www.mtad.am/files/docs/1602.pdf)
20. Համայնքների կողմից տրամադրվող ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրակման մեթոդական առաջարկություններ, 2008, 63 էջ:
21. Հայաստանի Հանրապետության 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն, Եր., 2016, 84 էջ:

22. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին հաշվետվության սեղմագիր, Եր., 2017:
23. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, վիճակագրական ժողովածու, Ազգային վիճակագրական ծառայություն, 2012-2016 թթ., Եր., 2017, 356 էջ:
24. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն, Եր., 2012:
25. Ձեռնարկ համայնքի ավագանու անդամների և անդամության թեկնածուների համար, Եր., 2016, 101 էջ:
26. Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին», Երևանի քաղաքապետարանի 2016 թ. տարեկան հաշվետվություն, Եր., 2016:
27. Վարչատարածքային բաժանում, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 13, Եր., 1987:
28. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում, տարեկան մոնիթորինգի գեկուցների մշակման, քննարկման և հրապարակման մեթոդաբանություն, Եր., 2014, 14 էջ:
29. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում, գիրք 9, տեխն.գ.թ. Վահրամ Շահբազյանի խմբագրությամբ, Վան Արյան, Եր., 2017, 240 էջ:
30. Տնտեսության զարգացումը համայնքներում, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀՀ), Եր., 2017, 86 էջ:
31. Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող 2015-2018 թթ. գործողությունների ծրագիր
32. Государственно-частное партнерство – новая форма взаимодействия государственного и частного секторов в финансировании инфраструктурных и социальных проектов. Материалы семинара. М., Посольство Великобритании, 2003.
33. Практическое руководство для инвесторов “Государственно-частное партнерство в странах Евразийского экономического союза”, М., Центр развития ГЧП, 2017.

34. Практическое руководство по вопросам эффективного управления в сфере государственно-частного партнерства. Европейская экономическая комиссия; Организация Объединенных Наций. Нью-Йорк-Женева: ООН, 2008, 114 с. [http://safbd.ru/sites/default/files/rukovodstvo\\_eeek\\_oon\\_po\\_gchp.pdf](http://safbd.ru/sites/default/files/rukovodstvo_eeek_oon_po_gchp.pdf).
35. A World Bank Group Flagship Report: Doing Business 2016. Measuring Regulatory Quality and Efficiency Doing Business 2016.
36. Black's Law Dictionary, <http://thelawdictionary.org/conflict-of-interest/>
37. Green Paper on Public-Private Partnerships and Community Law on Public Contracts and Concessions Commission of the European Communities, Brussels, 2004, 22 p.
38. PPPs financed by the European Investment Bank from 1990 to 2015, 2016, 24 p.
39. Public Private Partnerships: Financing a Commonwealth / ed. by B. Weiss. Washington, 1985, 127 p.
40. Public-Private Partnership for Innovation Policy Rationale, Trends and Issues Organization for Economic Cooperation and Development, 2003, 42 p.
41. Report to Congress on Public-Private Partnerships. US Department of Transportation, 2004, 182 p.
42. World Economic Forum “The Global Competitiveness Report 2014-2015”, Genova 2014.
43. Towards a Comprehensive Understanding of Public Private Partnerships for Infrastructure Development // California management review. 2009, vol. 5, no. 2.
44. Public Private Partnerships: The Government’s Approach. URL: [https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/20512/pf2\\_infrastructure\\_new\\_approach\\_to\\_public\\_private\\_partnerships\\_051212.pdf](https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/20512/pf2_infrastructure_new_approach_to_public_private_partnerships_051212.pdf) (дата обращения: 09.06.2014).
45. Public-Private Partnership Governance: Policy, Process and Structure. URL: <http://www.oecd.org/gov/regulatory-policy/Chap%206%20PPPs.pdf> (дата обращения: 09.06.2014).
46. Public-Private Partnership Units. Lessons for Their Design and Use In Infrastructure. URL: <http://www-wds.worldbank.org/external/default/>

### **Մասնագիրական գրականություն**

47. Մենեջմենթ, <<ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր Յուլ. Մ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ, Երրորդ լրացված, բարեփոխված հրատարակություն, Եր., Տնտեսագետ, 2016, 672 էջ:
48. **Հայրապետյան Ռ.Ա.**, Հանրային և մասնավոր գործընկերությունը քաղաքների մասնակցային կառավարման համակարգում, Ֆինանսներ և Էկոնոմիկա, 4(166), Եր., 2014, էջ 2-4:
49. **Հայրապետյան Ռ., Ավետյան Ա.**, Համայնքների տնտեսական զարգացման նոր կառուցակարգերի գործարկման անհրաժեշտությունը <<-ում, Բանբեր ՀՊՏՀ-ի, 4(48), Եր., 2017, էջ 50-60:
50. **Հայրապետյան Ռ., Ասատրյանց Ս., Մնացականյան Տ.**, Բազմաբնակավայր համայնքների ձևավորման սկզբունքները, 11-12 (207-208), Եր., 2017, էջ 8-15:
51. **Շահբազյան Կ.**, Ներդրումային միջավայրի բարելավման ուղիները, Ատեն., Եր., 2013:
52. **Սուվարյան Յուլ. Մ.** և ուրիշներ, Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների գերակայությունները արդի փուլում, «Ամբերդ» մատենաշար, Եր., Տնտեսագետ, 2015, 138 էջ:
53. **Սուվարյան Յուլ. Մ.** և ուրիշներ, Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Ամբերդ» մատենաշար, Եր., Տնտեսագետ, 2014, 164 էջ:
54. **Սուվարյան Յուլ. Մ., Սարգսյան Վ.Ա., Հայրապետյան Ռ.Ա., Ասատրյանց Ս.Ա.**, Գիտակրթական համակարգի և տարածքային տնտեսական զարգացման փոխառնչությունները, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 2016, 180 էջ:
55. **Սուվարյան Յուլ., Զոբանյան Մ.**, Տնտեսության տարածքային կառավարման մեթոդաբանությունը և հիմնախնդիրները, Եր., ԱՐՏ, 2007, 312 էջ:
56. **Այրապետյան Մ. Ը.**, Зарубежный опыт использования государственно-частного партнерства. Государственная власть и местное самоуправление. №2, 2009.

57. **Акитоби Б., Хемминг Р., Шварц Г.**, Государственные инвестиции и государственно-частные партнерства. Вопросы экономики, 2007, №40.
58. **Ансофф И.**, Стратегическое управление. М., Экономика. 1989, 358 с.
59. **Ансофф И. Х.**, Стратегическое управление, М., Экономика, 2009. 519 с.
60. **Антипова О. М.**, Правовое регулирование инвестиционной деятельности (анализ теоретических и практических проблем). М., Волтерс клувер, 2007, 248 с.
61. **Балашов С.**, Опыт функционирования ГЧП в развитых странах, Государственно-частное партнерство в условиях кризиса. Вестник института экономики Российской академии наук, N 4, М., 2009.
62. **Баженов А. В.**, Государственно-частное партнерство в России: состояние и перспективы развития. ЭТАП: экономическая теория, анализ, практика, 2010, №4, с. 26–38.
63. **Белокрылова О. С.**, Взаимодействие бизнеса и власти в процессе формирования стратегии экономического развития регионов. Проблемы формирования государственных политик в России. М., Научный эксперт, 2006, 168 с.
64. **Варнавский В. Г.**, Государственно-частное партнерство: некоторые вопросы теории и практики, Мировая экономика и международные отношения, № 9, 2011.
65. **Варнавский В. Г., Клименко А. В., Королев В. А. и др.**, Государственно-частное партнерство: теория и практика, Высшая школа экономики. М., 2010, 286 с.
66. **Варнавский В. Г.**, Структурно-институциональные сдвиги в отраслях производственной инфраструктуры. М., Наука, 2006, 241 с.
67. **Виленский А. А., Лившиц В. Н., Смоляк С. А.**, Оценка эффективности инвестиционных проектов. М., Дело, 2004, 378 с.
68. **Делмон Д.**, Государственно-частное партнерство в инфраструктуре, практическое руководство для органов государственной власти, Казахстан, 2010, 154 с.
69. **Елькин В. А., Хорохонов Д. Ю.**, Совершенствование региональной системы анализа социально-экономического развития муниципальных образований, “Известия”, ИГЭА, №1(75), 2011.
70. **Жихаревич Б.С.**, Региональная экономика и пространственное развитие, М., 2015, 460 с.

71. **Кабашкин В. А., Левченко А.А., Сидоров В.А.**, Развитие государственно-частного партнерства в регионах РФ, Белгород: ИПЦ «Политера», 2008, 466 с.
72. **Кобилев А. Г.**, Муниципальное управление и социальное планирование в коммунальном хозяйстве , Ростов-на-Дону:Феникс, 2007, 473 с.
73. **Кузнецов И. В.**, Зарубежный опыт государственно-частного партнерства (США, Европа, Канада). Мировая экономика и международные экономические отношения. Экономические науки, №8 (93), 2012.
74. **Кузьмин Е. А.**, Реализация проектов государственно-частного партнерства в муниципальных образованиях//Интернет-журнал “Региональная экономика и управление”, №4, 2010. Режим доступа к журналу: <http://region.mcnip.ru>
75. **Любинин Д. С.**, Партнерство государства и бизнеса: о необходимости, сущности и формах. Российский экономический журнал, 2007, № 9.
76. **Мазур И. И., Шапиро В. Д., Ольдерогге Н. Г.**, Управление проектами: Учебное пособие, 2-е изд., М., Омега-Л, 2004, 664 с.
77. **Менар К., Крючкова П. В., Кудряшова Е. Н., Пороховская О. А., Сорк Д. М., Шаститко А. Е.**, Контракты и издержки в ресурсоснабжающих подотраслях жилищно-коммунального хозяйства, М., ТЕИС, 2000, 174 с.
78. **Мерзлов И. Ю.**, Основы государственно-частного партнёрства. Пермь: ПГУ, 2013, 196 с.
79. **Мерзлов И. Ю.**, Повышение финансовой конкурентоспособности бизнеса организаций на основе банковских инвестиционных технологий. Пермь: ПГУ, 2010, 110 с.
80. **Мерзлов И. Ю.**, Роль государства в развитии государственно-частного партнёрства. Экономические и гуманитарные науки. №7 (258), 2013, с. 15-24.
81. **Михеев В. А.**, Государственно-частное партнерство: политика и механизм реализации. Проблемы формирования государственных политик в России Материалы всероссийской научной конференции. М., Научный эксперт, 2006, 564 с.
82. **Нижегородцев М. и др.**, Государственно-частное партнерство в инновационной сфере: мировой опыт и перспективы России, под ред. Р. М. Нижегород-

- цева, С. М. Никитенко, Е. В. Гоосен. Кемерово: ООО «Сибирская издательская группа», 2012, 482 с.
83. **Носков С. Ю.**, Государственно-частное партнерство в системе муниципального хозяйства Европы. Федерализм: региональное и местное самоуправление. № 2, 2010, с. 99–101.
84. **Портер М.**, Международная конкуренция. М., Международные отношения, 2003, 256 с.
85. **Сазонов В. Е.**, Государственно-частное партнерство. Гражданско-правовые, административно-правовые и финансово-правовые аспекты, М., 2012, 492 с.
